ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(**79**-րդ տարի) **Թիվ-9** (1703) Սեպտեմբեր 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1 - Առաջնորդող

Ընտրությունը բոլորինս ու յուրաքանչյուրինս է (էջ 1-2)

2 - Քաղաքական

Անի Մելքոնյան
Արցախ վերադարձի օրակարգը՝ բարի ցանկությո՞ւն, թե՞ միջազգային իրավունքի նորմ (էջ 3-5)

Արտաշես Շահբազյան
Քարոզչական ձեռնածությունը իշխանության ինքնապահպանման երաշխիք (մաս 1) (էջ 6-8)

3 - Թարգմանություն

Տիգրան Բաղրամյան
Կազինոն՝ աշխարհաքաղաքականության ծառայության մեջ. ինչպե՞ս է Բրիտանիան ֆինանսավորում Փաշինյանի ռեժիմը (էջ 9-10)

4 - Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
Իսրայել-Թուրքիա հարաբերություններում լարվածության սրումն ու Հայոց ցեղասպանության հարցը (էջ 11-13)

5 - Իրավաքաղաքական

Լիանա Պետրոսյան
Արցախցիների վերադարձի հարցը և Ադրբեջանի դիրքորոշումը (էջ 14-17)

5 - Իրավաքաղաքական

Արմինե Տիգրանյան
Արցախի հայկական պատմական ժառանգության ոչնչացումը միջազգային իրավունքի լույսի ներքո (էջ 18-29)

6 - Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Անկախության հոգեբանական ֆենոմենը (էջ 30-32)

7 - Բնապահպանություն

Արմեն Վարդանյան
Պոչամբարները Հայաստանում՝ դանդաղ գործողության քիմիական ռումբեր (էջ 33-36)

8 - Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Հայոց պետականության իդեալը Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» դյուցազնավեպում (էջ 37-40)

Արմեն Կարապետյան
Պատմության դասերին իրապես ունկնդիր լինելու հրամայականով... (հրատապ կարևորության ժողովածու) (էջ 41-43)

9 - Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Ինքնութեան յենասիւնը՝ մշակոյթը... (էջ 44)

Ընտրությունը բոլորինս ու յուրաքանչյուրինս է

Սեպտեմբեր ամսին Հայաստանի ու Արցախի անկախությունների հռչակումից հետո, մայիսի պես, այս ամիսն էլ հայության համար դարձավ հաղթանակների ամիս: Անհնար էր պատկերցնելը, որ մոտ երեք տասնամյակ տևած այս իրողությունից հետո սեպտեմբերը կվերածվի մեր պարտության ու ողբերգության ժամանակահատվածի: Եվ այդ անհնարինը հնարավոր դարձավ հայոց պետականությունների անառիկ բերդը թշնամու հինգերորդ շարասյան կողմից ներսից հանձնելու միջոցով: Չկա այսօր Արցախի պետականությունը, հայության բնօրրանն ամբողջովին հայաթափված է, իսկ Հայաստանը ապրում է իր ինքնիշխանության ու տարածքային կորուստների ժամանակաշրջանը:

Սույն թվականի սեպտեմբերի 2-ին, Արցախի անկախացման պատմական օրը, գումարվեց ՀՅ Դաշնակցության կազմակերպած «Վերադարձ Արցախ լինելո՛ւ է» խորագրով միջազգային խորհրդաժողովը: Նույն օրվա երեկոյան «Ազատության հրապարակում» տեղի ունեցավ դարձյալ Դաշնակցության կազմակերպած հանրահավաքը՝ նվիրված Արցախի անկախության օրվան: ՀՀ այսօրվա իշխանավորները ոչ միայն պատմական այս իրադարձությանը պատշաճորեն չարձագանքեցին, այլև չհիշեցին 2023 թ. սեպտեմբերի 19-20-ին Արցախի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիայի և հայաթափման ողբերգական իրադարձությունը: Եվ հակառակը, ՔՊ-ականները հրճվանքով գրում էին, օրինակ, թե քիչ մարդ է մասնակցել հանրահավաքին: Եթե չճանաչեինք այսօրվա ազգային ողբերգությունների հեղինակներին, պետք է հարցնեինք ինքներս մեզ՝ «ովքե՞ր են սրանք»: Իսկապես էլ՝ ովքե՞ր են սրանք, որ այսքան անհաղորդ են իրենց ծնած ժողովրդի վշտերին, հույզերին ու ձգտումներին, թեև հանուն իշխանական աթոռների պահպանման պատրաստ են օրը տասն անգամ կռանալ ժողովրդի առաջ և սեր բացատրվել: Ովքե՞ր են սրանք, որ ոչ մի անգամ չանհանգստացան, չհուզվեցին Արցախի կորստի համար, 5.000 նահատակված հայորդիների համար, ադրբեջանցիների կողմից Հայաստանի տարածքների օկուպացիայի համար:

Ովքե՞ր են սրանք, որ որպես պետականության և ժողովրդի համար պատասխանատու համահայկական իշխանություն Արցախի ողբերգությունից հետո միջազգային ատյաններում ոչինչ չձեռնարկեցին ադրբեջանաթուրքական ցեղասպանության հարցով, բացարձակապես անտարբեր են Բաքվում դատական դաժան գործընթացի մեջ գտնվող հայ ռազմաքաղաքական ղեկավարության ճակատագրի համար և ընդհակառակը՝ կատաղորեն պայքարում են Արցախի դատը հետապնդել ցանկացող արցախցիների, հայկական զանազան կազմակերպությունների դեմ, հետապնդում են Արցախ ղեկավարությանը, իսկ 1700-ամյա ազգային եկեղեցու դեմ այնպիսի ճնշումներ ու հետապնդում են իրականացնում, որպիսիք տեղի են ունեցել միայն 1930-ականներին: Ովքե՞ր են սրանք՝ հարցը թերևս հռետորական իմաստ ունի, որովհետև եթե ՔՊ-ականների կենսագրությանը նայենք, նման հարցը կկորցնի իր իմաստը:

Ճիշտ սրանց պես ու ճիշտ 100 տարի առաջ օտարության մեջ կամ օտար հոսանքների ազդեցությամբ հայ երիտասարդության մի հատված այնքան կտրվեց իր ժողովրդից և նրա պատմական ինքնությունից, որ վերազգային մեծադղորդ գաղափարներն ու օտարի շահերը գերակա նկատեց սեփական ժողովրդի շահերից, վերածվեց սեփական ժողովրդի դահճի: Այսօրվա երիտբոլշևիկները կամ կոսմոպոլիտները նույնքան հեռու են, նույնքան անտարբեր և նույնքան թշնամի են սեփական պատմական ինքնությանը: Երբեմն պարզ հայ մարդը զարմանում է, թե ինչո՞ւ է ծավալվել այս թշնամանքը ազգային եկեղեցու դեմ, ի՞նչ իմաստ ունի Արարատ երևույթը մոռացնել տալու մտասևեռումը, ինչո՞ւ են բոլոր մակարդակի կրթական ծրագրերից կրճատվում և դուրս բերվում ազգային ինքնության անձնագիր հանդիսացող թեմաներն ու անունները, ինչու է հանկարծ Հայոց այբբենարաններից անհետանում Մեսրոպ Մաշտոցի նկարը: Երբ այս և ոչ պակաս ծանրակշիռ այլ փաստերը դիտարկում ես տրամաբանական մեկ շղթայի մեջ, այդ ժամանակ է երևակվում ճշմարտությունն իր ողջ նենգ և սպառնալից պատկերով:

Վերջերս Հայաստանի վարչապետը հայտարարեց, որ հռչակում է Հայաստանի չորրորդ հանրապետության հաստատումը, որպես առաջիկա ռազմավարական անելիք: Ի՞նչ է իրականում սա նշանակում: Սա նախ և առաջ նշանակում է, որ Հայաստանի այսօրվա իշխանությունը հրաժարվում է Երրորդ Հանրապետության ողջ ժառանգությունից՝ նրա արժեքներից, ձեռքբերումներից, նպատակներից, պետական կարգը կազմող բաղկացուցիչներից: Սա իր հերթին նշանակում է ամբողջովին ջնջել Արցախի էջը և նրա հետ կապված բոլոր խնդիրները, վերանայել սահմանադրական կարգը՝ հրաժարվելով գործող հռչակագրից, Սահմանադրությունից,

Հայաստանի ինքնիշխանությունը կազմող կովանններից, Ազգային եկեղեցու տեղից և դերից, ազգային իդեալներից ու այն բնորոշող պատմական-մշակութային արժեքներից ու այս բոլորը համապատասխանեցնել Հայաստանի իշխանություններին ուղղորդող արևմտյան ուժերի և, մասնավորապես, թուրքադրբեջանական պահանջներին: Եթե անդրադառնանք, թե ինչերից է հրաժարվել ու հրաժարվում Հայաստանի իշխանությունը և ինչը ինչ կերպ է փորձում փոփոխել, ակնհայտ կդառնա, որ մեր վերլուծությունն ու գնահատականը չափազանցված չեն: Իսկ եթե ավելի կոնկերտ բնորոշենք, թե ինչ է անում և ինչ է դեռ պատրաստվում անել Նիկոլ Փաշինյանն իր օտարահպատակ կոսմոպոլիտ ուժի հետ, ապա կտեսնենք, որ Հայաստանում տեղի է ունենում պետական կարգի տապալում, Հայաստանի ինքնիշխանության ենթարկում արտաքին ուժերի կամքին: Նիկոլ Փաշինյանն այս ամենին ձեռնամուխ է եղել վճռականորեն և հետևողական քայլերով, վստահ լինելով, որ ներքին հավանական ընդվզումները կկարողանա ամեն ձևով խեղդել՝ հենվելով իրեն ենթակա ուժային և իրավապահ համակարգերի, ինչպես և արտաքին ուղղակի և անուղղակի հովանավորության վրա: Այս ազգակործան ծրագրերը նա կկարողանա վերջնական իրականացման հասցնել հաղթահարելուց հետո գալիք խորհրդարանական ընտրությունները: Ըստ էության, իշխանությունն անթաքույց մտել է արդեն այդ ընտրապայքարի մեջ՝ երկրորդական և երրորդական նկատելով երկրի առջև ծառացած ճակատագրական հիմնահարցերը: Որքան էլ որ իշխանությունը փորձում է այդ լրջագույն մարտահրավերի հանդիման ցուցադրել իր ինքնավստահությունը, այնուամենայնիվ, սարսափի մեջ է. նախ, որովհետև իր այս ազգակործան ու պետականակործան ծրագրերն ընդունելի չեն ժողովրդի մեծամասնության համար, մյուս կողմից՝ 2021 թվականին տված երջանիկ ապագայի խոստումներից հետո, ոչ մի դրական ձեռքբերում չի կարող մատնանշել: Հետևաբար, մնում է դիմելը իր գլխավոր զենքին՝ կեղծիքին: Եվ քանի որ գլխավոր սպասելիքը խաղաղությունը ամրագրելու ձախողված հարցն է, նա փորձում է իր ձախողումը ներկայացնել, որպես հաղթանակ: Թեև Փաշինյանի թիմակիցները փորձում են հավաստիացնել, թե այս տարի հնարավոր է, որ Խաղաղության պայմանագիրը ստորագրվի, Փաշինյանը փորձում է համոզել, թե նախաստորագրված պայմանագիրն արդեն իսկ ստորագրված փաստաթղթի ուժ ունի: Եվ այս ամենը տեղի է ունենում այն պայմաններում, երբ չի դադարում ոչ ադրբեջանցիների ագրեսիվ հակահայկական հռետորաբանությունը, ոչ Հայաստանի իշխանություններին ներկայացվող կոշտ պահանջները, ոչ պատերազմի սպառնալիքը, և ոչ էլ բոլոր այս հարցերում Թուրքիայի անթաքույց հովանավորությունը Ադրբեջանին:

Հայաստանի ապագան փաստացի կախված է երկու կարևոր հանգամանքից՝ կհաջողվի՞ նիկոլականներին հերթական անգամ մոլորեցնել ժողովրդին, թե՞ ազգային ուժերին կհաջողվի քաղաքական, գաղափարական, ազգային նույն մտահոգություններով հարվածելով միևնույն թիրախին ժողովրդին սթափեցնել իշխանության որդեգրած ազգակործան ուղու մարտահրավերի առջև:

Ուղղորդվել գաղափարաքաղաքական նույն մտահոգություններով և հարվածել նույն թիրախին բնավ չի նշանակում բոլոր ազգային ուժերի մեխանիկական միավորում: Սա նշանակում է գերնպատակի շուրջ տարբեր ճակատների համակարգված պայքար մեկ ուղղությամբ, իսկ եթե որևէ մեկը փոխի իր թիրախն ու սկսի թիկունքից հարվածել իշխանության դեմ պայքարող ազգային որևէ ուժի, կնշանակի, որ տվյալ ուժն ուղղակի և անուղղակի կերպով ծառայում է Նիկոլին ու, եթե առերևույթ նրա հետ էլ չէ, վերջինիս վերարտադրությունը գերադասում է ազգային որևէ ուժի հաղթանակից: Եթե պատկերավոր բնորոշենք այսօրվա այս դաշտը, ապա կարող ենք ասել, որ ականատես ենք խառը կրակոցների: Կարծում ենք, որ այս ընթացքը պետք է կանխվի և հունավորվի համակարգված աշխատանքը, իսկ այլ վարքն ուղղակիորեն կբացահայտի ժողովրդի և ազգային նպատակների անունից հանդես եկող երկակի խաղ խաղացողներին: Իշխանության ծրագրված գործունեությունը հուշում ու հարկադրում է նաև հակադիր ճակատի կազմակերպմանն առանց ժամանակի ձգձգման: Փաստենք, որ յոթ տարի սեփական ժողովրդի նկատմամբ բազմաթիվ հանցագործություններ իրականացրած ղեկավարության համար, առջևում ոչ թե սովորական ընտրապայքար է լինելու, այլ ինքնապահպանության կենսական կռիվ, որի ժամանակ բոլոր միջոցները ընդունելի են: Կասկած չկա, որ իր թշվառ իշխանության ավարտն զգացող այս իշխանությունը գնալու է ամեն երևակայելի ու աներևակայելի օրինախախտումների: Արդեն իսկ, ամենաանհեթեթ պատրվակներով երկու սրբազանների, գործարար Սամվել Կարապետյանի, և այլ ազգային գործիչների ձերբակալությունը հուշում է, որ Նիկոլ Փաշինյանը պատրաստ է փաստելու, թե ունակ է ամենանենգ, ամենաանբարո և ամենաանօրինական քայլերի: Խաղասեղանին դրված է մեծ գրավ, և որքան էլ անհավատալի թվա, թերևս գալիք ընտրություններով մեծապես որոշվելու է, թե ինչ ճանապարհով է ընթանալու Անդրկովկասի ապագան, որոշվելու է գլոբալիզմի և հակագլոբալիզմի բախման արդյունքն այս տարածաշրջանում, որոշվելու է, թե ինչ աշխարհաքաղաքական առանցքի է հարելու տարածաշրջանը և վերջապես որոշվելու է՝ տեղ կունենա՞ Հայաստանը տարածաշրջանային քարտեզի վրա, թե իր Հուդա զավակների ձեռամբ մատաղ կարվի համաշխարհային մեծ տեղաշարժերին: Այս լինել-չլինելու ճամփաբաժանին բոլորից է պահանջվում վեր կանգնել մասնավոր շահերից ու հավակնություններից և այդ ամենը զոհաբերել սեփական երկրի ու զավակների ապագային: Ընտրությունը բոլորինս ու յուրաքանչյուրինս է:

Արցախ վերադարձի օրակարգը՝ բարի ցանկությո՞ւն, թե՞ միջազգային իրավունքի նորմ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Սեպտեմբերի 2-ը Արցախի Հանրապետության հռչակման օրն է:

Արցախի Հանարապետության հռչակման գործընթացի, ազատագրական պատերազմի ու դրան հաջորդած իրադարձությունների մասին շատ է խոսվել, ուստի դրանց վրա կանգ չենք առնի, նշենք միայն, որ սեպտեմբերը ցավալիորեն նաև Արցախի բռնի հայաթափման ամիսն է, այս մասին ևս խոսել ենք, հետևաբար՝ նպատակահարմար ենք գտնում խոսել մեկ այլ թեմայի՝ ***վերադարձի իրավունքի*** և հնարավորությունների մասին:

Արցախ վերադարձի հարցը հայ քաղաքական օրակարգ մտավ Արցախի բռնի հայաթափման հաջորդ իսկ օրվանից, և եթե սկզբում այն միայն փոքրաթիվ շրջանակներում էր քննարկվում, ապա, կարելի է ասել, որ աստիճանաբար ավելի ու ավելի լայն շրջանակների է հուզում այդ խնդիրը: Պատճառն այն է, որ 2023 թ. այս օրերին և 2024 թ. առաջին ամիսներին հանրության մեծ մասի մոտ կարծես հիասթափության, հուսալքության ու կորուստների անդառնալիության տրամադրություններ էին տիրում, և Սրբազան շարժման, ինչպես և նրան նախորդած շարժումների մեծագույն ծառայությունը այդ հիասթափությունը զգալիորեն նվազեցնելն էր: Բացի այդ, մեծ կորուստներ կրած՝ հայրենիքից զրկված արցախցիներն էլ, կարծես, աստիճանաբար ուշքի են գալիս, ավելի ամուր կանգնում ոտքի վրա և ձևակերպում են իրենց հստակ նպատակը՝ ***վերադարձ Արցախ:***

Այս տրամադրությունների հավաստումն էր նաև 2025 թ. սեպտեմբերի 2-ին՝ Արցախի անկախության օրը՝ ՀՅԴ-ի հրավիրած՝«Վերադարձ Արցախ լինելու է» բազմահազարանոց հանրահավաքը:[1]

Հնչած ելույթները, մարդկանց տրամադրությունները վկայում էին մեկ բանի մասին, որ Արցախի հարցը փակված չէ, և արցախցիները վճռական են վերադարձի հարցում, բայց…., Արցախ վերադարձի խնդիրը միայն գեղեցիկ ցանկությո՞ւն է, երազա՞նք, թե՞ միջազգայնորեն սահմանված իրավունք:

Այս հարցի պատասխանը տալիս են միջազգային իրավունքի նորմերը: Վերադարձի իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է՝ հանդիսանալով մարդու ազատ տեղաշարժվելու և իր հայրենիքի ու համայնքի հետ կապը վերականգնելու անքակտելի բաղադրիչ: Վերադարձի իրավունքը նաև սերունդների իրավունքն է և արդիական է այնքան ժամանակ, մինչև այն լիարժեքորեն չի իրացվել: Այն ամրագրված է ՄԱԿ-ի 1948 թ. «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 13-րդ (2) հոդվածում, ըստ որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, այդ

թվում՝ իր սեփականից, հեռանալու և իր երկիր վերադառնալու իրավունք»:[2] Վերադարձի իրավունքը սահմանվում է նաև՝ ՄԱԿ-ի 1966 թ. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով», որի 12-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է՝ «Ոչ ոք չի կարող քմահաճ ձևով զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից»,[3] այս դրույթը պարտադիր է դաշնագրին միացած բոլոր պետությունների համար:

Վերադարձի իրավունքը հատկապես կարևոր է բռնի տեղահանվածների և փախստականների համար, ովքեր հարկադրված են եղել լքել իրենց բնակության վայրը պատերազմի, էթնիկ զտումների, զանգվածային բռնությունների, ցեղասպանության կամ այլ ծանր խախտումների հետևանքով:

Վերադարձի իրավունքի իրացումը ենթադրում է երեք հիմնական սկզբունք.

1. Կամավորություն – վերադարձը պետք է լինի ամբողջությամբ կամավոր և առանց հարկադրանքի:
2. Անվտանգություն – պետությունները պարտավոր են երաշխավորել, որ վերադարձողներն ունենան ֆիզիկական անվտանգություն, պաշտպանված լինեն հետապնդումից, խտրականությունից և բռնությունից:
3. Արժանապատվություն – վերադարձը պետք է հնարավորություն տա վերականգնելու սեփականության իրավունքը, օգտվելու տնտեսական, սո-

ցիալական և մշակութային իրավունքներից և լիարժեքորեն վերաինտեգրվելու համայնքային և պետական կյանքին: Վերադարձի իրավունքն իրագործողները պետք է ունենան հավասար իրավունքներ և չդառնան խտրականության զոհ:[4]

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, միջազգային իրավունքի նորմերի տեսանկյունից, արցախցիները՝ վերադարձի իրավունք ունեն, և որքան էլ Հայաստանի թրքասպասարկու իշխանությունը փորձում է համոզել, որ հնարավոր և իրատեսական չէ Արցախ վերադառնալը՝ միջազգային օրենքները, և պատմական փորձը ցույց են տալիս, որ «Արցախ հավաքական վերադարձը հնարավոր է. այսօր, վաղը, թե 10 տարի հետո մենք դա անելու ենք»[5] - իսկ վերադարձի հնարավորությունն ավելի իրական դարձնելու համար անհրաժեշտ է, որ նախ և առաջ հնարավորինս արագ հեռացվի Արցախի էջը փակած և վերադարձին խոչընդոտող հայաստանյան իշխանությունը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, բացի այդ, ևս երկու կարևոր քայլ պետք է կատարվի. դրանք են.

«• Հայաստանում գործող բոլոր քաղաքական միավորները պարտավոր են իրենց ծրագրերում հստակ դիրքորոշում արտահայտել Արցախ հավաքական վերադարձի և մեր ժողովրդի արցախցի հատվածի խլված իրավունքների վերականգնման վերաբերյալ:

• Արցախ հավաքական վերադարձը պետք է դառնա հայության ինքնության նոր ձևակերպումների ամենաանհրաժեշտ բաղադրիչը: Հայ ժողովուրդը սնանկ չէ ոչ մտոք, ոչ կազմակերպչական առումով: 400 տարի շարունակ Արցախը ենթարկվել է զավթիչներին, 5 անգամ վերականգնել է պետականությունը՝ չենք խորշի 6-րդ անգամ վերականգնել այն: Արցախի անկախ պետություն ունենալը չի եղել ոչ մի հայի երազանքը՝ Մայր Հայաստանին վերընձյուղվելը, Մայր Հայաստանին միանալն է եղել մեր պայքարի նպատակը»:[6]

Կարևոր է նաև, թույլ չտալ, որ այս մեծ նպատակի ճանապարհին հայ ժողովուրդը խաբվի «վաշինգտոնյան համաձայնագիր» կոչված «թղթե շերեփին», որը մեզ ոչինչ չի տալիս, բացի մի նոր ցեղասպանության առաջ կանգնեցնելուց, քանի որ, այդ մեր շահերից չբխող փաստաթղթով՝

«– Թղթե խաղաղության և ոչնչով չերաշխավորված զինադադարի դիմաց իրացվում է Ադրբեջանի պահանջների հերթական չափաբաժինը:

– Անտեսված են Արցախում իրականացված էթնիկ զտման և Ցեղասպանության գործողությունների, Բաքվում ընթացող կեղծ դատավարությունների, այնտեղ պահվող մեր պատանդների, արցախահայության վերադարձի իրավունքի և Հայաստանի տարածքների բռնազավթման հետ կապված մեր շահերից բխող բոլոր հարցերը, սակայն, դրան հակառակ, Ադրբեջանի պահանջով համաձայնեցվում են Մինսկի խմբի լուծարման, միջազգային դատարաններում մեր շահերի պաշտպանությանն ուղղված հայցերը հետ կանչելու հարցերը: Ինչը պետք է Ադրբեջանին Արցախի հարցը փակելու, հետագայում պատասխանատվությունից խուսափելու և իրեն ապահովագրելու համար: Ավելին, Ադրբեջանին ոչինչ չի խանգարելու օրակարգ բերել, այսպես կոչված, «արևմտյան ադրբեջանցիների» վերադարձի հարցը, հանդես գալու տուժողի դիրքերից և Հայաստանից իր տարածքները գրաված լինելու համար՝ պահանջել փոխհատուցում:

– Ադրբեջանին Հայաստանի տարածքով տրամադրվում է «անխոչընդոտ հաղորդակցություն», ինչն իրականում ծառայելու է «թուրանական միջանցքի» գաղափարի իրականացմանը՝ Հայաստանի ինքնիշխանության սահմանափակման հաշվին: Հետևանքը կարող է լինել այն, որ Հայաստանը որպես սուբյեկտ կարող է կորցնել իր նշանակությունը և դառնալ աշխարհաքաղաքական շահերի բախման թատերաբեմ:

- Իրավական անորոշությունները և թերի կարգավորումները հակասության մեջ մտնելով՝ մինչ այժմ ընդունված երկկողմ և բազմակողմ միջազգային պայմանագրերի հետ անվտանգային լրջագույն սպառնալիքներ են առաջացնում և խարխլում Հայաստանի տնտեսական, պաշտպանական ու անվտանգային համակարգերը»:[7]

Այս մասին պետք է խոսվի ամեն օր. «քանի որ ժողովուրդն ամենօրյա ռեժիմով լսում է միայն իշխա-

նությունների քարոզչությունը, թե «նախաստորագրված այդ փաստաթուղթը Հայաստանին խաղաղություն է բերելու»[8] - իսկ այդ վտանգավոր քարոզը բթացնում է հանրության զգոնությունն ու ոչ միայն փակում Արցախ վերադարձի ճանապարհը, այլև վտանգում Հայաստանի Հանրապետության գոյությունն ընդհանրապես, որի լուծարման մասին, պաշտոնապես հայտարարվեց ՔՊ համագումարում, որտեղ «Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց կուսակցության հռչակագիրը: Այն 2026-ի ընտրություններին մասնակցության ծրագիրն է լինելու: Հռչակագիրը ՀՀ երրորդ հանրապետությունը լուծարելու և չորրորդ հանրապետության հռչակումը ՔՊ ռազմավարական նպատակ հայտարարելու մասին է»:[9] Այս ռազմավարության վտանգները բացատրելու և Հայաստանի Հանրապետության լուծարումը կանխելու համար «հայ հանրության հետ բավականին ծավալուն աշխատանքներ պետք է տարվեն, և այդ աշխատանքը պետք է տանեն այն ուժերը, որոնք ազգային են, մտահոգված են Հայաստանի ապագայի համար: Անկախ փորձագետները ևս պետք է աշխատանքներ իրականացնեն ամենօրյա ռեժիմով»,[10] որպեսզի հայ ժողովուրդը հասկանա, որ դեպի Արցախ իր վերադարձի ճամփան արհեստականորեն փակող իշխանությունն իրական վտանգ է ներկայացնում նաև Հայաստանի Հանրապետության գոյության համար:

Ամփոփելով, ցանկանում ենք նշել, որ. «…. Արցախի հարցը փակված չէ, և չի կարող փակված համարվել, քանի դեռ արցախահայությունը զրկված է իր հայրենիքում ազատ ու անվտանգ ապրելու իրավունքից:

Պաշտոնական Երևանը և Բաքուն փորձում են համոզել մեր ժողովրդին ու միջազգային հանրությանը, թե իբր խնդիրը լուծված է: Բայց բոլորս գիտենք, որ այս կեղծ թեզը ծառայում է մեկ նպատակի՝ արդարացնելու պարտվողական քաղաքականությունը, որը շարունակվում է միակողմանի զիջումների և ժողովրդի թիկունքում ընդունված դավադիր որոշումների միջոցով:

Մեր մոտեցումը շատ պարզ է՝ ուժի կիրառմամբ կամ ուժի սպառնալիքով պարտադրված որևէ փաստաթուղթ չի կարող համարվել լեգիտիմ: Արցախի ճակատագրի շուրջ կայացված ոչ մի որոշում չի կարող ունենալ իրավական ու քաղաքական ուժ առանց արցախահայության անմիջական մասնակցության: Վերադարձի և ինքնորոշման իրավունքները հիմնարար իրավունքներ են, որոնք չեն կարող անտեսվել կամ առևտրի առարկա դառնալ»:[11]

Արցախ վերադարձը և Արցախի վերամիավորումը Հայաստանին, համայն հայության ազգային խնդիրն է, որը միջազգային իրավունքի նորմերի հիման վրա հնարավոր է իրականացնել, հաշվի առնելով նաև այն փաստը, որ միջազգային իրավունքի նորմերի համաձայն յուրաքանչյուր ժողովուրդ ունի ինքնորոշման իրավունք և Արցախի ժողովուրդը միջազգային իրավունքի բոլոր նորմերին համապատասխան 1991 թ. ԼՂԻՄ տարածքում անցկացրել է անկախության հանրաքվե և իրացրել իր ինքնորոշման իրավունքը՝ հետևաբար Արցախի ժողովուրդը՝ գոնե ԼՂԻՄ տարածքում՝ Հայաստանի հետ ցամաքային կապ ունեցող սեփական պետության իրավունք ունի, ինչն անգամ այս իրավիճակում միանգամայն իրատեսական է, եթե Հայաստանի իշխանությունները հայկական երկու պետությունների շահերից վեր չդասեին Ադրբեջանի շահերը:

Կարծում ենք, առաջիկա ամիսներն ու 2026 թ. վճռորոշ են լինելու հայության համար, ուստի ժամանակն է, որ հայ ժողովուրդն ինքը որոշի՝ Արցախ-Հայաստան միասնությամբ անկախ և ուժեղ հայրենիք է ցանկանում թե՞ «Արևմտյան Ադրբեջան» վարչական միավորի կարգավիճակ՝ այսինքն՝ հայ ժողովուրդը այլևս չի կարող խուսափել **վահանով** կամ **վահանի վրա** ընտրությունից՝ խուսանավելու տեղ այլևս չկա:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. https://www.facebook.com/ARFArmenia/videos/550169868188334
2. https://www.aravot.am/2025/09/12/1509984/
3. https://www.arlis.am/hy/acts/18500
4. https://www.aravot.am/2025/09/12/1509984/
5. https://abcmedia.am/glxavor-noruthyunner/179640/?fbclid=IwY2xjawM8i1RleHRuA2FlbQIxMQABHiaCZMjvKPV3y1LIK0SZpn7wT9V59VIp2wNLGqiAkKOBrioq3h4B-1lujrPB_aem_Y64DQHhmfuGcf04Y2psjmA
6. Նույն տեղում:
7. https://www.arfd.am/new/news/82182/?fbclid=IwY2xjawM8i0tleHRuA2FlbQIxMABicmlkETFSNklqd204bk5LT2pHTWZsAR4MFh2POVuT1ohI8erGj767Nk2TDdWrY2xu_w-YyUEKchP2531O4cjt77TpoQ_aem_mCGsrBIIpT3mnU6r4_Z6Ig
8. https://168.am/2025/09/11/2276522.html?fbclid=IwY2xjawM8jTVleHRuA2FlbQIxMQABHpYxeImYUZo7jEuL2Pjeka4Letnu3r1EvFyy2VX8pAcA6npbL-0mBhqv4ZXG_aem_lqc14d0jwYGcYz1YNfJtig
9. https://www.aravot.am/2025/09/20/1511454/
10. https://168.am/2025/09/11/2276522.html?fbclid=IwY2xjawM8jTVleHRuA2FlbQIxMQABHpYxeImYUZo7jEuL2Pjeka4Letnu3r1EvFyy2VX8pAcA6npbL-0mBhqv4ZXG_aem_lqc14d0jwYGcYz1YNfJtig
11. https://www.arfd.am/new/

Քարոզչական ձեռնածությունը իշխանության ինքնապահպանման երաշխիք (մաս 1)

Արտաշես Շահբազյան

Լրատվամիջոցներն ու սոցիալական ցանցերը բազմաթիվ տեսանյութեր ու հրապարակումներ են ներկայացրել, որոնցում Նիկոլ Փաշինյանը մինչև իշխանության գալը կամ կառավարման առաջին տարիներին ասել է մեկ բան և միանգամայն հակառակն է պնդել իշխանավարման հետագա տարիներին: Այդ հրապարակումները նա չի էլ փորձել ժխտել, քանի որ հնարավոր չէ ժխտել անժխտելին: Մի դեպքում նա փորձել է պատճառաբանել, թե այն ժամանակ ասել է նման բան, որովհետև հայրենասեր է եղել, կամ չէր կարող ճշմարտությունն ասել, որովհետև այն ժամանակ ժողովուրդը չէր ընդունի այն, իսկ այլ դեպքերում փորձել է այլ բացատրություններ մոգոնել իր միանշանակ մտքերի համար: Նրա, այսպես կոչված, հեղափոխական շրջանի խոստումներից ոչ մեկը չի կատարվել, թերևս բացի նրանից, որ իշխանությունից կհեռացնի և պատասխանատվության կենթարկի նախկին իշխանավորներին: Որոշ իմաստով նա այս հարցում նույնիսկ ինքն իրեն է գերազանցել: Տարիների ընթացքում աշխատանքից ազատվել են ոչ միայն ընդդիմադիր անձինք և ուժերի ներկայացուցիչները, այլև նրանց հարազատները: Այդպիսով Հայաստանում ձևավորվել է ՔՊ-ական միակուսակցական կենտրոնաձիգ համակարգ, որով սուտ ժողովրդավարները գերազանցել են իրենց բոլոր նախորդներին: Հիմա, նոր ընտրությունների նախօրյակին, իհարկե նա փորձում է ապացուցել, որ ինքը նույն ժողովրդական տղան է, ով կարող է ազատ շրջել փողոցներում, կամ երթևեկել տրանսպորտով, դատական նորանոր քրեական գործեր հարուցել նախկին պաշտոնյաների դեմ կամ նոր ընթացք հաղորդել իր իշխանության ժամանակահատվածի չափ ձգձգվող քրեական հետապնդումներին, անգամ իր թիմից մեկ-երկու երկրորդական մակարդակի պաշտոնյաների ձերբակալել կաշառակերության և, նույնիսկ, դավաճանության մեղադրանքով, փորձել ապացուցել, թե ինքը չի մոռացել ադրբեջանական գերության մեջ գտնվողներին, կամ արցախցիների հիմնահարցերի մասին: Որքանով նրան կհաջողվի մինչև ընտրություններն ընկած ժամանակահատվածում կրկին խաբել ժողովրդին, վերականգնելով իր «հեղափոխական անկաշառ» իմիջը և վերածել այն նախընտրական դրամագլխի, ժամանակը ցույց կտա:

Երևի ինքն էլ չհավատալով որ իրեն և իր առաջնորդած ուժին կհաջողվի ինչ-ինչ հաջողությունների հասնել ստանձնած պարտավորությունների հարցում, Նիկոլ Փաշինյանը սուտն ու կեղծիքը ի սկզբանե դարձրել է իր գործունեությանը ուղեկցող հիմնական քարոզչական միջոցը: Ասվածի ակնհայտ ապացույցը ֆեյքերի այն հսկայական բանակն է, որին «թավշյա

առաջնորդը» գործի է կոչել իր ղեկավարման առաջին օրերից: Հարյուրավոր կամ գուցե հազարավոր այս մարդիկ, այլ գործունեության անվան տակ պետական ու մասնավոր զանազան հաստատությունների պատերի ներսում ամեն օր զբաղված են սոցիալական ցանցերով հայհոյելով ազգային ուժերի, իշխանությանը քննադատող մարդկանց՝ զուգահեռաբար գովերգելով իշխանություններին և տարածելով իշխանությանը հաճո սուտ ու կեղծիք: Ընդ որում շատ անգամներ բացահայտվել են այդ կեղծիքներն ու նրանց տարածողները, հեշտությամբ բացահայտվում է, որ նրանք բազմաթիվ այլ անունների և լուսանկարների ներքո գործող սոցիալական ցանցերի կեղծ օգտատերեր են, այնուամենայնիվ, այն, ինչը քաղաքական երկրաշարժ կառաջացներ այլ երկրներում՝ իր տակ խորտակելով գործող իշխանություններին, Հայաստանում հեշտությամբ մարսվում է, և իշխանական ֆեյքերի բանակը հանգիստ շարունակում է իր անբարո, պառակտիչ, հակապետական գործունեությունը: Մենք, սակայն այս հանգամանքի վրա չենք ցանկանում մեր խոսքը կենտրոնացնել, վստահ լինելով, որ փաշինյանական իշխանության օրինաչափ անկումից հետո, երկիրը մաքրելու գործընթացում, պարտադիր է լինելու կեղծիքի այս ինստիտուտի գործունեության հիմնավոր քննությունը:

Այս դեպքում իմ ասելիքը վերաբերելու է հատկապես այն մանիպուլյատիվ թեզերին, որոնց վրա, ըստ էության, իր գործունեության գաղափարաքաղաքական հիմքերն է կառուցել ներկա իշխանությունը՝ ի դեմս Նիկոլ Փաշինյանի:

Փաշինյանի իշխանության գալու և նույնիսկ իշխանությունը պահպանելու թերևս գլխավոր հիմնավորումը եղել է նախկիններին հեռացնելու և նրանց պատասխանատվության ենթարկելու խոստումը: Ինչպես,

սակայն ժամանակը բացահայտեց, Նիկոլ Փաշինյանի անհանդուրժողությունը «կոնկրետ նախկինների» նկատմամբ էր, ում հանդեպ Փաշինյանն անձնական տրամադրվածություն ուներ, այլապես կարելի է պաշտոնյաների ու գործարարների մի մեծ ցուցակ կազմել նրանց անուններից, ովքեր բարձր դիրքերի ու հնարավորությունների են տիրապետել դեռևս անկախ Հայաստանի առաջին իշխանությունների օրերից, սակայն դա չխանգարեց ծանրակշիռ տեղ ունենալու փաշինյանական իշխանության համակարգում: Կարելի է այդ անունների թվարկումը սկսել ներկայումս Հանրապետությունում ամենաբարձր պաշտոնը զբաղեցնող ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանից, ով 1992-1996 թվականներին եղել է Երևանի քաղաքապետը, 95 թվականին ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր, ինչպես և մի քանի տարի եղել է նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի խորհրդականը: Կարելի է այս շարքում հիշել նաև Գագիկ Ջհանգիրյանին, Անդրանիկ Քոչարյանին, նախկին դատախազ Արթուր Դավթյանին և նախկին խորհրդարանի իշխանական աթոռներից նոր իշխանության խորհրդարանական խմբակցության աթոռներին տեղափոխված մի քանի պատգամավորների, ինչպես նաև Հանրապետությունում ամենաաչքի ընկնող օլիգարխների, որոնք դարձան նոր իշխանության սրտի բիզնեսմենները: Այս շարքին կարելի է ավելացնել ՀՀԾ-ական իշխանավորների զավակներին և մերձավոր հարազատներին, որոնց, անցյալամերժ վարչապետը, այսօր բարձր պաշտոններ է վստահել: Իսկ եթե անդրադառնանք մնացած «նորերին» ապա այս շարքից շատերին կգտնենք Լևոն Տեր-Պետրոսյանի և նրա թիմի կողքին, մասնավորապես 2008 թվականի ընտրությունների ժամանակ՝ որպես, այսպես ասած, երիտթև: Ի դեպ, նոր իշխանության մեջ նախկինների թվարկումը թերևս ավելի ճիշտ կլիներ սկսել հենց Նիկոլ Փաշինյանից, ով 1990-ականների ՀՀԾ-ական «վար ու ցանքի» ժամանակներում «գնդի որդի էր» և իշխանավորների շահերի համար ինքնամոռաց կռիվ էր տալիս մամուլի ճակատում: Եթե թիմակիցներ ասելով նկատի ենք ունենում դավանած գաղափարախոսությունը, քաղաքական հայացքենրն ու գործելակերպը, այլևս կարիք էլ չկա կենսագրական մանրամասների մեջ խորանալու. Նիկոլ Փաշինյանը ձևավորվել է ՀՀԾ-ի գաղափարաքաղաքական քուրայում, Լևոն Տեր-Պետրոսյանի կողքին է եղել 2008 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ, իսկ այնուհետև արևմտամետության և հակաարցախականության վտանգավոր ոլորապտույտով գլորվել է մինչև արտաքին կախումները, մերժել է Արցախյան պահանջատիրությունը և կոսմոպոլիտիզմի ճանապարհով հասել է մինչև ազգային ինքնությունից հրաժարման:

Ինչ վերաբերում է ՔՊ-ական իշխանության բնույթին և որակին, ապա միանշանակորեն կարելի է արձանագրել, որ.

- անցնող 35 տարիների ընթացքում ոչ մի իշխանության օրոք պետական համակարգը չի ունեցել այսքան միակուսակցական բնույթ,
- երբեք իշխանությունը չի եղել այսքան կենտրոնացված մեկ անձի ձեռքում,
- երբեք այսքան խախտված չի եղել իշխանության հավասարակշռությունը՝ խորհրդարանն ու դատական համակարգը այսքան ենթակա չեն եղել կառավարության ղեկավարի կամքին,
- երբեք դատական համակարգն այս չափով չի ծառայել ավտորիտար համակարգին, որպես ընդդիմադիր դաշտի դեմ հաշվեհարդարի կույր գործիք,
- երբեք իշխանության գործունեությունն այսքան անթափանց և գաղտնի չի եղել ժողովրդի համար, երբեք այս չափով չի արհամարհվել ժողովրդի կամքը, և պահանջները,
- երբեք հայ մարդն այսքան արհամարհված ու անօգնական չի զգացել իրեն սեփական պետության մեջ,
- երբեք հայ մարդն այսքան արհամարհված ու անօգնական չի զգացել իրեն սեփական պետության մեջ,
- պետական համակարգում թալանը, հովանավորչությունը, պաշտոնների և պետական ծրագրերի բաշխումը իշխանական համակարգի և նրանց հովանավորյալների միջև, երբեք չի իրականացվել այս չափով ոչ մրցութային և ներթիմային փակ շրջանակի սահմաններում,
- երբեք իշխանությունների գործունեությունն այս չափով ներհասարակական լարվածություն չի ստեղծել և ուղղված չի եղել հասարակության

պառակտմանը՝ յուրայինների և ոչ յուրայինների սահմանաբաժանմամբ,
- երբեք այսքան խզված չեն եղել Հայաստանի և Սփյուռքի հարաբերությունները, արցախցիներն ու սփյուռքահայերը այս չափով մերժված չեն եղել Հայաստանի իշխանությունների կողմից,
- մինչև ՔՊ-ական իշխանության գործունեությունը Հայաստանի իշխանությունը երբեք չի վիճարկել Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու առանձնահատուկ դերը հայության ազգային կյանքում, նրա ինքնուրույն կարգավիճակը և գործառույթները երկրում,
- այս իշխանությունից առաջ երբեք որևէ իշխանություն չի հավակնել Հայոց Սուրբ եկեղեցին իրեն ենթարկելու պիղծ և արտաքին թելադրանքից բխող նպատակի,
- միայն այս իշխանությունների օրոք է Հայաստանը կրել նման ծանր պարտություններ և ունեցել նման ծանր տարածքային կորուստներ, ինչը դուրս է բերել պետությունը իր զարգացման հունից և լրջորեն ազդել է Հայաստանի հեռանկարի վրա,
- երբեք արտաքին քաղաքականությունը այս չափով գաղտնի չի եղել ժողովրդից, չի հակասել ժողովրդի տրամադրություններին,
- անկախ Հայաստանում իշխանությունները երբեք այսքան կախյալ չեն եղել արտաքին ուժերից, ինչը լրջորեն ազդել է Հայաստանի ինքնիշխանության վրա,
- երբեք Հայաստանն այսքան միայնակ չի եղել աշխարհաքաղաքական միջավայրում և ստորադասված չի եղել որպես պետություն,
- մինչև ՔՊ-ի կառավարումը երբեք որևէ իշխանություն չէր իրականացրել հայ ժողովրդի պատմական ինքնությունը ոչնչացնելու համակարգված ծրագիր,
- եթե ներկա և նախորդող իշխանությունների միջև կարելի է համեմատություններ անցկացնել պետական համակարգում մի շարք արատավոր երևույթների գոյության հարցում, ապա սրա կողքին Հայաստանի նախորդող որևէ իշխանության ժողովուրդը չի համարել դավաճան, որևէ այլ իշխանություն չի տարել երկիրը գիտակցված պարտությունների և արտաքին ենթակայության:

Այսպիսով, եթե այսօրվա իշխանության և հատկապես նրա առաջնորդի կողմից ժողովրդին վախեցնելու և հեռու վանելու համար որպես խրտվիլակ խաղարկվում է նախկինների ստվերը, ապա արդեն ակնհայտ է, որ երիտասարդ ժողովրդավարների իշխանությունը բոլոր ուղղություններով գերազանցել է նախորդներին և դեռ մի բան էլ ավելի: Դատական ոլորտն իրեն քննադատողների դեմ որպես պատժիչ գործիք գործածող իշխանությունն անցնող 7 տարիների ընթացքում բազմաթիվ աղմկոտ քրեական գործեր է հարուցել՝ նախ, որպես դատավճիռ, հայտարարել է կատարված հանցանքի մասին, ապա մարդկանց ինչ որ ժամանակ մեկուսացնելուց հետո սուս-փուս ազատ է արձակել: Իսկ նախկին ղեկավարների դեմ դատական գործընթացները շարունակվում են անվերջանալի սերիալների նման: Նոր ընտրությունների նախաշեմին խաղարկվում են նոր սերիալներ՝ բռնի իշխանափոխության սցենարով:

Իշխանափոխությունից անցել է 7 տարի, նորերը վաղուց պետք է կոնկրետ գործերով ապացուցեին, թե իրենք ինչքան տարբեր են և ինչքան լավն են, բայց նրանք դեռ ճգնում են ապացուցել, թե նախկիններն ինչքան վատն են:

Վատի ու լավի, թալանչիների և ազնիվների թեմային առնչվող այսպիսի մի փաստ. նախորդող երեք իշխանություններն ավելի քան 25 տարիների ընթացքում կուտակել են 6,5 միլիարդ դոլարի արտաքին պարտք, իսկ ՔՊ-ականները 7 տարում վերցրել են ավելի քան 8 միլիարդ դոլարի պարտք: Նախկինների օրոք գրեթե ամբողջովին վերականգնվել է աղետի գոտին, հիմնանորոգվել են Հանրապետության բոլոր մայրուղիներն ու հարակից բազմաթիվ ճանապարհներ, կառուցվել են կամուրջներ, թունել, դպրոցներ, ջրագծեր, վերանորոգվել են մշակույթի բոլոր հայտնի կառույցները, բազմաթիվ դպրոցներ և այլն: Ազնիվների և անկաշառների նոր իշխանությունը կարո՞ղ է ասել, թե ինչի վրա է ծախսել յուրաքանչյուր տարի վերցրած 1 միլիարդ դոլարի վարկը:

Նոր իշխանությունը կարո՞ղ է տեղեկացնել, թե ինչ վախճան ունեցան Նիկոլ Փաշինյանի շարասյան կողմից սպանված կնոջ գործը, գնդապետին քարերով սպանողների ճակատագիրը, խայտառակ պայմանների մեջ հրդեհի զոհ դարձած զինվորների հարցով քրեական գործը և տարիներով ձգձգվող 2020 թվականի պատերազմում պարտության մեղավորների փնտրտուքը:

Իհարկե նկատի չունենալով, որ արդեն իսկ Ալիևն ու Փաշինյանը գտել են քավության նոխազներին և դատում են այն օրերի հայ ռազմաքաղաքական ղեկավարությանը՝ մեկը Բաքվում, մյուսը՝ Երևանում:

Ցանկանալով խոսել այն ստի ու կեղծիքի մասին, որի վրա հիմնված է այսօրվա իշխանությունը, նախ ներկայացվեց, այսպես կոչված, «Նախկինների» հետ կապված քաղաքաքարոզչական այն մանիպուլյացիան, որի շահարկմամբ ՔՊ-ական բախտախնդիրները հասել են իշխանության և փորձում են պահպանել այդ իշխանությունը: Բայց սա բազում թեզերից միայն մեկն է, հաջորդիվ կխոսեմ մյուսների մասին: ■

Կազինոն՝ աշխարհաքաղաքականության ծառայության մեջ. ինչպե՞ս է Բրիտանիան ֆինանսավորում Փաշինյանի ռեժիմը

Տիգրան Բաղրամյան

Հայաստանն ու Մեծ Բրիտանիան պայմանավորվել են երկկողմ հարաբերությունները հասցնել ռազմավարական գործընկերության մակարդակի. նման որոշում է կայացվել վերջերս Երևանում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի և Մեծ Բրիտանիայի Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի և Անդրծովյան տարածքների հարցերով պետքարտուղար Սթիվեն Դաութիի համանախագահությամբ կայացած ռազմավարական երկխոսության երկրորդ փուլի արդյունքում: Պաշտոնական ռազմազեկույցների համաձայն՝ կողմերը քննարկել են անվտանգության և պաշտպանության ոլորտներում համագործակցության ընդլայնման հարցը՝ ներառյալ ռազմական կցորդների փոխանակումը, բարձր մակարդակի շփումների զարգացումը, ինչպես նաև կիբեռանվտանգության և հիբրիդային սպառնալիքներին հակազդեցության ոլորտում համատեղ աշխատանքը: Երևանն ու Լոնդոնը մտադրություն են հայտնել խորացնել գործընկերությունը տնտեսական ոլորտում, աջակցել բարեփոխումներին և տնտեսության դիվերսիֆիկացմանը միջազգային ֆինանսական ինստիտուտների հետ համագործակցությամբ, ինչպես նաև զարգացնել գործարար կապերը: Բրիտանացիները ողջունել են Թրամփի, Ալիևի և Փաշինյանի օգոստոսի 8-ին Վաշինգտոնում կայացած հանդիպման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունները՝ դրանք համարելով կարևոր քայլ Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների լիարժեք կարգավորման ճանապարհին:

«Անգլուհու» վաղեմի հետաքրքրությունը Կովկասի (և մասնավորապես Հայաստանի) նկատմամբ նյութականացվում է տարբեր մակարդակներում և տարբեր ձևաչափերով՝ սկսած 2018-ի «թավշյա հեղափոխությունից» շատ առաջ թագավորական այցերից մինչև մարդկային ստորադաս կրքերի անվերջանալի շահագործումը: Օրինակ, դյուրահավատ քաղաքացիներից փող կորզելու համար Հայաստանում զարգացած խաղային ենթակառուցվածքի առկայությունը ոչ մեկի համար գաղտնիք չէ, այդ մասին բազմիցս գրել են ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան լրատվամիջոցները: Բայց ահա Հայաստանի ՀՆԱ-ի գովելի աճի այդ յուրահատուկ աղբյուրի աշխարհաքաղաքական բաղադրիչի մասին շատ ավելի քիչ է հայտնի: Մինչդեռ դա կա, և փոքր չէ: Չնայած իշխանամետ քարոզիչների անհամոզիչ հերքումներին, հիմքեր կան պնդելու՝ Անգլիան Փաշինյանին ֆինանսավորում է Vivaro/VBet վերահսկվող ակտիվի միջոցով: Բրիտանական խաղատան շահույթը

շահաբաժիններով գնում է Հայաստան, օրինականացվում է այնպիսի կասկածելի գրասենյակների միջոցով, ինչպիսիք են SoftConstruct-ը, Fast Bank-ը և Fastex-ը: Այնուհետև այն բաժանվում է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության դոնորների ուղղությամբ կամ դրվում է վարչապետի քաղաքացիական կնոջ՝ Աննա Հակոբյանի բարեգործական հիմնադրամներում: Հաշվետվություններում ամեն ինչ երևում է ազնիվ նվիրատվությունների և սոցիալական նախագծերի տեսքով, բայց իրականում խոսքը ֆինանսա-քաղաքական դրամարկղի մասին է, որի միջոցով Անգլիան վճարում է Հարավային Կովկասում իր ազդեցության համար և փորձում է այնտեղ անցկացնել իր շահերը:

Vivaro Ltd-ն Մալթայում և Բրիտանիայում վարում է VBET ապրանքանիշը. այնտեղ պտտվում են օնլայն կազինոների հսկայական խաղադրույքները, որոնք փաշինյանական Հայաստանում ձեռք են բերել իսկական ազգային աղետի հատկանիշներ: 2023-ին բրիտանական կարգավորիչը AML-ի և պատասխանատու գեյմինգի խախտումներ է արձանագրել և տուգանք է նշանակել, սակայն սկանդալն արագ կոծկել են, և ընկերությունը շարունակել է աշխատանքը. Չէ՞ որ հենց այդ կառույցների միջոցով է փողը ետ մղվում «անհրաժեշտ» կոնտրագենտներին Հայաստանում:

Հատկանշական է՝ 2024-ի ամռանը Մեծ Բրիտանիայում աղմկոտ սկանդալ է բռնկվել. պարզվել է, որ քաղաքական կուսակցությունները՝ ներառյալ պահպանողականներն ու լեյբորիստները, նվիրատվություններ են ստացել գեմբլինգի (մշտական մասնակցություն մոլախաղերին, ինչը վտանգի է ենթարկում մարդկանց մասնագիտական և անձնական կյանքը) հետ կապված կառույցներից. խոսքը bet365 – ից ստացված 400 հազար ֆունտ ստեռլինգի մասին է, ինչը հասարակական լայն արձագանք է առաջացրել:

Հարկ է նշել՝ VBET (Vivaro/Բաղալյաններ) և bet365-ը հրապարակայնորեն հատվում են:

- երկուսն էլ հաշվառված են GAMSTOP-ի ազգային սխեմայում,
- երկուսն էլ օգտագործում են IBAS-ը որպես հաստատված ADR մատակարար,
- երկուսն էլ ընդգրկված են IBIA-ում (International Betting Integrity Association),
- և ներկա էին նույն արարողություններին (EGR Operator Awards 2022, SBC Awards 2023):

Այսպիսով, Բրիտանիայում գործադրված և քողարկված սխեման շարունակում է աշխատել Հայաստանում և ազդել քաղաքական գործընթացի վրա:

Ինչպե՞ս են փողերը հասնում Հայաստան:

Վիվառոյի շահույթը շահաբաժիններով ձևակերպվում է Վիգեն և Վահե Բաղալյան եղբայրների վրա: Հայաստանում այդ միջոցները տեղավորվում են իրենց իսկ պարագծում՝ SoftConstruct / BetConstruct, Fastex և Fast Bank կրիպտոէկոհամակարգ:

Այնուհետև հասարակ քաղաքացիները գումարներ են «շահում» և վերածվում են կուսակցության դոնորների: Այսպես, ԱՄՆ-ում 2022-ին Ինդիանա նահանգի նախկին սենատորը և Ինդիանապոլիսի խաղատների ղեկավարը դատապարտվել են ազատազրկման՝ խաղադրույքների գումարներից ընտրությունների ֆինանսավորման մեքենայությունների համար:

Սխեմայի մեկ այլ տարբերակ. Fastex-ի միջոցով զանգվածաբար բաժանվում են FTN ժետոններ մարզիկներին, ֆեդերացիաներին և ՀԿ-ներին: Գումարները հասնում են հարյուր միլիոնավոր դրամների: Դրանք լիկվիդացվող են և հեշտությամբ կանխիկացվում են՝ վերածվելով կուսակցական նվիրատվությունների: 2022-ին Սիվիլնեթն ու OCCRP-ն ցույց տվեցին, որ կուսակցության տասնյակ «դոնորներ» նույն օրը նույն չափով գումարներն են մուծել, իսկ ոմանք էլ ընդհանրապես հերքել են իրենց մասնակցությունը: Ինքը՝ Փաշինյանն այն ժամանակ խոստովանեց. «... կուսակցության ֆինանսավորման խնդիր կա»: Հատկանշական է՝ նման նվիրատվությունները սկսվեցին մեկ տարի անց այն բանից հետո, երբ Քաղաքացիական պայմանագիրը բարեփոխումներ իրականացրեց՝ ընկերություններին արգելելով ուղղակիորեն ֆինանսավորել կուսակցություններին և սահմանափակեց անձնական մուծումները:

Հայաստանի բուքմեյքերական արքա Վիգեն Բաղալյանի եղբորորդին մայիսին ընդգծված շքեղ հարսանիք է արել, ընդ որում՝ Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Մի շարք թանկարժեք դերակատարների մասնակցությամբ ճչան տեսարանը արժանացել է Վարչապետի աներկբա հավանությանը, ինչն ամենևին էլ զարմանալի չէ: Բաղալյաններն այսօր էլ ապահովում են Փաշինյանի ռեժիմի արտասահմանյան ֆինանսավորումը, ինչը հաստատվում է էլիտայի ներսում հրապարակային կապերով: Այսպես, նրանք մոտ են խորհրդարանի հայտնի սկանդալային խոսնակ Ալեն Սիմոնյանին: 2021 թվականին լրատվամիջոցները գրել էին նրանց համատեղ հանգստի մասին Միկոնոսում, որտեղ Սիմոնյանը կնոջ հետ էր, իսկ կողքին՝ Վիգեն Բաղալյանը: Հարցը, թե ով է վճարել ուղևորության համար, այդպես էլ մնաց անպատասխան: Բաղալյանների միջոցով օտարերկրյա կապիտալը վերածվում է քաղաքական ազդեցության և իշխող թիմին աջակցության:

Իշխանության ֆինանսավորման ևս մեկ ստվերային աղբյուր են Աննա Հակոբյանի ոչ անհայտ հիմնադրամները: «Ժպիտների քաղաքը» տասնյակ միլիոնավոր դրամներ է ստացել բիզնեսից: Դոնորները հիմնականում հայկական և միջազգային խոշոր ընկերություններ են՝ Սփյուռքը և անհատներ: Դոնորների ցուցակներում հայտնվել են բանկեր, տելեկոմներ, SS ընկերություններ, բարեգործական կազմակերպություններ: 2025-ին յուրացումների վերաբերյալ հետաքննություն է սկսվել, և դրա «հերքմանը» միացել են փաշինյանական վերահսկողության տակ գտնվող բոլոր ռեսուրսները, այդ թվում՝ SoftConstruct մեդիանախագծերը: Նույնիսկ արևմտյան մամուլն անսպասելիորեն հանդես եկավ հիմնադրամի պաշտպանության օգտին, ինչը հարցեր ստեղծեց. ինչո՞ւ առաջացավ նման հետաքրքրություն, բացի ազդեցության գործիքը պաշտպանելու ցանկությունից: Փաստը մնում է. հիմնադրամը կուտակել է խոշոր նվիրատվություններ և դոնորների համար ստեղծել է ուղիղ մուտքի հնարավորություն դեպի գործող իշխանությունը:

2020-ի սեպտեմբերին Աննա Հակոբյանը լքեց «Ժպիտների քաղաքը»՝ հրաժարվելով հոգաբարձուների խորհրդի ղեկավարի լիազորություններից, սակայն նրա գործառույթը ստանձնեց նույն Հակոբյանի «իմ քայլը» հիմնադրամը, որը նաև դարձավ բիզնեսից քաղաքական ներդրումների կլաստեր և օտարերկրյա ֆինանսավորման հարմար գործիք: Դե, իսկ Բաղալյան կրտսերի վերոհիշյալ հարսանիքը վկայում է այն մասին, որ Հայաստանում բրիտանացիների փողերը ծփում են: ■

Թարգմանությունը՝ Գայանե Մանուկյանի

Իսրայել-Թուրքիա հարաբերություններում լարվածության սրումն ու Հայոց ցեղասպանության հարցը

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

Թուրքիայի և Իսրայելի հարաբերությունները բարդ պատմություն ունեն՝ ներառյալ համագործակցության ժամանակաշրջաններ (հատկապես 1990-ականներին ռազմական և տնտեսական ոլորտներում) և կտրուկ անկումներ, հատկապես Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի օրոք՝ 2000-ականների սկզբից: Թուրքիան, որպես առաջին մուսուլմանական մեծամասնություն ունեցող երկիր, ճանաչել է Իսրայելը 1949 թվականին և ժամանակին ամուր կապեր է պահպանել, ներառյալ 1996 թվականի ազատ առևտրի համաձայնագիրը, որը երկկողմ առևտուրը հասցրել է տարեկան ավելի քան 7 միլիարդ դոլարի: Սակայն հարաբերությունները կտրուկ վատթարացել են 2010 թվականի Գազայի միջադեպից, Իսրայել-Պաղեստին խաղաղ գործընթացի ձախողումից և Էրդողանի՝ պաղեստինցիների և ՀԱՄԱՍ-ի հանդեպ բացահայտ աջակցությունից հետո:

2025 թվականին հարաբերությունները հասել են տասնամյակների ընթացքում ամենացածր կետին՝ մրցակցությունից վերածվելով բացահայտ թշնամանքի: Այս սրացումը հիմնականում պայմանավորված է Իսրայելի կողմից Գազայում ընթացող պատերազմով, փոխադարձ մեղադրանքներով տարածաշրջանում անկայունություն հարուցելու համար (օրինակ՝ Սիրիայում) և երկու կողմերի սադրիչ գործողություններով: Դիվանագիտական, տնտեսական և ռազմական կապերն արդեն իսկ խզված են, և Թուրքիան Իսրայելին դիտարկում է որպես անմիջական անվտանգային սպառնալիք:

Երկու երկրների միջև գոյություն ունեցող լարվածության հիմնական վերջին զարգացումները ներառում են հետևյալ ոլորտները.

- **Դիվանագիտական կապերի խզում (2024 թ. նոյեմբեր)**. Էրդողանը հայտարարեց դիվանագիտական հարաբերությունների լիակատար խզման մասին՝ պատճառաբանելով Իսրայելի կողմից Գազայի պատերազմը դադարեցնելու մերժումը: Դեսպանատները մնում են փակ, և բարձր մակարդակի շփումները դադարեցված են:
- **Առևտրի և տնտեսական արգելքներ (2025 թ. մայիս–օգոստոս).** Թուրքիան 2024 թվականի մայիսին սահմանեց առևտրի մասնակի էմբարգո, որն արդեն 2025 թվականի օգոստոսի վերջին ընդլայնվեց մինչև ամբողջական դադարեցում: Սա ներառում է Թուրքիայից Իսրայել արտահանումների և Իսրայելից ներմուծումների արգելքը: Երկկողմ առևտրի ծավալը, որը ժամանակին գերազանցում էր 7 միլիարդ դոլարը, հասել է գրեթե զրոյի: Հետևանքը Իսրայելում մատակարարման խափանումներն են և գների բարձրացումը:

- **Օդային և ծովային սահմանափակումներ (2025 թ. օգոստոս**). Օգոստոսի 29-ին Թուրքիան փակեց իր օդային տարածքը Իսրայելի բոլոր ինքնաթիռների համար, ներառյալ կառավարական և առևտրային թռիչքները, ինչը ստիպում է Իսրայելին երկարացնել Եվրոպա և Կենտրոնական Ասիա տանող երթուղիները մինչև երկու ժամով: Իսրայելի նավերին արգելվում է մուտք գործել Թուրքիայի նավահանգիստներ, ինչը հետագայում մեկուսացնում է Իսրայելը լոգիստիկ առումով: Այս միջոցները մասամբ պատասխան էին Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուի կողմից 1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ինչը Անկարայում դիտվեց որպես Թուրքիայի ազգային ինքնության դեմ սադրիչ հարձակում:[1]
- **ՀԱՄԱՍ-ի և անվտանգության շուրջ լարվածություն (2025 թ. սեպտեմբեր)**: Իսրայելը մեղադրում է Թուրքիային ՀԱՄԱՍ-ի առաջնորդներին ապաստան տրամադրելու, նրանց հավաքագրումներ, ֆինանսավորում և հարձակումներ պլանավորել թույլ տալու մեջ: Այս մեղադրանքները սրվեցին 2025 թվականի սեպտեմբերի 11-ին Կատարում ՀԱՄԱՍ-ի պաշտոնյաների վրա Իսրայելի օդա-

յին հարվածից հետո, որի հետևանքով սպանվեց վեց մարդ, և Թուրքիայում մտավախություն առաջացավ, որ իրենք կարող են լինել հաջորդ թիրախը: Իսրայելի պաշտոնյաները, ներառյալ նախարարները, հայտարարել են, որ Թուրքիայում գտնվող ՀԱՄԱՍ-ի գործիչները «անպաշտպան չեն»: Թուրքիան հերքում է մեղադրանքները, բայց զգուշացնում է «տարածաշրջանային աղետի» մասին, եթե Իսրայելը հարվածի իր տարածքին՝ հղում անելով ՆԱՏՕ-ի անդամակցությանը և նոր «Պողպատե գմբեթ» հակաօդային պաշտպանության համակարգին:

Այսպիսով, վերջին ժամանակների երկուստեք լարվածության ֆոնին Իսրայելի՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ դիրքորոշման էվոլյուցիան դարձել է կիզակետ Թուրքիայի հետ նրա արդեն իսկ լարված հարաբերություններում: Տասնամյակներ շարունակ Երուսաղեմը խուսափել է ճանաչել Օսմանյան կայսրության կողմից Առաջին աշխարհամարտի ժամանակ հայերի համակարգված ոչնչացումը՝ առաջնահերթություն տալով Անկարայի հետ ռազմավարական գործընկերությանը: Սակայն Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն 2025 թվականի օգոստոսի 26-ին առաջին անգամ անձամբ ճանաչել է Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը (նաև ասորիների և հույների դեմ), ինչը պատմական քայլ էր Իսրայելի քաղաքականության համար: Այս հայտարարությունն արվել է ամերիկյան պողքաստի ժամանակ՝ Պատրիկ Բեթ Դավիդի հետ, ով հարցրել էր, թե ինչու Իսրայելը չի ճանաչել այդ ցեղասպանությունը: Նեթանյահուն պատասխանել է. «Ես հենց հիմա արեցի: Ահա» (I just did. Here you go): Նա նաև սխալմամբ նշել է, որ Իսրայելի խորհրդարանը (Քնեսեթը) արդեն ընդունել է համապատասխան բանաձև, թեև պաշտոնական ճանաչում չի եղել:[2]

Իսրայելի՝ այդ իրադարձությունները ճանաչելու դժկամությունը բխում էր իրական քաղաքականությունից: 1950-ականներից սկսած՝ Թուրքիան Իսրայելի միակ մուսուլմանական մեծամասնություն ունեցող դաշնակիցն էր՝ ապահովելով կարևոր շուկա զենքի արտահանման և հետախուզական տեղեկատվության փոխանակման համար՝ արաբական թշնամանքի պայմաններում:[3] 1982 թվականին Իսրայելը ճնշում գործադրեց Թել Ավիվում կայանալիք Հոլոքոստի և ցեղասպանության միջազգային կոնֆերանսի կազմակերպիչների վրա՝ բացառելու հայկական նիստերը՝ վախենալով Թուրքիայի պատասխան գործողություններից, որոնք կարող էին վտանգել Իրանից և Սիրիայից փախչող հրեա փախստականներին: Այն ժամանակվա արտգործնախարար Շիմոն Պերեսը տխրահռչակ կերպով 2001 թվականին մերժեց «Հայկական մեղադրանքները»՝ համարելով դրանք Հոլոքոստի հետ զուգահեռներ անցկացնելու փորձ:[4]

Այս ժխտումը պարզապես պասիվ չէր. Իսրայելի դիվանագետները ակտիվորեն ճնշում էին միջազգային ճանաչումը՝ Անկարայի հետ բարենպաստ հարաբերություններ հաստատելու համար: Ինչպես նշում է պատմաբան Էլդադ Բեն Ահարոնը, «Իսրայելը հայտնվեց Հայոց ցեղասպանության ժխտումը սատարելու ուշագրավ դիրքում»՝ Սառը պատերազմի վերջին շրջանում հարաբերությունները կարգավորելու համար:[5] Սակայն Իսրայելում հանրային կարծիքը հակված էր ճանաչմանը. 2007 թվականի հարցումը ցույց տվեց, որ իսրայելցիների 72%-ը կողմ է ճանաչմանը, նույնիսկ, եթե դա վտանգի Թուրքիայի հետ հարաբերությունները:

Հայաստան-Իսրայել հարաբերությունները միշտ եղել են այս խնդրի ստվերում: Դիվանագիտական կապեր հաստատվեցին 1992 թվականին, սակայն Երևանում դեսպանատուն չբացվեց Ադրբեջանի լոբբինգի պատճառով: Քնեսեթում օրինագծեր պարբերաբար առաջ էին քաշվում. 2011 թվականին աջակողմյան ծայրահեղական օրենսդիրը առաջարկեց ապրիլի 24-ը սահմանել Հայոց ցեղասպանության հիշատակի օր, սակայն այն չընդունվեց:[6] 2018 թվականին քվեարկությունը չեղարկվեց կոալիցիայի ընդդիմության պատճառով:[7] Ճնշումը մեծացավ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի 2021 թվականի ճանաչումից հետո, ընդդիմության առաջնորդ Յաիր Լապիդը խոստացավ «շարունակել պայքարը Իսրա-

յելի ճանաչման համար... մեր բարոյական պարտականությունն է՝ որպես հրեական պետություն»:[8] Իսրայելի պաշտոնական պատասխանն այն ժամանակ մեղմ էր՝ ճանաչել «սարսափելի տառապանք», բայց առանց «ցեղասպանություն» բառի:

2024 թվականին Իսրայել-Թուրքիա հարաբերությունները, որոնք ժամանակին եղել են մեկուսացման դեմ պայքարի հենասյուն, փլուզվել էին: Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մեղադրեց Իսրայելին «ցեղասպան վարքագծի» մեջ՝ համեմատելով նացիստական Գերմանիայի հետ, ինչը առաջ բերեց Իսրայելի պատասխանը՝ Հայոց ցեղասպանության հիշատակությունը: Արտգործնախարար Իսրայել Կացը 2024 թվականի հունվարին գրառում կատարեց X-ում. «Թուրքիայի նախագահ Էրդողանը, որի երկիրը Հայոց ցեղասպանության պատմություն ունի, այժմ պարծենում է Իսրայելին թիրախավորելու անհիմն պնդումներով»:[9] Իսկ արդեն Նեթանյահուի վերջին խոստովանությունից հետո Թուրքիայի արտգործնախարարությունը դատապարտեց այն որպես «քաղաքականորեն մոտիվացված» հնարք՝ Գազայի «հանցագործություններից» ուշադրությունը շեղելու համար, կանչելով Իսրայելի դեսպանին և փակելով օդային տարածքը Իսրայելի թռիչքների համար:

Նեթանյահուի հայտարարությունը առաջ բերեց Հայաստանի զգույշ գովասանքը, բայց նաև կոչեր՝ դադարեցնել զենքի վաճառքը Բաքվին, որը 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմում օգտագործել էր Իսրայելի անօդաչու սարքերը:

Նեթանյահուի ճանաչումը բարոյական և վաղուց սպասված շրջադարձ է Իսրայելի համար, բայց պատմությունն ընդդեմ Թուրքիայի զենք դարձնելով՝ այն սպառնում է հավերժացնել «ցեղասպանության դիվանագիտությունը»՝ վայրագությունները օգտագործելով լծակի, այլ ոչ թե արդարության համար: Սա ընդգծում է մի դաժան և հեգնալից իրողություն. Հոլոքոստի հիշողությունից ծնված պետությունն այժմ որպես դիվանագիտական զենք օգտագործում է մեկ այլ ցեղասպանության փաստը: Իրական հաշտեցումը պահանջում է ավելին, քան հայտարարությունները՝ այն պահանջում է առերեսվել ժխտման հետ, որտեղ էլ որ այն գոյություն ունենա՝ Ստամբուլից մինչև Երուսաղեմ: ■

Հղումներ

1 https://epravda.com.ua/rus/svit/turciya-prekratila-torgovlyu-s-izrailem-i-zakryla-porty-i-vozdushnoe-prostranstvo-810982/

2 https://x.com/patrickbetdavid/status/1960438882786246981

3 https://foreignpolicy.com/2019/04/24/israels-refusal-to-recognize-the-armenian-genocide-is-shameful-and-immoral-netanyahu-turkey-azerbaijan-yad-vashem-tsitsernakaberd/

4 https://www.timesofisrael.com/in-first-netanyahu-says-he-recognizes-armenian-genocide/

5 https://podcasts.ox.ac.uk/eldad-ben-aharon-supporting-denial-israels-foreign-policy-and-armenian-genocide

6 https://www.timesofisrael.com/in-first-netanyahu-says-he-recognizes-armenian-genocide/

7 https://www.euronews.com/2025/08/27/israels-prime-minister-benjamin-netanyahu-recognises-armenian-genocide-for-first-time

8 https://www.timesofisrael.com/israel-recognizes-terrible-suffering-of-armenians-doesnt-use-term-genocide/

9 https://armenianweekly.com/2024/01/16/israels-foreign-minister-tweets-the-term-armenian-genocide-too-little-too-late/

Արցախցիների վերադարձի հարցը և Ադրբեջանի դիրքորոշումը

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

Հարավային Կովկասի վերջին տասնամյակների ամենածանր հումանիտար աղետներից և մի պետության կողմից մյուսի նկատմամբ ցեղասպան քաղաքականության դրսևորումներից մեկը: Մի քանի օրվա ընթացքում ավելի քան 100.000 արցախահայեր, ենթարկվելով ցեղասպանության և բռնի տեղահանության, լքեցին իրենց պատմական բնակավայրերը՝ ապաստան գտնելով հիմնականում Հայաստանի Հանրապետությունում: Այս գործընթացը ոչ միայն մարդկային ողբերգություն էր, այլև միջազգային իրավունքի, տարածաշրջանային քաղաքականության և անվտանգային հավասարակշռության պահպանման լուրջ խնդիրների առջև կանգնեցրեց տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժերին:

Ադրբեջանի կազմակերպված էթնիկ զտումը, որը հիմնված էր երկարատև շրջափակման և ռազմական ագրեսիայի վրա, և հանգեցրել էր ողջ հայ բնակչության բռնի տեղահանմանը պատմական հայրենիքից, միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչվել է որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում: Օրինակ, Freedom House-ի 2024 թվականի զեկույցը հաստատում է, որ Ադրբեջանը կանխամտածված արշավ է իրականացրել Արցախը հայերից դատարկելու համար՝ ներառյալ շրջափակումը, որը հանգեցրել է սովի և հումանիտար ճգնաժամի: Այս աղետը ոչ միայն խախտել է միջազգային իրավունքը, այլև ցույց է տվել Ադրբեջանի իշխանության ռասիստական և ցեղասպան բնույթը, որը շարունակում է անպատիժ մնալ՝ հիմնված նավթային շահերի և աշխարհաքաղաքական խաղերի վրա:[1]

Հիմնական հարցերից մեկը, որ օրակարգում է մնում մինչ օրս, վերաբերում է արցախահայության վերադարձի հնարավորությանը: Արդյո՞ք նրանք կկարողանան վերադառնալ իրենց տները, ինչ պայմաններում և ինչ երաշխիքներով: Ինչպիսի՞ն է Ադրբեջանի պաշտոնական դիրքորոշումը այս հարցում, և ինչպե՞ս են արձագանքում միջազգային կազմակերպությունները: Այս հարցադրումները պահանջում են համակարգված և խորքային վերլուծություն, քանի որ դրանք առնչվում են ինչպես հումանիտար իրավունքին, այնպես էլ տարածաշրջանային կայունության հեռանկարին: 2025 թվականի դրությամբ, չնայած խաղաղության մասին խոսակցություններին, Ադրբեջանը շարունակում է խոչընդոտել վերադարձը՝ ոչնչացնելով հայկական մշակութային ժառանգությունը և կալանավորելով հայկական առաջնորդներին: Օրինակ, Ադրբեջանը դատավարություններ է իրականացնում Արցախի ռազմաքաղաքական էլիտայի, ներառյալ Ռուբեն Վարդանյանի դեմ, ինչը Human Rights Watch-ը որակել է որպես քաղաքական հետապնդում:[2] Այս ամենը ցույց է տալիս Բաքվի իշխանության հակահայկական քաղաքականությունը, որը ոչ միայն խախտում է միջազգային իրավունքը, այլև խոչընդոտում է տարածաշրջանային խաղաղությանը:

Միջազգային իրավունքի շրջանակում «վերադարձի իրավունքը» հանդիսանում է հիմնարար սկզբունք: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 13-րդ հոդվածը հստակ ամրագրում է յուրաքանչյուրի իրավունքը՝ վերադառնալու իր երկիր: Բացի այդ, ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին 1951 թ. կոնվենցիան և մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր պահանջում են, որ պետություններն ապահովեն տեղահանվածների անվտանգ և կամավոր վերադարձը: Արցախի դեպքում այս իրավունքը հատկապես կարևոր է, քանի որ տեղահանումը տեղի է ունեցել որպես էթնիկ զտման հետևանք: Միջազգային քրեական դատարանը և ՄԱԿ-ի հանձնաժողովները բազմիցս դատապարտել են նման գործողությունները, ինչպես օրինակ՝ արվել է 2023 թվականի ՄԱԿ-ի առաքելության զեկույցով, որով արձանագրվել է, որ գրեթե ամբողջ հայկական բնակչությունը ստիպված է եղել մազապուրծ փախչել Ադրբեջանի սպառնալիքների ներքո:[3]

Արցախի դեպքում հարցը բարդանում է երկու սկզբունքների հակադրման պարագայում:

Մի կողմից, Ադրբեջանը հայտարարում է տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայությունը՝ շեշտելով, որ Արցախն իր անբաժան տարածքն է: Մյուս կողմից, արցախահայերն իրենց պայքարը հիմնավորել են ինքնորոշման իրավունքով, որը ևս ամրագրված է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների շարքում: Այս երկու սկզբունքների բախումը հանգեցրել է միջազգային հարթակներում երկակի մոտեցումների. միջազգային կազմակերպություններն արձանագրում են տեղահանման փաստը և իրավունքի խախտումը, սակայն խուսափում են Ադրբեջանի նկատմամբ պարտադրանքից՝ ելնելով տարածաշրջանային լայն քաղաքական հաշվարկներից: Ադրբեջանի դիրքորոշումն այստեղ հատկապես քննադատելի է, քանի որ այն հիմնված է ոչ թե իրավունքի, այլ ուժի վրա՝ անտեսելով հայկական ինքնորոշման պատմական և իրավական հիմքերը: Օրինակ, 2024 թվականի զեկույցներում Human Rights Watch-ը նշում է, որ Ադրբեջանը շարունակում է խախտել հայերի իրավունքները՝ ներառյալ կոտտանքներն ու անօրինական կալանքները:[4] Այս ամենը ապացուցում է Բաքվի հակաժողովրդավարական ռեժիմի բնույթը, որը տարածքային ամբողջականությունն օգտագործում է որպես ծածկոց ցեղասպան քաղաքականության համար:

Ինչ վերաբերվում է Ադրբեջանի ղեկավարությանը, ապա նա 2020 թվականից ի վեր մշտապես շեշտում է, որ Արցախը և հարակից բոլոր շրջանները վերադարձվել են Բաքվի լիակատար վերահսկողության ներքո, իսկ իրականում, անժխտելի փաստ է, որ Արցախի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի որոշ հատվածներ բռնազավթվել են թուրք-ադրբեջանական տանդեմի կողմից:

Արդեն 2023 թվականի սեպտեմբերյան գործողություններից հետո ադրբեջանական իշխանությունները հայտարարեցին, որ Արցախում իբրև թե «վերականգնվել է սահմանադրական կարգը»: Այս դիրքորոշման հիմքում ընկած է այն համոզմունքը, որ Ադրբեջանի սահմանադրական և իրավական դաշտում այլևս որևէ բացառություն կամ ինքնավար կարգավիճակ չի կարող լինել: Սակայն այս հայտարարությունները մեծ կեղծիք են, քանի որ Ադրբեջանը շարունակում է պնդել, որ հայերի տեղահանումը «կամավոր» է եղել, չնայած միջազգային ապացույցներին, որոնք հակառակն են փաստում: Օրինակ, 2025 թվականի հուլիսին Ադրբեջանը կրկին կրկնել է այս պնդումը՝ անտեսելով 100.000-ից ավելի տեղահանվածների վկայությունները:[5]

Ադրբեջանական պաշտոնական հայտարարություններում շեշտադրվում է «Մեծ վերադարձ» ծրագիրը, սակայն այն վերաբերում է հիմնականում Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում ադրբեջանցիների վերաբնակեցմանը: Իսկ հայերի վերադարձը Բաքվի կողմից չի դիտարկվում առանձին քաղաքա-

կան օրակարգում: Թեև հայտարարություններում նշվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի կարող է ապրել Ադրբեջանի սահմաններում հավասար իրավունքներով, գործնականում որևէ քայլ չի ձեռնարկվել հայ բնակչության վերադարձի ուղղությամբ: Միևնույն ժամանակ պետական քարոզչական խոսույթում հաճախ շեշտադրվում է, որ Արցախի տարածքը պետք է ինտեգրվի ադրբեջանական հասարակական և մշակութային միջավայրին: Սա փաստում է, որ Բաքուն հայկական ինքնության պահպանմամբ վերադարձի որևէ տարբերակ չի նախատեսում: Ավելին, Ադրբեջանն ակտիվորեն ոչնչացնում է հայկական մշակութային ժառանգությունը՝ օրինակ, 2024 թվականի ապրիլին արբանյակային լուսանկարները ցույց են տվել Քարինտակ գյուղի և Սուրբ Հովհաննես եկեղեցու ամբողջական ոչնչացումը: Այս գործողությունները ոչ միայն խախտում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիաները, այլև ցույց են տալիս Ադրբեջանի ցեղասպան մտադրությունները՝ ջնջել հայկական հետքը Արցախից:[6] Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հայտարարությունները, ինչպես «Մեծ վերադարձ» ծրագրի մասին, որտեղ նա խոսում է ադրբեջանցիների վերաբնակեցման մասին, բայց անտեսում հայերին, հաստատում են այս ռասիստական քաղաքականությունը:

Ասվածի համատեքստում հետաքրքիր է միջազգային կառույցների արձագանքը, որը բազմաշերտ է և հիմնականում մարդասիրական բնույթի, սակայն, անօգուտ: ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակն արձանագրել է զանգվածային տեղահանման փաստը և մեկնարկ է տվել հատուկ ծրագրի՝ աջակցելու տեղահանվածներին Հայաստանում: Եվրոպական միությունը և մի շարք պետություններ՝ Ֆրանսիան, Գերմանիան, Նիդերլանդները, հայտարարել են ֆինանսական և հումանիտար աջակցության ծրագրերի մասին: Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, ինչպիսիք են Human Rights Watch-ը և Amnesty International-ը, իրենց զեկույցներում ընդգծել են, որ տեղի ունեցածը հանգեցրել է էթնիկ զտման և զանգվածային իրավունքների խախտման: Օրինակ, Եվրո-

պական միությունը 2023 թվականից ի վեր տրամադրել է ավելի քան 17,5 միլիոն եվրո հումանիտար օգնություն տեղահանվածներին, իսկ Ֆրանսիան՝ 7 միլիոն եվրո 2023 թվականին՝ աջակցելով ՀԿ-ներին և ՄԱԿ-ի գործակալություններին: ԱՄՆ-ը ևս դատապարտել է տեղահանումը, բայց չի կիրառել խիստ պատժամիջոցներ Ադրբեջանի դեմ:[7]

Այնուամենայնիվ, քաղաքական մակարդակում արձագանքը զուսպ է: Արևմտյան պետությունների մեծ մասը խուսափում է ուղղակի պարտադրանքից Ադրբեջանին և առաջնահերթ է համարում տարածաշրջանային խաղաղության ընդհանուր օրակարգը: Այդ պատճառով արցախահայության վերադարձի հարցը չի դառնում միջազգային ճնշման առարկա, այլ թողնվում է կողմերի երկկողմ բանակցությունների և միջնորդավորված գործընթացների դաշտում: Սակայն այս զուսպ մոտեցումը քննադատելի է, քանի որ այն թույլ է տալիս Ադրբեջանին շարունակելու իր ցեղասպան քաղաքականությունը: Օրինակ, 2025 թվականի օգոստոսին ԱՄՆ-ի միջնորդությամբ ստորագրված համաձայնագիրը բացառում է հայերի վերադարձի իրավունքը, ինչը ցույց է տալիս, որ միջազգային հանրությունը, չնայած հումանիտար օգնությանը, չի կատարում իր պարտավորությունները՝ թույլ տալով Ադրբեջանին խուսափել պատասխանատվությունից:

Արցախահայության վերադարձը ներկայում պայմանավորված է մի շարք բարդ խոչընդոտներով: Նախ և առաջ բացակայում են անվտանգության երաշխիքները. Արցախի տարածքում տեղակայված են ադրբեջանական զինված ուժերը, և տեղահանված բնակչությունը գիտի, որ վերադառնալու դեպքում իր կյանքը և գույքը պաշտպանված չեն լինի: Բացի այդ, Ադրբեջանի քաղաքական օրակարգում հայկական բնակչության վերադարձի ուղղությամբ քայլեր ձեռնարկելու մտադրություն չկա:

Խորն է նաև վստահության ճգնաժամը. տասնամյակների հակամարտությունը, սեպտեմբերյան իրադարձությունների ծանր հետևանքները և բռնաճնշումների վախն արցախահայությանը զրկում են վերադարձի հարցում վստահությունից: Հետագա խոչընդոտ է տնտեսական և ենթակառուցվածքային իրավիճակը. բազմաթիվ բնակավայրեր վնասվել են, իսկ իրականացվող վերակառուցման ծրագրերը նախատեսված են հիմնականում ադրբեջանցի վերաբնակիչների համար: Վերջապես, առկա է նաև մշակութային ու ինքնության հարց. Բաքուն որևէ երաշխիք չի տալիս լեզվի, կրոնի և մշակութային ինքնության պահպանման համար, ինչն Արցախի հայերի վերադարձը վերածում է ոչ թե իրավունքի իրացման, այլ միատարրացման քաղաքականության բաղադրիչի: Ադրբեջանի կողմից եկեղեցիների և գերեզմանոցների ոչնչացումը, ինչպես 2023 թվականի զեկույցներում նշված է, հաստատում է այս մտադրությունները՝ ներառյալ հարյուրավոր մշակութային հուշարձանների ոչնչացումը:[8] Այս խոչընդոտները ստեղծված են Ադրբեջանի կողմից՝ որպեսզի կանխեն հայերի վերադարձը և ամրապնդեն իրենց բռնազավթումը:

Եթե արցախահայության վերադարձի իրավունքը չիրացվի, ապա տարածաշրջանում կարող է ձևավորվել նոր ստատուս քվո, որտեղ պատմական հայկական բնակչությունը լիովին բացակայում է:

Սա կնշանակի Հարավային Կովկասի բազմազանության կորստի խորացում և երկարաժամկետ լարվածության պահպանում: Միևնույն ժամանակ, Ադրբեջանի կողմից իրականացվող վերաբնակեցման քաղաքականությունը, որը ենթադրում է ադրբեջանցիների տեղափոխում բռնազավթված հայկական բնակավայրեր, կարող է միջազգային իրավունքի տեսանկյունից գնահատվել որպես բնակչության փոխարինում մեկը մյուսով:

Նման գործընթացները պատմության ընթացքում հաճախ հանգեցրել են նոր հակամարտությունների և խորացրել անվստահությունը: Օրինակ, 2025 թվականի այսպես կոչված «խաղաղության» համաձայնագրերը, որոնք անտեսում են վերադարձի իրավունքը, կարող են հանգեցնել նոր լարվածության, ինչպես նշվում է Newsweek-ի հոդվածում՝ առանց արդարության խաղաղությունը միայն ամրապնդում է ողբերգությունը:[9]

Տարածաշրջանային տերությունների շահերը ևս մեծապես ազդում են խնդրի վրա: Ռուսաստանը, Թուրքիան, Իրանը և Արևմուտքը փորձում են առաջ մղել իրենց ռազմավարական օրակարգերը, ինչի հետևանքով արցախահայության վերադարձի հարցը հաճախ վերածվում է քաղաքական առևտրի գործիքի: Եթե միջազգային հանրությունը չձևավորի միասնական մոտեցում, ապա խնդիրը կմնա չլուծված՝ շարունակելով լարվածություն սերմանել: Ամենաթողությունը Ադրբեջանին հնարավորություն կտա շարունակելու ագրեսիան, ինչը սպառնալիք է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ տարածաշրջանի կայունությանը:

Ըստ էության, արցախահայերի վերադարձի հարցը շարունակում է մնալ տարածաշրջանի ամենախնդրահարույց հարցերից մեկը: Թեև միջազգային իրավունքը հստակ ամրագրում է տեղահանվածների վերադարձի իրավունքը, դրա իրագործումը կախված է ոչ միայն Ադրբեջանի քաղաքական կամքից, այլև միջազգային հանրության ճնշումից և ներգրավվածությունից: Առանց անվտանգության երաշխիքների, միջազգային դիտորդական մեխանիզմների և մշակութային ինքնության պահպանման ուղիների վերադարձը գործնականում անհնար է: Ադրբեջանի ներկայիս քաղաքական դիրքորոշումը ցույց է տալիս, որ Բաքուն չի դիտարկում հայկական բնակչության հատուկ իրավունքները և չի նախաձեռնում նրանց վերադարձի գործընթաց: Ավելին, Ադրբեջանի գործողությունները, ինչպես մշակութային ժառանգության ոչնչացումը և Արցախի ռազմաքաղաքական էլիտայի կալանքը, պահանջում են միջազգային պատժամիջոցներ՝ որպեսզի կանխվի հետագա ագրեսիան:

Հետևաբար, խնդիրը մնում է ոչ միայն հումանիտար, այլև քաղաքական ու իրավական օրակարգի առանցքում: Այն լուծելու համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում՝ միջազգային միջնորդների ակտիվ մասնակցությամբ, իրավական պարտավորությունների հստակեցմամբ և անվտանգության նոր համակարգերի ձևավորմամբ: Առանց այդ քայլերի արցախահայության վերադարձը կմնա տեսական իրավունք, բայց ոչ գործնական իրողություն: Արցախի հայերը, ովքեր պահպանում են իրենց ինքնությունը և պայքարը, արժանի են արդարության, և միջազգային հանրությունը պետք է վերջ դնի Ադրբեջանի անպատժելիությանը՝ ապահովելով արցախահայության անվտանգ վերադարձը:

Հղում

1. NEW REPORT: Azerbaijani Regime Ethnically Cleansed Nagorno-Karabakh According to International Fact-Finding Mission, https://freedomhouse.org/article/new-report-azerbaijani-regime-ethnically-cleansed-nagorno-karabakh-according-international, 11.11.2024 (Acc. 17.09.2025).
2. Tensions Between Armenia and Azerbaijan, https://www.cfr.org/global-conflict-tracker/conflict/nagorno-karabakh-conflict, https://www.cfr.org/global-conflict-tracker/conflict/nagorno-karabakh-conflict, 12.08.2025, (Acc. 17.09.2025).
3. The United States Joined the Following Joint Statement at the 54th Session of the Human Rights Council, https://geneva.usmission.gov/2023/10/11/joint-statement-on-the-situation-in-nagorno-karabakh/, 11.10.2023, (Acc. 17.09.2025).
4. Driven by Fear from Nagorno-Karabakh, https://www.hrw.org/news/2023/10/17/driven-fear-nagorno-karabakh, 29.09.2023, (Acc. 17.09.2025).
5. Azerbaijan repeats “voluntary exodus” claim, https://armenianweekly.com/2025/07/30/azerbaijan-repeats-voluntary-exodus-claim/, 30.07.2025, (Acc. 17.09.2025).
6. Church, Entire Village ‘Erased’ In Azerbaijan’s Recaptured Nagorno-Karabakh, https://www.rferl.org/a/azerbaijan-armenia-nagorno-karabakh-heritage-destruction-karintak-dasalti/32918998.html, 24.04.2024, (Acc. 17.09.2025).
7. International support for Armenian refugees from Nagorno-Karabakh, https://commonslibrary.parliament.uk/research-briefings/cdp-2024-0059/, 14.03.2024, (Acc. 17.09.2025).
8. Chapter 6. Attacks on cultural heritage, https://humanrightsnetwork.shorthandstories.com/we-are-no-on/attacks-on-cultural-heritage/index.html, 08.10.2020, (Acc. 17.09.2025).
9. Without Return and Justice, Armenia-Azerbaijan Peace Deal Cements Tragedy for Nagorno-Karabakh Armenians | Opinion, https://www.newsweek.com/without-return-justice-armenia-azerbaijan-peace-deal-cements-tragedy-nagorno-karabakh-armenians-2118931, 26.08.2025, (Acc. 17.09.2025).

Արցախի հայկական պատմական ժառանգության ոչնչացումը միջազգային իրավունքի լույսի ներքո

Արմինե Տիգրանյան
Պատմական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի դասախոս

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը, Լաչինի միջանցքի 9-ամսյա շրջափակումը, 2023 թվականի սեպտեմբերյան ռազմական ագրեսիան, պատերազմական հանցանքները, էթնիկ զտումներն ու ցեղասպանական գործողությունները հանգեցրին իրենց պատմական հայրենիքից ավելի քան 150 հազար արցախահայերի բռնի տեղահանմանը: Հայ ինքնության դեմ ուղղված համակարգված հարվածները, Արցախի մշակութային ժառանգության՝ հատկապես քրիստոնեական եկեղեցիների ոչնչացումը, խեղաթյուրումն ու դրանց աղվանացման նպատակով Ադրբեջանի կողմից միջազգայնորեն իրականացվող գործողությունները վկայում են, որ ՄԱԿ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների դրույթների կիրառման, ինչպես նաև ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցողի մանդատի ներքո մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության մեխանիզմներն այսօր ունեն խիստ սահմանափակ արդյունավետություն: Ավելին, միջազգային հանրության կողմից Արցախի ժողովրդի իրավունքների խախտումների և դրանց ծանր հետևանքների անտեսումը, միջազգային իրավունքի բազմաշերտ նորմատիվ հիմքերի ոչ բավարար գործարկումը և դատապարտման մեխանիզմների խոցելիությունը վկայում են միջազգային իրավունքի ճգնաժամի մասին:

Այս գործընթացների հետևանքով, բռնի տեղահանվածների սոցիալ-տնտեսական խնդիրներից զատ, հատկապես խոցելի է դառնում մշակույթի իրավունքը, որը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով և ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական, մշակութային իրավունքների» միջազգային դաշնագրով երաշխավորված մարդու հիմնարար իրավունքն է: Հոդվածում քննության են ենթարկվում Ադրբեջանի կողմից արցախահայերի մշակույթի իրավունքի բազմակողմ խախտումները, այդ թվում՝ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման, հայկական եկեղեցիների աղվանացման, քրիստոնեության արժեքների և պատմական ճշմարտության խեղաթյուրման նպատակով միջազգային միջոցառումների կազմակերպման և դեպի Արցախի սրբավայրեր ուխտագնացության իրավունքի խաթարման համատեքստում:

Հոդվածում վերլուծվում են նաև Ադրբեջանի ստանձնած միջազգային պարտավորությունների խախտումները՝ մասնավորապես բռնի տեղահանված անձանց մշակութային ինքնության պահպանման, կրոնական ազատության և մշակույթի իրավունքի իրացման ոլորտներում՝ բացահայտելով միջազգային իրավունքի նորմատիվ դաշտի և դրա գործնական կիրառման միջև խոր ճեղքը:

Նախաբան

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով՝ Արցախի քաղաքացիական ենթակառուցվածքների, մշակութային կառույցների թիրախավորման, խաղաղ բնակչության շրջանում սպանությունների, գերեվարության, վախի, հուսալքության և ռասայական խտրական վերաբերմունքի հետևանքով բռնի տեղահանվեց տարածաշրջանի էթնիկ հայությունը՝ շուրջ 100.600 մարդ:[1] Այս գործընթացներին նախորդել և ամբողջական տեղահանությանը նպաստել էին դեռևս 2020 թվականին տեղի ունեցած վեցշաբաթյա պատերազմը, Շուշիի, Հադրութի և Արցախի այլ շրջանների բնակչության բռնի տեղահանումը, Լաչինի միջանցքի 10-ամսյա շրջափակումը[2], ինչպես նաև մշակութային ժառանգության համակարգային ոչնչացումները, յուրացման և անհանդուրժողականության չդադարող մի շարք այլ գործողություններ:

Ադրբեջանի պետական, նպատակամիտված այս քաղաքականության իրագործմամբ արցախահայերը տարանջատվել են իրենց սոցիալ-մշակութային արժեքներից, զրկվելով պատմական հայրենիքի՝ Արցախի բնության, հուշարձանների, համայնքի և մշակութային լանդշաֆտի հետ կապված գիտելիքի հետ հաղորդակցվելու, այն յուրարցնելու և ապագա

սերունդներին փոխանցելու հնարավորությունից: Իսկ Արցախի տարածքի շուրջ 5000-ից ավելի պատմական հուշարձաններից բռնի հեռացումը, դրանց գոյությանը սպառնացող ուղղակի վտանգը, արդեն իսկ ոչնչացված ու պղծված բազմաթիվ արժեքներն անհաղթահարելի մարտահրավերներ են ստեղծել արցախահայերի ինքնության ամբողջականության պահպանության համար:

Թվում է, թե միջազգային կանոնակարգերի արդյունավետ գործադրման պարագայում պետք է կանխվեին Ադրբեջանի մշակութասպան գործողությունները, և Արցախի մշակութային ժառանգությանը չպետք է հասցվեր այդ ահռելի վնասը: Պետք է նկատել, որ թեպետ մշակույթի ոչնչացման կանխարգելման խնդիրները լայնորեն քննարկվել են տեսական, քաղաքական, իրավական ու միջազգային ասպարեզներում, թեև օրենքներ, կոնվենցիաներ են ընդունվել, բայց մի կողմից՝ ոլորտի բացերը, իսկ մյուս կողմից՝ միջազգային արդյունավետ գործիքակազմի բացակայությունը «առիթ են տվել» Ադրբեջանին՝ չհարգելու այդ կանոնները: Այս համատեքստում անպատժելիության հետևանքով Ադրբեջանի համար պարարտ հող է ստեղծվում նոր հանցագործությունների իրականացման և արդեն իսկ արվածները «լեգիտիմացնելու» համար: Բացի այդ, գործնականում մենք տեսնում ենք, որ Ադրբեջանը շարունակում է ոչնչացնել ու յուրացնել հայկական ժառանգությունը՝ բնաջնջելով պատմական հետքն Արցախից, իսկ միջազգային մշակութապահպան հանրույթն ի վիճակի չէ կասեցնել այդ հանցագործությունները:

Արցախի ժողովրդի մշակույթի իրավունքի երաշխիքները և դրանց խախտման տեսա-իրավական շրջանակը

21-րդ դարասկզբին մշակույթի իրավունքի հայեցակարգն ինտեգրվեց ժառանգության պահպանության համակարգին՝ ժառանգության ուղղակի պաշտպանությունից անցում կատարելով դեպի վերջինիս պաշտպանությունը, որպես մարդու մշակութային ինքնության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքի:[3] 2009 թվականին ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային» իրավունքների 1966 թվականի միջազգային դաշնագրի թիվ 21 ընդհանուր մեկնաբանության առանցքում հայտնված հիշյալ գաղափարը. «Անհնար է տարանջատել ժողովրդի մշակութային ժառանգությունը հենց ժողովրդից և նրա իրավունքներից»[4] մշակութային ժառանգությունը կապեց դրա ստեղծման աղբյուրի հետ:[5] Եվ մարդու իրավունքների տեսանկյունից՝ ժառանգությունը կարևորվեց ոչ միայն ինքնին, այլև՝ անհատների, խմբերի ու համայնքի կյանքում ունեցած խորքային նշանակության, ինքնության պահպանման գործընթացներում դերակատարում ունենալու սկզբունքի համաձայն:[6] Հետագա տարիներին հիմնավորվեց այս կապը ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ խոսնակների զեկույցներում,[7] տեսաբանների հետազոտություններում:[8] Իսկ 2009 թվականի ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի» կողմից ընդունված «Մշակութային կյանքին յուրաքանչյուրի մասնակցության» թիվ 21 ընդհանուր մեկնաբանության,[9] ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2001 թվականի «Մշակութային բազմազանության մասին»[10] և 2007 թվականի Ֆրիբուրգի հռչակագրերում արդեն ներկայացվեցին մշակույթի իրավունքի պաշտպանության նորմերը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մշակույթի իրավունքի համընդհանուր երաշխիքը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ» հռչակագրի 27-րդ հոդվածն է՝ «Յուրաքանչյուր ոք ունի համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու,[11] արվեստը վայելելու, գիտական առաջընթացի և դրա արդյունքներից օգտվելու իրավունք» ամրագրումով:[12]

Մշակույթի իրավունքի քննության առանցքային աղբյուր է նաև ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային» իրավունքների միջազգային դաշնագիրը, իր 15-րդ հոդվածով, որի 1/ա կետով մշակույթի իրավունքը սահմանվում է որպես «...յուրաքանչյուր անհատի՝ իր մշակութային կյանքին մասնակցելու իրավունք»:[13]

Դաշնագրի 15-րդ հոդվածի 1/ա կետում նշված **«յուրաքանչյուր»** տերմինը, համաձայն ՄԱԿ-ի թիվ 21 ընդհանուր մեկնաբանության, կարող է ներառել ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ իրավունքներ: Հետևաբար, մշակութային իրավունքները կարող են իրացվել անձի կողմից և՛ որպես անհատ և այլոց հետ՝ համայնքի կամ խմբի ներսում:[14]

Մասնագետների պնդմամբ **«մշակութային կյանք»-ը** սերտորեն կապված է «մշակույթ» եզրի բնութագրերի հետ՝ «Մշակութային կյանք»-ի բացատրության տիրույթում «մշակույթ»-ը սահմանելով որպես անցյալ, ներկա և ապագա ունեցող կենդանի, պատմական, դինամիկ և զարգացող գործընթաց»:[15]

Անդրադառնալով մշակութային կյանքին **«մասնակցության»** տերմինին, հրամայական է ընդգծել, որ այն գերազանցում է պասիվ ներգրավվածությունը, ենթադրելով ժառանգության մշակութային

հարստացման գործընթացներում համակողմանի ներգրավվածության, **հասանելիության, ուղղակի մասնակցության և ներդրման հնարավորությունը:**[16]

Մշակութային կյանքին **հասանելիությունը** համայնքի կենսակերպին հետևելու, մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու, տեղեկատվության կամ հաղորդակցության միջոցով կրթություն ստանալու իրավունքն է:[17] Ավելին, այն ներառում է սեփական մշակութային ինքնությանը համապատասխան կրթություն ստանալու իրավունքները:[18] Վերջինիս բաղադրիչ է նաև մշակութային ժառանգությանը ֆիզիկական հասանելիության ու ժառանգություն ստեղծած բարիքներից օգտվելու իրավունքը:[19]

Ինչ վերաբերում է մշակութային կյանքին **մասնակցության գործընթացին, ապա այն** ներառում է յուրաքանչյուրի իրավունքը՝ միայնակ կամ համայնքի հետ ազատ գործելու, իր ինքնությունն իրացնելու, հասարակության տարբեր գործընթացներին (ներառյալ քաղաքական, տնտեսական սոցիալական) մասնակցելու, մշակութային պրակտիկաներով զբաղվելու իրավունքը:[20]

Անդրադառնալով **մշակութային կյանքում ներդրում ունենալու իրավունքին,** նշենք, որ այն համայնքի հոգևոր, նյութական, մտավոր և զգացմունքային բարիքների **ստեղծմանը** ներգրավվելու յուրաքանչյուրի իրավունքն է: Այստեղ պետք է հատուկ նկատի ունենալ, որ ներդրման գործընթացը բովանդակում է նաև համայնքի զարգացմանը,[21] ժառանգության բացահայտմանը, մեկնաբանմանը, պահպանմանը մասնակցելու,[22] ինչպես նաև արտահայտվելու, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքները:[23] Հարկ է ընդգծել, որ մշակույթի իրավունքի պաշտպանությունը ներառում է նաև սեփական արժեքների վերաբերյալ գիտելիքի հասանելիությունը, դրանց պահպանումը, իսկության ասպեկտների չխեղաթյուրումը:

Մշակութային իրավունքի մասնակցության, հասանելիության և ներդրման կոնցեպտի ուսումնասիրությամբ կարող ենք հաստատագրել, որ մարդու իրավունքները, տարածվելով բոլորի վրա, վերաբերում են նաև 120.000-ից ավել արցախահայերից յուրաքանչյուրին, ու Ադրբեջանի կողմից խտրական գործելակերպի բացակայության պայմաններում կարող էին իրացվել անհատապես և կոլեկտիվ կերպով Արցախի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելով:

Եվ չնայած մշակույթի իրավունքի հանդեպ հարգանքը նաև պարտավորություն է՝ ըստ միջազգային իրավունքի նորմերի,[24] և Հաագայի Արդարադատության միջազգային դատարանն ընդունել է, որ մարդու հումանիտար իրավունքները կիրառելի են որպես «lex specialis» և գործում են որպես միջազգային սովորութային իրավունք,[25] իրականությունն այն է, որ Ադրբեջանը չի հարգում ինչպես ժառանգության, այնպես էլ այն կրող մարդկանց պաշտպանության իրավունքը:

Մշակութային ժառանգության ոչնչացումը որպես մշակույթի իրավունքի խախտում: Միջազգային շատ փաստաթղթերում ժառանգության ոչնչացումը դիտարկվում է որպես մարդու մշակույթի իրավունքի խախտում.[26] դրանք հաստատում են, որ հուշարձաններին հասցված վնասը, չսահմանափակվելով նյութական և ոչ նյութական ասպեկտներով և դուրս գալով դրանց շրջանակներից, ներառում է նաև մարդկանց հասցված վնասը:[27] ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցող Կարիմա Բենունը նշում է. «Ժառանգության վրա հարձակումները նախ և առաջ հարձակումներ են մարդկանց և նրանց իրավունքների վրա»,[28] իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր տնօրեն Իրինա Բոկովան պնդում է, որ «կարիք չկա ընտրություն կատարելու կյանքեր փրկելու և մշակութային ժառանգությունը պահպանելու միջև. դրանք [միմյանցից] անբաժան են»:[29] Նա նաև հավելում է, որ ժառանգության ոչնչացում նշանակում է «երկրորդ անգամ սպանել ժողովրդին»:[30] Այսպիսի մոտեցմամբ՝ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման հետևանքները, դուրս գալով ֆիզիկական ոլորտից՝ խոր արձագանք են գտնում արցախահայության ինքնության տիրույթում՝ համարվելով նաև մշակույթի, ինքնորոշման, ինքնարտահայտման իրավունքների խախտումներ:

Ադրբեջանի կողմից արցախահայերի մշակույթի իրավունքի բազմակողմ խախտումները

Արցախահայերի մշակույթի իրավունքը Ադրբեջանի կողմից խախտվում է մի քանի հիմնական ուղղություններով.

- մշակութային ժառանգության ոչնչացում,
- մշակութային ժառանգության յուրացում (մշակութային ժառանգության աղվանացում, իսլամացում, ադրբեջանականացում, թյուրքացում և այլն)
- ապատեղեկատվության տարածում, հայկական մշակութային ժառանգության խեղաթյուրման միջազգային ծրագրեր,
- դեպի Արցախի սրբավայրեր «մուտքի» և հաղորդակցման սահմանափակում:

Արցախի մշակութային ժառանգության ոչնչացումը

Մշակութային ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի կողմից կիրառվող քաղաքականություն է, որով փորձում է հիմնահատակ ոչնչացնել, կամ մասնակիորեն վնասել Արցախի հայկական ժառանգությունը, այդ թվում՝ Արցախի եկեղեցիները, խաչքարերը, Արցախի անկախության շրջանի հուշարձանները, Արցախյան ազատամարտին, Հայոց ցեղասպանությանն ու Հայրենական պատերազմին նվիրված հուշարձաններն ու հուշահամալիրները, պատմական գերեզմանոցները, ամբողջական թաղամասերը, գյուղերը, թանգարանները և այլն:

Եկեղեցիների ոչնչացմամբ Ադրբեջանը վնասում է արցախահայերի մշակույթի իրավունքը՝ խաթարելով հոգևոր կապն այդ արժեքների հետ, զրկելով ծեսերի և աղոթքների տարածքներից, ծիսական գործունեություն ծավալելու իրավունքից: Այդպիսի ժառանգության ոչնչացման ակնհայտ դեպքերից էին դեռևս 2020 թվականին Մեխակավան բնակավայրում Ջորավոր Սուրբ Աստվածածին, Մոխրենիս գյուղի Սուրբ Սարգիս, Շուշիի Կանաչ ժամի՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ, Մարիամաձորի Սուրբ Մինաս, Բերձորի Սուրբ Համբարձում եկեղեցիների հիմնահատակ ավերումը, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու թիրախավորումը, գմբեթի ավերումը, ձևախեղումը, շարունակվող վնասը, այդ թվում՝ եկեղեցու վերականգնման քողի տակ արձանագրությունների ջնջումը, Քրիստոսի պատկերաքանդակի, խաչանշանների ոչնչացումը և այլն:[31]

Հոգևոր ժառանգությանը հասցված էական վնաս է նաև Ադրբեջանի կողմից 19-րդ դարի Շուշիի Մեղրեցոց Սբ Աստվածածին եկեղեցու պատմական շերտերը աղբակույտի վերածելը, Վանքասարի 7-րդ դարի եկեղեցու խաչի հեռացումը, Ստեփանակերտի խաչի տապալումը, շինարարական միջամտությունների հետևանքով Ծարի Սուրբ Սարգիս և Սուրբ Գրիգոր միջնադարյան եկեղեցիների եզակի արձանագրություններ-խաչաքանդակների քերումը և այլն:

Եկեղեցիներից զատ, Ադրբեջանի հայատյացության քաղաքականության օրակարգի առաջնային թիրախներից են խաչքարերը: Դրանց ոչնչացման ակնհայտ դեպքերից են 2020 թվականին Հադրութի շրջանի Առաքել գյուղի, Հադրութի քաղաքի ազատամարտիկների հուշահամալիրի, Լաչինի պատմական գերեզմանոցի 14-րդ դարի եզակի խաչքարի, ինչպես նաև 15-16 դարերով թվագրվող մի շարք խաչքարերի ոչնչացումը: Բացի այդ, Մատաղիսում ավերվել են «Ղարաբաղյան պատերազմի վետերանների միության» մատուռն ու շրջակա խաչքարերը, ոչնչացվել՝ Շուշիի հայ-հունական հին գերեզմանոցի 12-13-րդ դարերի եզակի խաչքարերը, Հադրութի շրջանի Ուխտաձորի, Որոտան քաղաքի Արցախյան ազատամարտին նվիրված խաչքարերը: Կավաքավանք եկեղեցու տարածքից անհետացել է դեռևս 1995 թվականին տեղադրված խաչքարը: Մարտակերտի

Դանիել Վարուժան փողոցում ոչնչացվել է 2021 թվականի հոկտեմբերին արցախյան ազատամարտի հերոսների հիշատակին կանգնեցված հուշարձան-խաչքարը, ինչպես նաև Քաշաթաղի Աղանուս գյուղի աղբյուր-հուշարձանին կից՝ երկու խաչքարերը և այլն:[32]

Խաչքարերի ոչնչացման հետ կապված հարկ է նշել, որ «Հայկական խաչքարերի արվեստը. խաչքարերի սիմվոլիզմն ու վարպետությունը» 2010 թվականից ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում»՝ ընդգծելով վերջինիս համընդհանուր մշակութային արժեքի կարգավիճակը:[33] Համաձայն «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. համաձայնագրի լրացուցիչ՝ 1999 թ. ընդունված երկրորդ արձանագրության սկզբունքների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական ցանկում ընդգրկված արժեքները՝ ներառյալ խաչքարային ողջ մշակույթը, ունեն ուժեղացված պաշտպանություն: Իսկ համաձայն Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրության 12-րդ հոդվածի, բռնազավթված տարածքներում արձանագրության կողմ պետությունը, դիցուք՝ Ադրբեջանը, պետք է ապահովի ուժեղացված պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքների անձեռնմխելիությունը՝ ձեռնպահ մնալով այդպիսի արժեքները հարձակման կամ հաշվեհարդարի առարկա դարձնելուց:[34]

Ադրբեջանի կողմից ոչնչացվում են նաև 1988-1994 թվականների Արցախյան ազատագրական պայքարի, ինչպես նաև 1915 թվականի Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանները: Այս գործընթացը խաթարում է պատմական կարևոր իրադարձությունները հիշելու համայնքի ապագա կարողությունը, խոչընդոտում հերոսապատումների փոխանցումը գալիք սերունդներին և բնականաբար խախտում մշակույթի հիմնարար իրավունքը: Ավերածությունների այս շղթայի ակնառու օրինակներից են Հադրութի ազատամարտիկների, ինչպես նաև Շուշիի Հայոց ցեղասպանության, Արցախյան ազատամարտի և Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրների, Ասկերա-

նի շրջանի Մադաթաշեն գյուղի դպրոցին կից 1904 թվականին կառուցված Սբ Աստվածածին եկեղեցու կողքին գտնվող՝ Արցախյան ազատամարտի զոհերին նվիրված հուշարձանի ոչնչացումը:

Ադրբեջանի կողմից հիշողության կորստին միտված ավերիչ ալիքը տարածվեց նաև Հայրենական մեծ պատերազմին՝ հերոսներին ու զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողների վրա: Դրանց թվում էին Արցախի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում կանգնեցված ԽՍՀՄ ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցի (Սերգեյ Խուդյակով) կիսանդրին և նրա տուն-թանգարանի տարածքի «ՄիԳ-17» կործանիչ-հուշարձանը: Շուշիում քանդվել է ԽՍՀՄ պետական-քաղաքական գործիչ, շուշեցի՝ Հովհաննես (Իվան) Թևոսյանի կիսանդրին: Բացի այդ, վանդալիզմի և ոչնչացման է ենթարկվել նաև Հայաստանի և Արցախի ազգային հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի արձանը: Ստեփանակերտում ոչնչացվել է Ալեքսանդր Մյասնիկյանի արձանը, Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի հուշաքարը, ՀԽՍՀ հասարակական-քաղաքական գործիչ Ստեփան Շահումյանի բրոնզաձույլ արձանը, Անատոլի Զինևիչի կիսանդրին, Ստեփանակերտի վերին զբոսայգում գտնվող Արծվի հուշարձանը, Հայ-ֆրանսիական պուրակում գտնվող Շաղ Ազնավուրի արձանը:[35]

Պատերազմից հետո Ադրբեջանի թիրախում հայտնվեցին Արցախի **պատմական գերեզմանոցները՝** խոշորամասշտաբ ճանապարհաշինական աշխատանքների[36] քողի ներքո: Մասնավորապես, ճանապարհների մոտ գտնվող Շուշիի, ինչպես նաև Ասկերանի շրջանի Շոշ համայնքի Սոնախի 18-րդ դարի պատմական գերեզմանոցները հիմնահատակ ավերվել են: Նման ճակատագրի է արժանացել Հադրութի եղբայրական գերեզմանոցը, Ստեփանակերտի զինվորական պանթեոնը: Ավերվել են Տող գյուղի Արցախյան ազատամարտի ականավոր գործիչների գերեզմանները: 2023 թվականի մայիսին Ադրբեջանի կողմից վնասվել են նաև Լաչինի և Հադրութի պատմական գերեզմանոցները: Ավերվել են նաև Շուշիի հին գերեզմանոցը՝ պատկերազարդ տապանաքարերով, և հայ-հունական գերեզմանոցը՝ 12-13-րդ դարերի վավերացված խաչքարերով: Այս ավերածությունները, բացի զգալի նյութական կորստից, խոր զգայական խնդիրներ են ստեղծել արցախահայերի շրջանում: Գերեզմանների հետ հաղորդակցման անհնարինությունը, այցելելու անկարողությունը հոգեբանական ծանր տրավմա է առաջացրել անհատների և համայնքների շրջանում:

Հայկական հետքի ջնջման ադրբեջանական արշավը չի շրջանցել նաև ամբողջական քաղաքները, պատմական թաղամասերը, դամբարանադաշտերն ու գյուղերը: Նմանօրինակ ոչնչացում էր Արցախի Հադրութի 17-19-րդ դարի Երե բազար թաղամասի[37] հրի մատնումը,[38] Մոխրենես, Շուշիի Քարինտակ, Հադրութի շրջանի Ծամձոր, Մարիամաձոր գյուղերի հիմնահատակ ավերումները:[39]

Աշխարհիկ հուշարձանների, թանգարանների ոչնչացումը խախտում է ինչպես համայնքի, այնպես

էլ ստեղծագործ անհատների մշակույթի իրավունքը: Ադրբեջանը ոչնչացրել է Շուշիի կերպարվեստի պետական թանգարանին կից «Քանդակների պուրակում» տեղակայված քանդակները, վնասել ու քանդել է Շուշիի Գրիգորի Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարանը,[40] Հադրութի Ավետիք Իսահակյանի անվան գրադարանը, Հադրութի Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանը, Արցախի Ազգային ժողովի շենքը և այլ շինություններ:[41]

Արցախի մշակութային ժառանգության յուրացումը

Արցախահայերի մշակույթի իրավունքի խախտում է Ադրբեջանի կողմից հայկական ժառանգության պատմական փաստերի կեղծումը, յուրացումը, ինքնության օտարումը և գործառույթի փոփոխումը: Նման գործողությունները խզում են ճշմարիտ գիտելիքով սեփական պատմության հետ հաղորդակցումն ու խոչընդոտում սերունդներին փոխանցելու կարողությունը՝ խաթարելով ինքնության հետ կապը: Պատմական ճշմարտության յուրացման այս գործընթացները ներառում են հայկական եկեղեցիների աղվանացումը՝ հայկականության ժխտումը, հայկական բնակավայրերի իսլամացումը, թյուրքացումը, ծիսակարգերի խաթարումը և այլն:

Հայկական եկեղեցիների աղվանացումն ադրբեջանական պետական քաղաքականության մեջ դեռևս 20-րդ դարի կեսերին ձևավորված և իր հստակ տեղն ամրապնդած տեսություն է,[42] որը ձգտում է պատմության ասպարեզից հեռացած քրիստոնյա աղվաններին հռչակել ադրբեջանցիների նախնիներ, իսկ հայկական եկեղեցիները՝ որպես այդ ենթադրյալ նախնիների թողած ժառանգություն: Այս կեղծարարությունը միտում ունի սահմանափակելու տարածաշրջանում հայ ժողովրդի ապրելու, արարելու պատմական իրավունքը: Ակնառու օրինակներ են պատմական հայկական Դադիվանքի աղվանացումը և շուրջ 200 հայերեն արձանագրությունների անտեսումը, Գանձասարի, Ամարասի, Հադրութի Սուրբ Խաչ, Ծակուռիի Սուրբ Աստվածածին եկեղեցիների ոչ հայկական հռչակումը և ուդիական համայնքի ներկայացուցիչների այցելությունների կազմակերպումը,[43] որոնք շարունակաբար պղծում են հայկական եկեղեցու ծիսական քրիստոնեական ավանդույթը:[44] Ադրբեջանի կողմից աղվանական են հռչակվել նաև Մատաղիսի Սուրբ Եղիշե, Տողի Սուրբ Հովհաննես եկեղեցիները: «Աղվանա-ուդիական» համայնքի ներկայացուցիչները պղծել և քանդել են Արցախի Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի հայկական եկեղեցու եզակի շուրֆը, և հակահայկական ծեսեր անցկացրել: Աղվանացման վտանգը չի շրջանցել նաև 1742 թվականի եզակի արձանագրություն կրող Կավաքավանքի հայկական եկեղեցուն:[45]

Ադրբեջանի կողմից արցախահայերի մշակույթի իրավունքների խախտումները՝ քրիստոնեական արժեքների միջազգայնորեն խեղաթյուրման համատեքստում

Արցախահայերի և ողջ հայ ժողովրդի մշակույթի և կրոնական ազատության իրավունքի ոտնահարում է Ադրբեջանի կողմից իրականացվող հայկական քրիստոնեական եկեղեցիների պղծման, արժեքների խեղաթյուրման միջազգային քաղաքականությունը, որը հատկապես վերջերս միջազգային հարթակներում մեծ ծավալների է հասել: Ի մասնավորի 2025 թվականի ապրիլի 10-ին Վատիկանի Գրիգորյան համալսարանում Հեյդար Ալիևի հիմնադրամի աջակցությամբ, Բաքվի բազմամշակութայնության կենտրոնի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ «Քրիստոնեությունը Ադրբեջանում. պատմություն և արդիականություն» խորագրով «միջազգային»[46] գիտաժողովը: Գաղտնի կազմակերպված գիտաժողովի իրական նպատակը հայկական եկեղեցիները հայկական հենքից կտրելուն միտված կեղծ քարոզների տարածումն է եղել, հայկական քրիստոնեական եկեղեցիները աղվանական հռչակելը, հայ ժողովրդի հետ կապը ժխտելը: Զեկուցումների մեծ մասը եղել են իրական փաստերից կտրված և ադրբեջանական քարոզչամեքենային ծառայող, հակագիտական, պատմության աղավաղման ելույթներով հագեցած ելույթներ:

Բացի այդ, 2025 թվականի ապրիլի 8-ին Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում՝ Տվարդովսկի հրապարակում, Ադրբեջանի կողմից կազմակերպվել է լուսանկարչական ցուցահանդես՝[47] վերնագրված «Արևմտյան Ադրբեջանի պատմամշակութային ժառանգությունը», որն իր ողջ բովանդակությամբ հայկական մշակութային ժառանգության յուրացմանն ուղղված նախաձեռնություն էր: Ցուցահանդեսի բացմանը մասնակցել են Ադրբեջանի խորհրդարանի անդամ և Արևմտյան Ադրբեջանի համայնքի Գործադիր կոմիտեի փոխնախագահ Գայա Մամեդովան, ինչպես նաև այլ պաշտոնատար անձինք:[48] Ցուցահանդեսի բովանդակությունը ներառում է պատմական փաստերից կտրված կեղծ տեղեկություններ և խեղաթյուրված պատմություններ, որոնք օգտագործվում են 20-րդ դարի վերջերին Ադրբեջանի կողմից հորինված արհեստական եզրույթների «հիմնավորման» համար: Ցուցահանդեսում Ադրբեջանի կողմից ներկայացվել են ՀՀ տարածքում գտնվող շուրջ 3500 պատմամշակութային հուշարձաններ, 500 գերեզմանոցներ և 391 մզկիթներ՝ որպես Ադրբեջանի պատմական ժառանգության անբաժան մաս:

Իսկ դրանից ավել վաղ, 2024 թվականի մայիսին, Բաքվի միջազգային բազմամշակութայնության կենտրոնը, Հեյդար Ալիևի հիմնադրամը և Լեհաստանում Ադրբեջանի դեսպանությունը Վարշավայում բացել են «Ադրբեջանի քրիստոնեական բազմազան պատմության բացահայտումը» վերտառությամբ ցուցահանդեսը՝ հայկականության կեղծման գլոբալ արշավը ավելի ընդլայնելու համար:

Ու կրկին հայկական պատմական քրիստոնեական եկեղեցիները հռչակվում էին աղվանական և ներկայացվում որպես «Ղարաբաղի աղվանական քրիստոնեական տաճարներ»: Ցուցահանդեսը պետական ուղղվածության էր, քանզի նվիրված էր Ադրբեջանի անկախության տոնին, իսկ պաշտոնական հյուրերի շարքում Ադրբեջանի ուղիական համայնքի ներկայացուցիչները, Վարշավայում բազմամշակութայնության համայնքի անդամներն ու ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցիչներն էին:[49]

Ցուցահանդեսի գլխավոր առանցքը հայկական պատմական Դադիվանքը, Ամարասը, Գանձասարը իր եզակի քանդակներով, խաչքարերով ու արձանագրություններով, Ծիծեռնավանքը և այլ եկեղեցիներ աղվանական ներկայացնելն է, զուգահեռ ցուցադրելով նաև «աղվանա-ուղիական» կրոնական փոքրամասնության ծեսերը՝ հայկական եկեղեցիներում:

Մշակութային ժառանգության յուրացման քաղաքականության առանձին ուղղություն կարելի է համարել նաև արցախյան գորգերի յուրացումը, ադրբեջանականացումը: Ցուցահանդեսի ժամանակ արցախյան գորգերը՝ իրենց ինքնատիպ հայկական զարդանախշերով ու խորհրդաբանությամբ՝ ներկայացվում են որպես Ադրբեջանի ավանդական գորգագործության մշակույթ: Խոսքը Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում «Դեկորատիվ արվեստի և դիզայնի թանգարանում» 2024 թվականի մայիսի 16-ին բացված՝ «Ադրբեջանական գորգեր. հիշողության գենետիկական կոդը»[50] խորագրով ցուցահանդեսի մասին է, որի հիմնական ցուցադրությունն ընդգրկում է Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի տարածաշրջանի հայկական գորգերը: Իբրև ադրբեջանական ներկայացվող գորգերում առկա նշանները, կենդանիների և թռչունների պատկերները, դեկորատիվ ձևավորման մեջ կոմպոզիցիոն նախշերը և դրանց շուրջ հավատալիքները կիրառվել են հայկական գորգագործության մշակույթում և ունեն դարավոր պատմություն:

Ցուցահանդեսը, որը նախաձեռնվել է Լատվիայում Ադրբեջանի Հանրապետության դեսպանատան, Ադրբեջանի «Ազերխալչա» գորգագործության ընկերության համագործակցությամբ, նվիրված է Ադրբեջանի և Լատվիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին, որն էլ ավելի է ընդգծում միջոցառման պետական ուղղորդվածությունը: Այդ ընկերության նմուշները կրկնում են Արցախի Ջրաբերդի (Джраберд, Jraberd) հայկական ֆեոդալական իշխանության գորգագործական կենտրոնից սերված «Արծվագորգ»-երը, Սյունիքի և Նախիջևանի Գողթն գավառի «Որոտան» տիպի գորգը, ինչպես նաև Շիրվանի գորգերը: Էլ ավելի վտանգավոր է այն, որ ցուցահանդեսը նաև կրթական ծրագրերի միջոցով հայկական հետքը ջնջելու միտում ունի, որի ապացույցը մայիսի 29-ին նույն թանգարանի ցուցադրության տարածքում տեղի ունեցած գիտական լսումները և դասախոսություններն են:[51]

Այս քաղաքականության շարունակությունն է նաև վերջերս, 2025 թվականի մայիսից 15-ից հունիսի 20-ը Նիդերլանդերում, Հաագայի քաղաքապետարանի «Atrium City Hall» (Atrium Den Haag) սրահում ներկայացված «Ադրբեջանական գորգերի շքեղությունը. ուսուցում արվեստի միջոցով» խորագրով գորգերի ցուցահանդեսը, որտեղ ներկայացվում են հայկական և արցախյան գորգերը[52]՝ ադրբեջանականի անվան տակ՝ պատմական և մշակութային լրջագույն խեղաթյուրումներով:[53]

Արցախահայերի բռնի տեղահանման հետևանքները ժառանգության հասանելիության վրա (մշակութային վայրեր «մուտքի» արգելում, ուխտագնացության իրավունքի օտարում)

Շատ փորձագետների գնահատմամբ բռնի տեղահանումը շարունակվող պատերազմի ձև ու բռնություն[54] է՝ գերազանցող նույնիսկ պատերազմի արհավիրքները:[55] Բռնի տեղահանության հետևանքով մշակույթի իրավունքի իրացմանը խոչընդոտում է նաև Արցախի տարածքի շուրջ 4000 պատմամշակութային հուշարձանի հետ հաղորդակցության, «մուտքի» անհնարինությունը: Հաշվի առնելով, որ այդ հուշարձաններն անբաժանելի էին արցախահայերի ինքնությունից, ուստի դրանցից օտարումը խոր ճգնաժամ է ստեղծել՝ խաթարելով մարդկանց և մշակութային ժառանգության միջև կապը՝ հանգեցնելով դրանց հետ կապված հիշողության, շարունակականության գործելակերպի կասեցման, անցյալի սոցիալական հիշողության մթագնման:[56] Այսօր Ադրբեջանի խտրական վերաբերմունքի պատճառով արցախահայությունը զրկված է Արցախի մշակութային կյանքին մասնակցելու, ուխտատեղիներ, պատմամշակութային վայրեր այցելելու, հարազատների գերեզմանոցներում հարգանքի տուրք մատուցելու, եկեղեցիներում ծեսեր կատարելու և աղոթելու իրավունքից:

Ադրբեջանի կողմից արցախահայերի մշակույթի իրավունքի հարգման և ժառանգության անձեռնմխելիության պահպանման պարտավորությունները

Մշակույթի իրավունքի հարգման պարտավորությունը պահանջում է ուղղակի կամ անուղղակի կերպով ձեռնպահ մնալ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի խոչընդոտման ցանկացած միջամտությունից[57] և ինքնության խեղաթյուրման խտրական վերաբերմունքից: Այն երաշխավորում է նաև մշակութային ժառանգությանը և ինստիտուցիոնալ ծառայություններին «մուտք»-ի հնարավորությունը[58] և պաշտպանում մշակութային ինքնությունն ազատորեն արտահայտելու գործելակերպն ու ապրելակերպը: Խտրականության, ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունն օրենսդրորեն արգելված է «Քաղաքացիական և միջազգային դաշնագրի» 19-րդ, 20-րդ, և «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածներով: Բացի այդ, ՄԱԿ-ի դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետը և 3-րդ հոդվածն արգելում են մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացման ցանկացած խտրականություն:[59]

Մշակութային իրավունքի հանդեպ հարգանքը նաև մշակութային ժառանգության բոլոր ձևերի պաշտպանության իրավունքն է: Ժառանգությունը պետք է պահպանվի, զարգանա, հարստացվի և փոխանցվի գալիք սերունդներին որպես մարդկային փորձառության և ձգտումների արդյունք:[60]

«Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության» Հաագայի 1954 թ. կոնվենցիայի 4-րդ հոդվածը պատերազմող կողմերին պարտավորեցնում է հարգել ինչպես իրենց, այնպես էլ մյուս կողմի տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել դրանց ոչնչացմանը կամ վնասվելուն, ձեռնպահ մնալով դրանց դեմ ուղղված թշնամական ցանկացած գործողությունից:[61]

Հաագայի կոնվենցիայի Երկրորդ արձանագրության 21-րդ հոդվածի 2-րդ մասը (դրույթն առկա է նաև 1954 թ. կոնվենցիայի 28-րդ հոդվածում) պետություններից պահանջում է կանխել ժառանգության ոչնչացումը՝[62] պարտավորեցնելով ներպետական օրենսդրությամբ քրեական հանցագործություն համարել և պատժել նման խախտումները՝[63] սահմանելով օրենսդրական, վարչական կամ կարգապահական միջոցներ:[64] Եվ քանզի Ադրբեջանը կողմ է Հաագայի կոնվենցիային և արձանագրություններին, ուստի պարտավոր է անգամ քրեորեն պատժել հայկական ժառանգությունը կանխամտածված ոչնչացողներին, կամ նույնիսկ հրաման տվողներին:

Հայկական ժառանգության յուրացման դեպքերով Ադրբեջանը խախտում է 2001 թվականի «Մշակութային բազմազանության պաշտպանության մասին» և 2005 թվականի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիաների դրույթները, որոնց անդամ է: Պատմական եկեղեցիների յուրացման դեպքերն ակնհայտորեն ոտնահարում են 1966 թվականի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի» 15-րդ հոդվածը, որը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Եզրակացություն

Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման, միջազգայնորեն իրականացվող քրիստոնեական եկեղեցիների աղվանացման և պատմության խեղաթյուրման քաղաքականությունը խախտում է մշակութային ժառանգության պահպանության միջազգային սկզբունքները և հատկապես մարդու մշակութային իրավունքը: Վերլուծությունը փաստում է, որ միջազգային իրավունքը չի ծառայում իր գլխավոր առաքելությանը, այն է՝ պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, կանխել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դեմ ոտնձգությունները, պայքարել խտրականության, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, պատերազմական և էթնիկ բռնությունների դեմ:

Իսկ միջնադարյան հայկական եկեղեցիների յուրացումը, պղծումն ու գործառույթի փոփոխումը, դրանք այլ հանրույթներին վերագրելը՝ աղվանացնելը, իսլա-

մացնելը, անօրինական վերականգնումներն ու վերափոխումները կեղծում են պատմությունը և խաթարում այդ արժեքներն իսկության ասպեկտներով հաջորդ սերունդներին փոխանցելու հնարավորությունը:

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանությամբ պատմական ժառանգության հետ հաղորդակցման արգելումը, դրանով զարգանալու հնարավորության կասեցումը մարդու մշակութային իրավունքների կոպիտ խախտումներ են: Այսօր շուրջ 120.000 արցախահայ զրկված է իր մշակութային բնականոն համայնքային կյանքին մասնակցելու, իր ժառանգության տարածքներ, հարազատի գերեզմանոց այցելելու իրավունքից, պատմական եկեղեցիներում ծեսեր իրականացնելու և աղոթելու հնարավորությունից: Արցախում ցուցակագրված շուրջ 5000 պատմամշակութային հուշարձանների անգնահատելի մասն արդեն իսկ ոչնչացված է, իսկ հարյուրավոր եկեղեցիներ, մատուռներ, կամուրջներ, խաչքարեր, դամբաններ, ամրոցներ, թանգարաններ, մշակույթի տներ, թատրոններ, հուշարձաններ գտնվում են ոչնչացման անմիջական սպառնալիքի ներքո:

Միջազգային ամենատարբեր օրենքները փաստում են, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա մշակույթի իրավունքի իրացման երաշխիքներ: Այս համատեքստում Արցախի սրբավայրեր (Դադիվանք, Ամարաս, Գանձասար) ուխտագնացությունների իրավունքի միջազգային երաշխավորումը կարող է դառնալ ստեղծված իրավիճակում Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի դրույթների հարգման հիմքով ինքնությունը կենսունակ պահելու էական պայման: ■

Գրականության ցանկ

1. BBC News. 2021, March 26, Nagorno-Karabakh: The Mystery of the Missing Church. https://www.bbc.com/news/av/world-europe-56530604
2. Bennoune, K. 2016, The Destruction of Cultural Heritage Is a Violation of Human Rights – UN Special Rapporteur, https://www.ohchr.org/en/press-releases/2016/03/destruction-cultural-heritage-violation-human-rights-un-special-rapporteur
3. Blake J., 2001, Developing a New Standard-Setting Instrument for Safeguarding Intangible Cultural Heritage – Elements for Consideration, 93 pages, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000123744.
4. Bokova I., 2015, Culture on the Front Line of New Wars, Brown Journal of World Affairs, Vol. 22, no. 1, pp. 289-296, https://www.jstor.org/stable/24591015 .
5. CBC TV Azerbaijan. 2020, November 24, Construction of the Ahmedbeyli-Fuzuli-Shusha highway has begun. YouTube. https://www.youtube.com/watch?v=fMzbdUOgfNs.
6. Council of Europe. 1950, European Convention on Human Rights ECHR. Strasbourg: Council of Europe. https://www.legal-tools.org/doc/8267cb/pdf/.
7. Council of Europe. 1952, Protocol 1 to the European Convention on Human Rights. Strasbourg: Council of Europe. https://www.legal-tools.org/doc/1152cf/pdf/.
8. Crombach, S. G. 2019, Ziia Buniiatov and the invention of an Azerbaijani past. Universiteit van Amsterdam, https://pure.uva.nl/ws/files/40165626/Thesis.pdf.
9. Embassy of the Republic of Azerbaijan to the Republic of Poland, Post by Nargiz Gurbanova on Azerbaijani cultural diplomacy event in Poland, Facebook, 25 May 2024, https://www.facebook.com/story.php?story_fbid=756896839964554&id=100069327334705&mibextid=qi2Omg&rdid=62OuE8gngunGAiK9 .
10. Fribourg Declaration on Cultural Rights. 2007, Fribourg University Press. https://culturalrights.net/descargas/drets_culturals377.pdf.
11. Geneva, Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), 8 June 1977
12. Guseyn-zade, R., Facebook, 2021, November 18, https://www.facebook.com/rena.quseynzade/posts/3443529142348890.
13. Henckaerts J.-M., Doswald-Beck L., 2005, Customary International Humanitarian Law, Volume I: Rules, Cambridge: Cambridge University Press, https://www.icrc.org/en/doc/assets/files/other/customary-international-humanitarian-law-i-icrc-eng.pdf.
14. Human Rights Ombudsman of the Republic of Artsakh. 2021, Ad Hoc Public Report. The Armenian Cultural Heritage in Artsakh Nagorno-Karabakh: Cases of Vandalism and at Risk of Destruction by Azerbaijan. Stepanakert, https://armenianbar.org/wp-content/uploads/2021/04/6.-Final-Report-on-Armenian-cultural-heritage-26.01.2021_0.pdf.
15. International Committee of the Red Cross (ICRC). 2019, Displacement in Times of Armed Conflict: How International Humanitarian Law Protects in War and Why It Mattersб https://www.refworld.org/policy/legalguidance/icrc/2019/en/122671 .
16. International Criminal Court ICC. 2021, Policy on Cultural Heritage. https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/20210614-otp-policy-cultural-heritage-eng.pdf.
17. Jokilehto, J. 2005, Definition of cultural heritage: References to documents in history Originally for ICCROM, 1990, http://cif.icomos.org/pdf_docs/Documents%20on%20line/Heritage%20definitions.pdf.
18. Khatchadourian, L., & Smith, A. 2020, December 15, The US can help prevent the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh. Here's how. Medium. https://medium.com/cornell-university/the-us-can-help-prevent-the-destruction-of-cultural-heritage-in-nagorno-karabakh-heres-how-b809b87a5e79.
19. Krivosheev, K., 2020. https://archive.is/PkeTz .
20. Larsen P. B., 2019, Modern Conflict, Emergencies and Cultural Heritage: Exploring the Relevance of Cultural Rights: International Conference on the 20th Anniversary of the 1999 Second Protocol of the 1954 Hague Convention Protecting Cultural Property Conference Proceedings, UNESCO, Paris. https://www.zora.uzh.ch/id/eprint/200532/ .
21. Latvian National Museum of Art, The Genetic Code of Memory. Azerbaijani Carpets, 11 April 2024, https://lnmm.gov.lv/en/press/press-releases/the-genetic-code-of-memory-azerbaijani-carpets-253.
22. Medium. 2020, November 25, Church and Memorial Desecration in Post-ceasefire Nagorno Karabakh. https://medium.com/dfrlab/church-and-memorial-desecration-in-post-ceasefire-nagorno-karabakh-87ece968af3f.
23. Mənəvi Dəyərlərin Təbliği Fondu. 2022, March 2. Xudavəng və Ağoğlan məbədləri. Facebook. https://www.facebook.com/watch/?v=344815654057444 .
24. RA MFA Spokesperson Anna Naghdalyan. Press release on Twitter, January 12, 2021, https://twitter.com/naghdalyan/status/1348922661318103040?ref_Ctwterm%5E1348922661318103040%7Ctwgr%5E%7Ctwcon%5Es1_&ref_url=%3A%2F%2Fyerkirmedia.am%2Fhy%2Farticle%2F2021%2F01%2F12%2F31680.
25. Shaheed F., 2011, Report of the Independent Expert in the Field of Cultural Rights, https://digitallibrary.un.org/record/680585?ln=en.
26. Stone P. G., The Challenge of Protecting Heritage in Times of Armed Conflict, Museum International, Vol. 67, 2015, pp. 40-54.
27. Teijgeler, R. So Yesterday Was the Burning of Books" — Wartime

in Iraq. Lecture Held at Responsible Stewardship Towards Cultural Heritage Materials, Preconference of the IFLA Rare Book and Manuscript Section, Copenhagen,The Royal.
28. UN experts urge Azerbaijan to lift Lachin corridor blockade and end humanitarian crisis in Nagorno-Karabakh, 07 August 2023, https://www.ohchr.org/en/press-releases/2023/08/un-experts-urge-azerbaijan-lift-lachin-corridor-blockade-and-end
29. UN General Assembly, Report of the Special Rapporteur on the promotion and protection of human rights and fundamental freedoms while countering terrorism A/70/279. New York, UN General Assembly, 2015.
30. UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression A/HRC/20/26. Geneva, UN Human Rights Council. 2012.
31. UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the rights of persons with disabilities A/HRC/23/34. Geneva, 2013.
32. UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association, A/HRC/28/57, Geneva, 2015.
33. UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on Extrajudicial, Summary or Arbitrary Executions, A/HRC/17/38 and Corr.1, Geneva, 2011.
34. UN, Universal Declaration of Human Rights (UDHR), New York, 1948, https://www.legal-tools.org/doc/de5d83/pdf/.
35. UN, International Covenant on Economic, Social and Cultural Rights (ICESCR), New York, 1966.
36. UN, Convention on the Rights of the Child CRC. New York, 1989, https://www.legal-tools.org/doc/f48f9e/pdf/.
37. UN, Report Reviewing the Conceptual and Legal Framework of Cultural Rights, A/HRC/31/59 2016, 12 January, https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc3159-report-reviewing-conceptual-and-legal-framework-cultural-rights.
38. UN, Report Reviewing the Conceptual and Legal Framework of Cultural Rights, A/HRC/31/59, 2016, 12 January, https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc3159-report-reviewing-conceptual-and-legal-framework-cultural-rights.
39. UN, Report of the Special Rapporteur on the Rights of Indigenous Peoples, UN General Assembly, A/71/317, 2016, https://digitallibrary.un.org/record/831612?ln=en&v=pdf .
40. UN, Committee on Economic, Social and Cultural Rights CESCR. 2009, General Comment No. 21: Right of Everyone to Take Part in Cultural Life Art. 15, Para. 1a of the Covenant on Economic, Social and Cultural Rights. Geneva: UN. https://www.refworld.org/docid/4ed35bae2.html
41. UN, Human Rights Council. 2019. Special Rapporteur in the Field of Cultural Rights. Cultural rights: tenth anniversary report, https://digitallibrary.un.org/record/3793215?ln=en&v=pdf .
42. UNESCO, The Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. 1954.
43. UNESCO, Second Protocol of The Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1999.
44. UNESCO, Universal Declaration on Cultural Diversity, Paris, 2001.
45. UNESCO, Reports on extensive damage in first emergency assessment mission to Aleppo, 2017, 19 January, https://whc.unesco.org/en/news/1619/.
46. UNESCO, Culture: Protecting Our Heritage and Fostering Creativity, 2024, https://www.unesco.org/en/culture .
47. UNESCO, Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars, 2010, https://ich.unesco.org/en/RL/armenian-cross-stones-art-symbolism-and-craftsmanship-of-khachkars-00434 .
48. Center for truth and justice, What happened to all the Armenians in Nagorno Karabakh?, 2023, https://www.cftjustice.org/wp-content/uploads/2023/12/Exodus_FinalV4.pdf
49. Նիդերլանդական օրագիր, Գորգերը որպես պատմական հիշողություն. Ադրբեջանը յուրացնում է հարևանների մշակութային ժառանգությունը, Հաագա, 25 June 2025, https://www.nidoragir.com/2025/03/1_21.html.
50. Tigranyan A., “Azerbaijan’s policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context of violation of cultural rights,” Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), 2025, թիվ 1, էջ 195–228, https://arar.sci.am/dlibra/publication/422882/edition/390078/content.
51. Tigranyan A., Już sama nazwa azerbejdżańskiej wystawy stanowi doskonały przykład fałszerstwa!, Agencja Informacyjn, 21.04.2025.
52. Tigranyan, A., “The Armenian Cultural heritage of Artsakh. Mechanisms for protection in the international System for reservation of heritage”, Vem series, N. 6, 2023, 243 p.
53. Parliamentary Assembly, Humanitarian consequences of the conflict between Armenia and Azerbaijan / Nagorno-Karabakh conflict, Resolution 2391, 2021, https://pace.coe.int/en/files/29483/html.

Հղումներ

1 Արցախի ժողովրդի բռնի տեղահանությունը տեղի ունեցավ 3 փուլով: Արցախահայերի բռնի տեղահանության առաջին խոշոր ալիքը տեղի ունեցավ 2020 թվականի պատերազմի օրերին և դրան հաջորդած ամիսներին: Ադրբեջանի ռազմական հանցագործությունների, նաև առաջացած սոցիալ-տնտեսական և հումանիտար ճգնաժամի հետևանքով ավելի քան 35.000 մարդ տեղահանվեց Շուշիի, Հադրութի, Շահումյանի, Քաշաթաղի շրջաններից և Մարտակերտի, Ասկերանի շրջանների որոշ գյուղերից (Շուշիի շրջանի բնակչության թիվը 2019 թ. տվյալներով կազմել է 5800, Հադրութինը՝ 13535, Շահումյանինը՝ 3814, Քաշաթաղինը՝ 12,157 բնակիչ: Ընդհանուր՝ 35306 բնակիչ): Այս ալիքի հետևանքով ամբողջությամբ տեղահանվեց Արցախի 228 համայնքներից շուրջ 113-ի բնակչությունը: Տեղահանվեցին նաև այլ շրջանների բնակիչներ՝ տեղահանվածների թիվը հասցնելով մոտ 40.000-ի: Ըստ ՀՀ ԱԳՆ-ի 2021 թ. նոյեմբերի հայտարարության՝ պատերազմի հետևանքով իրենց տները կորցրել են մոտ 40.000 մարդ (44-օրյա պատերազմի հետևանքով 40.000 մարդ զրկվել է տնից, հարյուրավոր քաղաքացիական անձինք սպանվել կամ վիրավորվել են. ՀՀ ԱԳՆ հայտարարությունը, նոյեմբեր 09, 2021 թ. https://www.azatutyun.am/a/31552538. html(մուտք՝ 28.07.2025): Տեղահանության երկրոդ փուլը սկսվեց 2022 թ. դեկտեմբերի, երբ Բերձորի (Լաչինի) միջանցքի 10-ամսյա շրջափակման պայմաններում արցախահայերը, Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի մանդատի համաձայն և ռուս խաղաղապահների մասնակցությամբ՝ ուսման, սպորտային մրցաշարերին մասնակցելու, հիվանդության կամ ընտանիքի վերամիավորան հիմնավոր պատճառներով իրենց հիմնարար իրավունքներն իրացնելու խիստ անհրաժեշտությունից դրդված, ստիպված էին ժամանակավորապես լքել Արցախը (առողջական ծանր խնդիրներով ևս 16 հիվանդ Արցախից տեղափոխվել է Հայաստան, 29 ապրիլ, 2023 թ., https://armtimes.com/hy/article/258982 (մուտք՝ 28.07.2025): Տես նաև Կարմիր խաչի ուղեկցությամբ Արցախից 11 բուժառու տեղափոխվել է ՀՀ բժշկական կենտրոններ, 19 ապրիլ, https://www.hetq.am/hy/article/155228 (մուտք՝ 28.07.2025)): Բացի այդ, շատերը պարզապես Արցախի սահմաններից դուրս էին գտնվում հենց ճանապարհի փակման պահին: Եվ հաշվի առնելով նաև պատերազմի արհավիրքների պատճառով իրենց կյանքը հայրենիքին զոհաբերած մարդկանց թիվը, մենք կտեսնենք, որ Արցախի հայաթափման՝ Ադրբեջանի ռազմավարությունը շարունակական բնույթ է կրել՝ տարբեր փուլերում դրսևորվելով նոր ձևերով: Բռնի տեղահանության երրորդ մեծ ալիքը սկսվեց 2023 թ. սեպտեմբերին: Մասնավորապես, սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի, քաղաքացիական ենթակառուցվածքների, մշակութային կառույցների թիրախավորման, խաղաղ բնակչության շրջանում սպանությունների, գերեվարության, վախի, հուսալքության և ռասայական խտրական վերաբերմունքի հետևանքով բռնի տեղահանվեց տարածաշրջանի ողջ բնակչությունը: Բռնագաղթը սկսվեց սեպտեմբերի 24-ին և տևեց մինչև հոկտեմբերի 4-ը: Ասկերանի (18316), Մարտու-

նիի (24504) շրջաններից, Ստեփանակերտ քաղաքից (55800), Մարտակերտի (19123) գյուղերից բռնի տեղահանվեց Արցախի տարածքում մնացած ողջ հայությունը՝ 100.600 մարդ: Այս ցուցանիշը փաստում է, որ 2023թ. սեպտեմբերի դրությամբ Արցախում բնակվող բնակչության թիվը կազմում էր այդքան: Հարկ է ընդգծել, որ ոչ թե բռնի տեղահանվել է 100.600 մարդ, այլ 2023 թ. սեպտեմբերին պարզապես Արցախում կար այդքան մարդ: Ընդգծենք նաև, որ 44-օրյա պատերազմից շուրջ մեկ ու կես տարի առաջ՝ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ, Արցախի Հանրապետության վարչական շրջանների տվյալներով բնակչության ընդհանուր թիվը կազմել է 154. 691 մարդ (Տեղեկություն Արցախի Հանրապետության շրջանների մասին 01.01.2019 թ. դրությամբ՝ ըստ շրջանների վարչակազմերի տվյալների): Այս մեծ բռնագաղթից հետո արցախահայերը ժամանակավորապես հաստատվեցին ՀՀ տարբեր շրջաններում՝ հիմնականում կենտրոնանալով ՀՀ Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերի տարբեր քաղաքներում ու համայնքներում:

2 Լաչինի միջանցքը Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող կենսական նշանակության միակ տրանսպորտային ուղին էր, որի փակումը սրեց հումանիտար ճգնաժամը տարածաշրջանում՝ առաջացնելով սննդի, դեղորայքի և այլ անհրաժեշտ պարագաների խիստ պակաս (UN experts urge Azerbaijan to lift Lachin corridor blockade and end humanitarian crisis in Nagorno-Karabakh, 2023):

3 UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the Rights of Indigenous Peoples, UN General Assembly, 2016, A/71/317, §16; Bennoune, K., The Destruction of Cultural Heritage Is a Violation of Human Rights – UN Special Rapporteur, 2016, §53.

4 Bennoune, K. նույն տեղում, § 71; UN, Report of the Special Rapporteur on the Rights of Indigenous Peoples, UN General Assembly, 2016, A/71/317, § 53.

5 UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on Extrajudicial, Summary or Arbitrary Executions, A/HRC/17/38 and Corr.1, Geneva, UN Human Rights Council, 2011, § 2.

6 Նույն տեղում՝ § 77.

7 UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on Extrajudicial, Summary or Arbitrary Executions, A/HRC/17/38 and Corr.1, Geneva, 2011; UN Human Rights Council, Report Reviewing the Conceptual and Legal Framework of Cultural Rights. A/HRC/31/59, 2016; UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression A/HRC/20/26, 2012, Geneva; UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the rights to freedom of peaceful assembly and of association A/HRC/28/57, 2015, Geneva; UN General Assembly, Report of the Special Rapporteur on the promotion and protection of human rights and fundamental freedoms while countering terrorism A/70/279, 2015; UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the rights of persons with disabilities A/HRC/23/34, Geneva, 2013.

8 Այս փոխկախվածությունը ներկայացվում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի նորմատիվային այլ տեքստերում (Blake J., Developing a New Standard-Setting Instrument for Safeguarding Intangible Cultural Heritage – Elements for Consideration, 2001, pp. 88-93, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000123744, (մուտք՝ 07.02.2025).

9 UN Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, No. 21: Right of Everyone to Take Part in Cultural Life Art. 15, Para. 1a of the Covenant on Economic, Social and Cultural Rights.

10 UNESCO, Universal Declaration on Cultural Diversity, Paris, 2001, Art. 5.

11 UN, Universal Declaration of Human Rights, UDHR, New York, 1948, Art. 27.1.

12 Այս դրույթի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մեկնաբանությունը հաստատել է, որ համայնքի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը երաշխավորում է նաև մշակութային ժառանգության հասանելիության, պրակտիկաներին մասնակցելու և վայելելու յուրաքանչյուրի իրավունքը (Տես՝ UNESCO, Culture: Protecting Our Heritage and Fostering Creativity, 2024, https://www.unesco.org/en/culture, (մուտք՝ 07.02.2025).

13 UN, Committee on Economic, Social and Cultural Rights., General Comment No. 21, 2009, § 3, §13; Bennoune K., 2016, § 7.

14 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, § 9.

15 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, § 11.

16 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, § 15.

17 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, § 15 b.

18 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, 15 b..

19 Bennoune K., 2016, § 50.

20 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, §. 15 a.

21 UN, Committee on Economic, Social and Cultural Rights. 2009. General Comment No. 21, § 15 c; UNESCO, Universal Declaration on Cultural Diversity, Paris, 2001, Art. 5; Fribourg Declaration, 2007, Art. 7.

22 Shaheed F., Report of the Independent Expert in the Field of Cultural Rights, 2011, § 79; UN, Human Rights Council, Special Rapporteur in the Field of Cultural Rights. Cultural rights : tenth anniversary report, 2019, §18.

23 UN, Universal Declaration of Human Rights, UDHR, 1948, Art. 18, Arts. 26-27; UN, International Covenant on Civil and Political Rights, ICCPR, 1966, Arts. 18-19; UN Convention on the Rights of the Child, CRC, New York, 1989, Arts. 28-29; Council of Europe, European Convention on Human Rights (ECHR)6 1950, Arts. 9-10; Council of Europe, Protocol 1 to the European Convention on Human Rights, 1952, Arts. 1-2; Organization of American States, 1969, Arts. 12-13, Art. 26; Organization of American States, American Convention on Human Rights. Washington, D.C.: Organization of American States, 1969, Arts. 13, 15.

24 Stone P. G., The Challenge of Protecting Heritage in Times of Armed Conflict, Museum International, Vol. 67, 2015, pp. 40-54.

25 Henckaerts J.-M., Doswald-Beck L., Customary International Humanitarian Law, Volume I: Rules, Cambridge: Cambridge University Press, 2005, rules 38-39, pp. 127-132:

26 Այս փաստաթղթերից առանցքային է ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցող Կարիմա Բենունի 2016 թվականի «Մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացումը՝ որպես մարդու իրավունքների խախտում» զեկույցը (Տես՝ UN Human Rights Council, Report of the Special Rapporteur on the Rights of Indigenous Peoples, UN General Assembly, 2016, A/71/317), ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ խոսնակի մշակութային իրավունքների հայեցակարգային և իրավական դաշտը վերանայող զեկույցը (Տես UN Human Rights Council, Report Reviewing the Conceptual and Legal Framework of Cultural Rights, 2016, A/HRC/31/59), 1998 թ. Հռոմի կանոնադրությունը (Տես International Criminal Court, 2021, § 28, p.10):

27 Jokilehto J., "Definition of cultural heritage: References to documents in history Originally for ICCROM", 1990, 2005, p. 5.

28 Larsen P. B., Modern Conflict, Emergencies and Cultural Heritage: Exploring the Relevance of Cultural Rights: International Conference on the 20th Anniversary of the 1999 Second Protocol of the 1954 Hague Convention Protecting Cultural Property Conference Proceedings, UNESCO, Paris, 2019, pp. 89-90.

29 Bokova I., Culture on the Front Line of New Wars, Brown Journal of World Affairs, Vol. 22, no. 1, 2015, p. 294.

30 UNESCO, Reports on extensive damage in first emergency assessment mission to Aleppo, 2017.

31 Tigranyan A., "Azerbaijan's policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context of violation of cultural rights," Պատմաբանասիրական հանդես (ՊԲՀ), 2025, թիվ 1, էջ 204–205, https://arar.sci.am/dlibra/publication/422882/edition/390078/content (մուտք՝ 07.02.2025):

32 Tigranyan A., "Azerbaijan's policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context

of violation of cultural rights", նույն տեղում՝ էջ 205–207:

33 UNESCO, Armenian cross-stones art. Symbolism and craftsmanship of Khachkars, 2010.

34 UNESCO, Second Protocol of The Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, art. 12, 1999; Tigranyan A., The Armenian Cultural heritage of Artsakh. Mechanisms for protection in the international System for reservation of heritage, Vem series, 2023, pp.151-152:

35 Նույն տեղում՝ էջ 209:

36 CBC TV Azerbaijan, Construction of the Ahmedbeyli-Fuzuli-Shusha highway has begun, 2022.

37 Հաղրութի քաղաքապետարանը 2018-2019 թթ. Երե բազար թաղամասը պատմամշակութային արգելոցի վերածելու որոշակի քայլեր էր ձեռնարկել. աշխատանքներ էին կատարվել արգելոցի սահմանների ճշգրտման, շենքերի նախագծերի ուսումնասիրման և նախնական նյութերի պատրաստման առումով:

38 Bakinskiy N., Twitter, 2022, October 9. https://t.me/bakinskiy_nord/15674?single (մուտք՝ 01.11.2024).

39 Tigranyan A., "Azerbaijan's policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context of violation of cultural rights", նույն տեղում՝ էջ 209–210:

40 Ararathau, The destruction of the Grigori Gabrielyantsi State Museum of Geology in Shushi, 2021.

41 Tigranyan A., "Azerbaijan's policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context of violation of cultural rights," նույն տեղում՝ էջ 210:

42 Աղվանացման տեսությունն Ադրբեջանում ունի խորքային արմատներ, որոնք գալիս են դեռևս 1950-ական թվականներից, երբ ադրբեջանցի ակադեմիկոս, ադրբեջանական պատմագրության հայր Ջիա Բունիաթովը փորձեց պնդել, որ Լեռնային Ղարաբաղի հնագույն եկեղեցիները կառուցել են ոչ թե հայերը, այլ անհետացած աղվանները, իսկ նրանց կեցության տարածքն էլ ընդգրկել է Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի շրջանները (Crombach S. G., Ziia Buniiatov and the invention of an Azerbaijani past. Universiteit van Amsterdam, 2019; Human Rights Ombudsman of the Republic of Artsakh, Ad Hoc Public Report, The Armenian Cultural Heritage in Artsakh Nagorno-Karabakh: Cases of Vandalism and at Risk of Destruction by Azerbaijan. Stepanakert, 2021).

43 Tigranyan A., "Azerbaijan's policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context of violation of cultural rights," նույն տեղում՝ էջ 211-212:

44 Mənəvi Dəyərlərin Təbliği Fondu, Xudavəng və Ağoğlan məbədləri, Facebook, 2022, March 2. https://www.facebook.com/watch/?v=344815654057444 (մուտք՝ 01.11.2024).

45 Tigranyan A., "Azerbaijan's policy of destruction and appropriation of the cultural heritage of the Armenians of Artsakh in the context of violation of cultural rights," նույն տեղում՝ էջեր 211-212:

46 Համաձայն տարածված հայտարարության՝ գիտաժողովին զեկուցողներ են եղել Թուրքիայից, Ղազախստանից, Ուզբեկստանից, Վրաստանից, Ռուսաստանից, Հարավային Կորեայից, Լեհաստանից, Իտալիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Լիտվայից (Տես, Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում, «2025 թվականի ապրիլի 10-ին Վատիկանի Սուրբ Աթոռի հայրապետական Գրիգորյան համալսարանում տեղի ունեցած գիտաժողովի մասին», 11.04.2025, https://monumentwatch.org/hy/alerts/2025-թվականի-ապրիլի-10-ին-վատիկանի-սուրբ-աթոռ/ (մուտք՝ 07.02.2025):

47 Միջոցառումը կազմակերպվել է Ադրբեջանի պետական մարմինների և գիտամշակութային հաստատությունների մասնակցությամբ (Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում, Հայկական մշակութային ժառանգության և Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի յուրացմանն ուղղված ցուցահանդես Վարշավայում «Արևմտյան Ադրբեջանի պատմամշակութային ժառանգությունը» խորագրով, 21.04.2025, https://monumentwatch.org/hy/alerts/հայկական-պատմամշակութային-ժառանգութ/ (մուտք՝ 07.02.2025); Tigranyan A., Już sama nazwa azerbejdżańskiej wystawy stanowi doskonały przykład fałszerstwa!, Agencja Informacyjn, 21.04.2025, Washaw, https://surli.cc/olwkfx (մուտք՝ 07.02.2025):

48 Արևմտյան Ադրբեջանի համայնք, Ադրբեջանի միջազգային զարգացման կազմակերպություն (AIDA), Բաքվի միջազգային բազմամշակութայինության կենտրոն, Ադրբեջանի Ազգային Գիտությունների Ակադեմիայի Պատմության և ազգագրության ինստիտուտ, Ազգային գորգերի թանգարան, Պատմության ազգային թանգարան, Պետական կերպարվեստի թանգարան, Ազգային խոհանոցի միություն և Կովկասի պատմության կենտրոն, ինչը վկայում է միջոցառման պետական բարձր հովանավորության մասին (Տես նաև Tigranyan A., Już sama nazwa azerbejdżańskiej wystawy stanowi doskonały przykład fałszerstwa!, Agencja Informacyjn, 21.04.2025, https://surli.cc/olwkfx (մուտք՝ 07.02.2025):

49 Embassy of the Republic of Azerbaijan to the Republic of Poland, Post by Nargiz Gurbanova on Azerbaijani cultural diplomacy event in Poland, Facebook, 25 May 2024, https://www.facebook.com/story.php?story_fbid=756896839964554&id=100069327334705&mibextid=qi2Omg&rdid=62OuE8gngunGAiK9 , (մուտք՝ 24.06.2025):

50 Latvian National Museum of Art, The Genetic Code of Memory. Azerbaijani Carpets, 11 April 2024, https://lnmm.gov.lv/en/press/press-releases/the-genetic-code-of-memory-azerbaijani-carpets-253 (մուտք՝ 24.06.2025):

51 Dekoratīvās mākslas un dizaina muzejs, "29. maijā no plkst. 12.00 līdz 15.00, Dekoratīvās mākslas un dizaina muzejs rīko zinātniskos lasījumus, kas veltīti ievērojamā tekstilmākslinieka, etnogrāfa un pedagoga Jūlija Straumes (1874–1970) daiļrades izpētei", Facebook, 24 May 2024, https://www.facebook.com/DMDMmuzejs/posts/7Rt2hdqzs3oc7ieuSiuF8UyYiroZQPoDVCAupCSZuxqa9uujbfiiexfUtXl?rdid=uKgk8WiCOqViXoO1#, (մուտք՝ 24.06.2025).

52 Նիդերլանդների ցուցահանդեսում կրկին ներկայացված են Արցախի Ջրաբերդի հայկական գորգագործական կենտրոնից սերված «Արծվագորգ»-երը, Սյունիքի և Նախիջևանի Գողթն գավառի «Որոտան» տիպի և Շիրվանի գորգերը ադրբեջանականի անվան տակ:

53 Նիդերլանդական օրագիր, Գորգերը որպես պատմական հիշողություն. Ադրբեջանը յուրացնում է հարևանների մշակութային ժառանգությունը, Հաագա, 25 June 2025, https://www.nidoragir.com/2025/03/1_21.html (մուտք՝ 24.06.2025)

54 International Committee of the Red Cross. 2019, p. 22.

55 International Committee of the Red Cross. 2019, p. 6.

56 Teijgeler R., So Yesterday Was the Burning of Books" — Wartime in Iraq. Lecture Held at Responsible Stewardship Towards Cultural Heritage Materials, Preconference of the IFLA Rare Book and Manuscript Section, Copenhagen,The Royal, 2005.

57 UN, Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, § 48.

58 UNESCO, Universal Declaration on Cultural Diversity, 2001, § 8.

59 UN, Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, § 21.

60 UN, Committee on Economic, Social and Cultural Rights, 2009, § 50.

61 UNESCO, The Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1954, art. 4.

62 Նույն տեղում՝ հոդված 21:

63 Ըստ արձանագրության՝ հանցագործություն են որակվում՝ ա) ուժեղացված պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքները հարձակման թիրախ դարձնելը, բ) ուժեղացված պաշտպանության տակ գտնվող մշակութային արժեքների կամ դրանց շրջակա տարածքի օգտագործումը ռազմական գործողությունների համար, գ) կոնվենցիայով և արձանագրությամբ պաշտպանված մշակութային արժեքների լայնածավալ ոչնչացումն ու յուրացումը, դ) կոնվենցիայով և արձանագրությամբ պաշտպանված մշակութային արժեքները հարձակման թիրախ դարձնելը, գողության, կողոպուտի կամ յուրացման ու վանդալիզմի գործողությունները (տես UNESCO, Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. 1999, Article 15 – Serious violations of this Protocol:

64 Տես նույն տեղում, հոդված 21:

Անկախության հոգեբանական ֆենոմենը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Եթե մի հրաշքով հնարավոր լիներ անցնել երկրից երկիր ու ժողովուրդներին հարցնել, թե ինչ է անկախությունը, համոզված եղեք, մարդիկ կդժվարանային պատասխանել այդ հարցին: Անկախությունը, նրա դերն ու նշանակությունը ազգերի կյանքում պատմաքաղաքական, կրոնամշակութային և սոցիալ տնտեսական և վերջապես՝ էթնո-հոգեբանական խիստ բազմաձալք երևույթ է: Չկա մի այնպիսի համընդգրկուն հայացք, որով հնարավոր լինի այն ամբողջացնել: Լավագույնը, ինչը որ կարելի է անել, այն է, որ կարող ենք խոսել անկախության այս կամ այն ասպեկտի մասին: Տվյալ դեպքում մեզ հուզում են անկախության հոգեբանական ընկալումները և, իհարկե, դրանց արտացոլումները հասարակական վարքի մեջ: Հարցը, թե ինչու են ազգերը ձգտում անկախության, հատկապես քաղաքական անկախության, ունի իր ունիվերսալ պատասխանը՝ պահպանել ազգային տեսակը, էությունը և զարգանալ: Այս խնդիրը տարբեր ազգեր տարբեր կերպ են լուծել և լուծում: Որոշ ազգերի համար անխուսափելի է եղել պայքարի ռազմական ճանապարհը, մյուսների համար այն դիվանագիտական ուղին է՝ միջազգային օրենքների և կարգերի իրավաքաղաքական կարգավորումներով, հայտնի է նաև հոգևոր, խաղաղ ընդվզման ուղին, Մահաթմա Գանդիի կիրառած ձևը Հնդկաստանում և այլն: Բոլոր դեպքերում բախտորոշ են եղել պատմական հանգամանքները: Ակնհայտ է մի բան՝ ազգային տեսակի պահպանությունը դոմինանտ, բացարձակ նպատակ է բոլորի համար. այլ հարց է, թե այս կամ այն ազգը ինչ ներքին մղումներով ու արտաքին ուժերի ազդեցությամբ է դա կյանքի կոչում: Ամերիկյան հայտնի տեսաբան Հանթինգթոնը իր «**Քաղաքակրթությունների պատերազմ**» արժեքավոր գրքում մոտավորապես այսպես է ներկայացնում իրավիճակը՝ «**Մահմեդականները կարող են դառնալ քրիստոնյաներ, ուղղափառները՝ կաթոլիկներ, պահպանողականները՝ լիբերալներ, դեմոկրատները՝ միապետականներ, բայց երբեք չինացին հոլանդացի չի դառնա, ռուսը՝ իսպանացի, հայը՝ թուրք, գերմանացին՝ արաբ»:** Սա պատմությամբ փաստված իրողություն է: Հարկ է նաև նկատել, որ Հանթինգթոնի այս դիտարկումները ներկայումս ինչ որ չափով հնացած են, ավելի ճիշտ կլինի ասել՝ տրանսֆորմացված: Աշխարհում ավելի բարդ գործընթացներ են տեղի ունենում: Բանն այն է, որ անգլո-սաքսոնական կենտրոնների կողմից հրապարակ հանված գլոբալիզմի փիլիսոփայությունը և գործընթացները, աշխարհը, ավելի ստույգ արևմտյան ու ասիական հատվածը վերջին երեսուն տարում նե-



տեցին կատարյալ քաոսի մեջ: Այսպես կոչված՝ «**Ժողովրդավարական արժեհամակարգը**» և մարդու իրավունքների պաշտպանության սին պատրանքները ոչ միայն չլուծեցին ազգերի հիմնարար հարցերը, այլև ստիպեցին, որ քաղաքական ցինիզմը և լպիրշությունը, «**համաշխարհային զոռբայությունը**» դառնան միակ հասկանալի լեզուն բոլոր մեծ ու փոքր տերությունների համար: Մարդկությունը, ասես, հետքայլ է անում դեպի բիրտ ժամանակներ: Բոլոր միջազգային կառույցները, որոնք իբրև թե պետք է կարգավորեին պետությունների և ժողովուրդների հարցերը, բացահայտեցին իրենց լիակատար սնանկությունը և անպետքությունը: Օրինակ, ՄԱԿ-ը և եվրոպական կառույցներն ամեն օր հրապարակում են ոչինչ չնշանակող բարձրագոչ որոշումներ, որոնք ոչ պաղեստինցիների բացահայտ ցեղասպանությունն են կասեցնում, ոչ կանգնեցնում ռուս-ուկրաինական արյունահեղությունը և ոչ էլ թուրքական էթնիկական զտումը և վանդալիզմը Արցախում: Այնպես որ, ապրում ենք մի նոր և հրեշավոր աշխարհում, ու ասես սրա վերջը չի երևում: Եվ այս դեպքում ինչպես կարելի է հույսն ուրիշների վրա դնել: Ու քանի որ սա է մերկ ճշմարտությունը, ուստի անկախությունն է այն քիչ թե

շատ հուսալի խարիսխն ու զրահը, այն «**զամբյուղը**», որի մեջ կարողանում է ապրել ազգային տեսակը և ինքնությունը: Եվ եթե ազգերը տեր չեն կանգնում այս «**զամբյուղին**», ամեն բան հայտնվում է գոյաբանական ռիսկերի տիրույթում: Արևելքից եկած մի ճշմարիտ խոսք կա՝ «**Դու ես պատճառը քո տառապանքների, քո դժբախտության ու մեծամտության: Ուրիշը պատասխանատվություն չի կրում քո ապրումների և զգացումների համար: Դու, միայն դու ես քո թե՛ դրախտը, և թե՛ դժոխքը**»: Իսկ մեր էպոսը, Դավթի բերանով էլ ավելի լակոնիկ է՝ «**Իմ ցեցը իմ անձից է: Էդ իմ սերմն է, որ ինձ սպանեց**»: Թերևս հայոց իրականության վերջին ամենահրեշավոր իրողությունը հենց այն է, որ ազգովին թույլ տվեցինք, որ այդ «**ցեցը**» արթնանա: Արթնանա, արթնացնի իր նմաններին ու խժռի ամեն ինչ: Այս թեմային կանդրադառնանք քիչ ավելի ուշ, հիմա փորձենք հասկանալ անկախության ընկալման հոգեբանական շերտերից մի քանիսը: Արդեն ասացինք՝ անկախության հոգեբանությունը դժվար ձևակերպելի բան է: Այն մի դեպքում՝ ազգային պատկանելության խորքային նույնականացում է, մեկ այլ դեպքում ինքնահարգանքի և արժանապատվության ամուր զգացումը, մեկ այլ պարագայում՝ բարձր ինքնագիտակցությունը և իհարկե՝ ինքնավստահ և անվտանգ ապրելու ձգտումը: Տվյալ երկրի քաղաքական կշիռը աշխարհում խիստ որոշիչ գործոն է: Տարբեր ազգերի մոտ այս ամենը ունի իր դրսևորման ուրույն կերպը: Օրինակ, երբ ռուս մարդուն ասես, որ եթե նա հազար կիլոմետր քայլի դեպի արևելք, դա իրենն է, եթե արևմուտք, հյուսիս կամ հարավ, նույնպես իրենն է, այդ ամենը իր երկիրն է: Սա լսելով՝ նա հնարավոր է ասի. «**որ այդպես է, ես պատրաստ եմ նաև զրկանքների մեջ ապրել, որովհետև սա իմ անկախ, ինքնիշխան երկիրն է, սա միմիայն իմն է....**»: Ահա թե ինչու են ռուսներն այդպես արագ մոբիլիզացվում իրենց հայրենիքի պաշպանության խնդրում, սպառնալիքներին դեմ-հանդիման: Զոհաբերվելը հանուն այս ամենի, ռուսական ընկալումներում այլընտրանք չունի: Այստեղ արդեն հայրենիք, անկախություն և պետություն եզրերը միահյուսվում են: Սա ուժեղ զգացում է, որը համեմատաբար թույլ է արտահայտված արևմտյան ազգերի մոտ: Իտալացին, գերմանացին, ֆրանսիացին և մյուսներն իրենց անկախության ապահովման այլ մոդելներ ունեն, նրանք դա փորձում են անել հնարավորինս ամուր համակարգեր ստեղծելով, սա նաև ամերիկյան մոտեցում է: Ասել է թե՝ «**անկախությանը պետք է տեր կանգնել ոչ թե հույզերի և բուռն զգացումների ուժով, ինչպես ռուսների մոտ է**», այլ ազգին ծառայող պետական համակարգերի օգնությամբ: Հետաքրքիր երևույթ են պարսիկները, չինացիները, կորեացիները, ճապոնացիները, սրանց համար էլ հզոր գործոն է նպատակադրումը այս կամ այն մեծ խնդրի շուրջ, որը կարող է միլիարդ մարդու դարձնել մեկ մարդ: Այս ազգերը ամուր կանգնած են իրենց ոտքերի վրա, նրանք ապրում են իրենց ճշտված շահերով և նպատակներով: Խնդիրն այստեղ ազգի

թվաքանակը չէ, այլ հավաքական ինքնագիտակցությունը և դրան նպաստող հոգեկերտվածքը: Տարիներ առաջ մի զրույցի ժամանակ ես հարցրի իրանագետ և արևելյան ազգերի պատմության հմուտ հետազոտող Գառնիկ Ասատրյանին. «**Այդ ինչպե՞ս է, որ քրդերը Մերձավոր Արևելքի մի քանի երկրներում, ունենալով մոտ 40-45 միլիոն բնակչություն, այդպես էլ չեն կարողանում ստեղծել անկախ պետություն**»: Նա պատասխանեց. «**Նրանց քանակը շատ բան չի որոշում, քանի որ քրդերը նախ՝ շատ խղճուկ ազգային ինքնագիտակցություն ունեն, և հետո՝ նրանց նկարագրի և վարքագծի մեջ մինչ օրս գերիշխում են ցեղային կամ ավազակային, թալանչիական հակումները: Երբ մի տարածք են նվաճում, մտածում են ոչ թե ամրապնդվելու, այլ արագ կողոպտելու և հեռանալու մասին... Այ դրա համար էլ մյուս պետությունները նրանց միշտ օգտագործում են, դիմացը ոչինչ չտալով**»: Այս ամենով հանդերձ, բոլոր ազգերի համար էլ ճակատագրական կարող են լինել առաջնորդները, նրանց գործերը, արարքները և մանավանդ՝ չարածները: Մի բան է, երբ առաջնորդը անկախության գաղափարը գեներացնող կարգին, ազգասեր մարդ է, մեկ այլ բան՝ երբ պատահական, վախկոտ, թշնամիների և օտար ուժերի դրածո: Պատմությունը այսպիսի տխուր կերպարներ ևս շատ է տեսել: Մի բան է, երբ առաջնորդն իր հենարանն է դարձնում ժողովրդի առողջ, քաջարի, մտածող և սրտացավ ուժերին, մեկ այլ բան՝ երբ ամբոխին, նրա վախկոտ ու թուլամորթ հատվածին: Խնդիրն ընդամենը այն է, թե ինչ է խոստանում նա այս ամբոխին: Ու ցավալին այն է, որ նրանք կարող են հաջողել իրենց կեղտոտ նպատակադրումների մեջ: Հիշենք Օրուելի հայտնի խոսքերը՝ «**Առաջնորդները, որոնք իրենց ժողովուրդներին բերում են արյուն, ծանր աշխատանք ու տառապանք, արցունք ու դառը քրտինք, օգտվում են մեծ վստահությունից, քան այն քաղաքական գործիչները, որոնք խոստանում են բարեկեցություն և բարգավաճում**»: Ավա՜ղ, այդպիսին է ամբոխի էությունը: Շատ կարճ ժամանակահատվածում ամբոխի ողորմելի, վախկոտ ու մոր-

թապաշտ հատվածը սկսում է ազդել գործընթացների վրա նույնիսկ ոչինչ չանելով: Դեռ երբ էր սոցիոլոգիայի հայր Գուստավ Լեբոնն ասել՝ «**Ով կարողանում է ամբոխին գցել թյուրիմացության մեջ, դառնում է նրա տիրակալը...»:** Սրանք, այսինքն՝ ՔՊ-ական իշխանությունները, բարեբախտաբար, չդարձան նույնիսկ ամբոխի սրտի լիկատար տիրակալ, բայց առայժմ կարողանում են ապականելով առաջ գնալ: Այդպիսին է ցեցի բնույթը: Հանրայինի եթերից անհայտ ծագմամբ Հայկ Կոնջորյան անունով մի ստահակ հայտարարում է. «**Դաշնակցականները գուրգուրում էին Արարատ լեռը, որպեսզի կարողանան Մասիսի նկարներ և հայրենասիրություն վաճառել Սփյուռքին...»:** Պատկերացնո՞ւմ եք չէ, թե ինչ աստիճանի այլասերված միտք պետք է ունենա մարդը նման բան ասելու համար: Իսկ «գլխավոր ցեցի» համար այլևս վայրահաչի սահմաններ չկան: Եվ ամենաահավորն այն է. «**Երբ կեղծ խոսքերը հասնում են իրենց բարձրակետին և հագեցնում օդը, հասարակ մարդը սկսում է հավատալ, որ ձեռք է բերել մի խիստ կարևոր բան: Մինչդեռ նրա գլխում ընդամենը աղբ են լցրել»:** Վախի և շփոթի մեջ ապրող հասարակությանը կարելի է կերակրել նաև աղբով, ինչը որ ցեցերն անում են: Ռուսների մասին մի հանրահայտ խոսք կա՝ **«Բացի հիմարներից և ճանապարհներից, Ռուսաստանում կա ևս մեկ փորձանք. այն է՝ հիմարները ցուցանում են, թե որ ճանապարհով պետք է գնան մյուսները»:**

Սա նաև մեզ է պատուհասել: Անկախության հոգեբանական հիմքն, ասես, ջախջախվել է, և մարդիկ կարծես սկսել են վախենալ բուն անկախությունից: Նրանք կորցրել են նպատակը: Մի դառնական գողտրիկ առակ լավագույնս արտահայտում է մեր վիճակը: «**Վանական համալիրներից մեկում աշակերտը հարցրեց ուսուցչին,- ուսուցիչ, ինչպե՞ս հասնեմ իմ նպատակին,- ուսուցիչն էլ թե՝ «դեն նետիր քո ունեցած բոլոր ավելորդ բաները»:**

- Բայց ես ինչպես հասկանամ, թե ի՞նչն է ավելորդ, ինչը՝ ոչ:

Ուսուցիչն ասաց, որ կյանքը մի օր դա կհուշի: Այսպես օրեր անցան, աշակերտը չէր կոահում, թե ինչն է ավելորդ: Մի օր նրանք երկուսով գնացին լեռները որսի: Հանկարծ նրանց վրա հարձակվեց վագրը: Ուսուցիչը հանգիստ մնաց տեղում կանգնած, իսկ աշակերտը լեղաճաք եղած փախավ, ընթացքում դեն նետելով սուրը, վրայի վանականի ատրիբուտները: Աշակերտը մի կերպ բարձրացավ ծառը ու այդ կերպ փրկվեց: Վագրի հեռանալուց հետո նա իջավ, մոտեցավ ուսուցչին և հարցրեց,- «Կասե՞ք, թե ինչու վագրը հատկապես իմ ետևից վազեց՝ ձեզ անգամ չնկատեց:

-Վագրը քեզ հետապնդեց, - ասաց նա, - որովհետև տեսավ քո վախը, նույնիսկ, երբ դու նետել էիր քո վրայի ավելորդ բաները: Հենց այդ վախն է քո ունեցած ամենաավելորդ բանը»: Այս վախերն են, որ շեղում են մեզ մեր նպատակից, դարձնում խոցելի՝ պոտենցիալ զոհ: Մեր հասարակության մի մեծ հատված **վախենում է ոչ միայն թուրքերից, այլև բուն անկախությունից:** Եվ սա արտահայտվում է թե՛ գիտակցված ձևերով, և թե՛ ենթագիտակցորեն: Պարզ է չէ՞, որ այս ուղղությամբ աշխատում է ՔՊ-ական մի հզոր քարոզչական մեքենա, որն ուղղորդվում է Անգլիայից, Անկարայից ու Բաքվից: Ակնհայտ է, Նիկոլը իշխանության է բերվել Արցախը հայաթափելու, թուրանական միջանցքը բացելու և ռուսներին Հարավային Կովկասից դուրս հանելու համար: Ահա, թե ինչու են ականապատված նրան իշխանությունից հեռացնելու բոլոր ճանապարհները: Նիկոլին հեռացնելը դժվար է այն պարզ պատճառով, որ նա Թուրքիայի ու Ադրբեջանի **ստվերն** է Հայաստանում, իսկ ստվերը չի կարելի ջախջախել խոսքով, քարով, մուրճով, կամ որևէ այլ ձևով: Կամ պետք է ստվեր ստեղծող առարկան վերացնես, կամ էլ՝ լույսի աղբյուրը բերես այն դիրքին, որն այլևս ստվեր չի առաջացնում: Պետությունը, հայրենիքը և անկախությունը հենց այդ լույսի աղբյուրի նշանակությունն ունեն: Պետք է խորությամբ գիտակցել իրավիճակի օրհասականությունը և պինդ կառչել մեր անկախությունից: Այո, արդեն ուշ է, որպեսզի հետ վերադառնանք ամեն բան ճիշտ սկսելու համար, բայց ուշ չէ առաջ գնալը ամեն ինչ ճիշտ ավարտելու նպատակով: Հնարավորությունները բազմապատկվում են, երբ մարդիկ օգտվում են դրանից:

Միշտ հիշեք թունավոր նետով խոցված Սասունցի Դավթի վերջին խոսքերը. «Իմ ցեց իմ անձից է, Էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց»:

Իրական թշնամին թաքնված է յոթ գոմշի կաշվի ետևում և վախենում է բացեիբաց մեր դեմ կռվել: Նա մեզ ներսից կրծող ցեց է դարձնում մեր սերմը կրող խառնածիններին ու զոմբիներին՝ ուղեղներն անջատած ու ինքնուրույն մտածելու, վերլուծելու կարողությունն ու մարդկային հատկանիշները կորցրած հայերին:

Ցեց մի՛ դարձեք,
Ցեց մի՛ ծնեք,
Ցեց մի՛ դաստիարակեք:

Պոչամբարները Հայաստանում՝ դանդաղ գործողության քիմիական ռումբեր

Արմեն Վարդանյան
Լրագրող

Խորհրդային Հայաստանի ագրարային տնտեսությունը նորանկախ հանրապետությունում արագորեն իր տեղը զիջեց հանքարդյունաբերությանը: Գյուղատնտեսության ոլորտն ահռելի ծավալներով նվազեց, իսկ Նիկոլ Փաշինյանի իշխանության առաջին իսկ տարիներին ընդհանրապես փակվեց ոլորտային նախարարությունը, որն էլ ավելի արագացրեց տնտեսության այս կարևորագույն ճյուղի անկումը: Դրան զուգահեռ հանքարդյունաբերությունն արագ ընդլայնվեց, սակայն ոչ ամբողջական արտադրանքի ստացման շղթայով, այլ հումքի արտահանման տեսքով:

Հայաստանը հանքային խտանյութի արտահանման հետևանքով ոչ միայն հսկայական ֆինանսական միջոցներ է կորցնում, այլև նման արտադրությունը էկոլոգիական լրջագույն բացասական հետևանք է ունենում հանքավայրերին հարակից ազդակիր համայնքների բնակչության և ՀՀ փոքր տարածքի եզակի ու հարուստ էկոհամակարգի վրա: Հայաստանի տարածքը և ռելիեֆն այնպիսին է, որ գյուղատնտեսական ապրանքների արտադրության և սննդի շղթայի միջոցով ազդակիր են բոլոր բնակավայրերը և վնասակար ազդեցությունը տարածվում է ՀՀ բոլոր քաղաքացիների վրա:

Հայաստանում առկա է մոտ 500 հանքավայր, որոնցից 22-ը բարձր վտանգավորության են՝ բազմամետաղային: Էկոլոգիապես մաքուր հանքարդյունաբերությունը սեփականատերերից պահանջում է լրացուցիչ և զգալի միջոցներ, որոնք տարբեր ժամանակներում տարբեր պատճառներով չեն ներդրվել և այսօր հանքշահագործումը Հայաստանում հիմնականում նույնանում է շրջակա միջավայրի աղտոտման հետ: Հատկապես լրջագույն խնդիր են արտադրական թափոնները, որոնցից վտանգավորները կուտակվում են պոչամբարներում, իսկ պակաս վտանգավորները դատարկ ապարների կուտակման վայրերում:

Հայաստանում պաշտոնական տվյալներով կա 23 պոչամբար, որոնք միասին շուրջ 365 մլն մ³ փաստացի ծավալ ունեն: Դրանց մի մասը գործող է, իսկ 11-ը կոնսերվացված է և ռեկուլտիվացման ենթակա: Ռեկուլտիվացիան բնական խախտված էկոհամակարգի առավելագույնս վերականգնումն է, որն արվում է պոչամբարի վրա հողի հաստ շերտի ավելացմամբ և դրան հարակից ջրահեռացման համակարգերի ստեղծմամբ՝ կանխելու համար հողի շերտի լվացումը:

Ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերը կորցնում են իրենց առաջնային արժեքը և բացասաբար են ազդում շրջակա միջավայրի՝ կենդանական և բուսական աշխարհի վրա, իսկ պոչամբարները

դանդաղ գործողության ռումբեր են մեր հասարակության համար: Հանրապետությունում պարբերաբար իրականացվող ուսումնասիրությունները փաստում են հանքշահագործման հետևանքով, հատկապես պոչամբարների հարակից տարածքներում և բնակավայրերում, մարդու առողջության համար վտանգավոր ահռելի քանակությամբ ծանր մետաղների և քիմիական նյութերի առկայությունը:

Դրանք հայտնաբերվում են մարդկանց, հատկապես երեխաների օրգանիզմում և մազերում: Բացի այդ, աղտոտված գյուղատնտեսական արտադրանքի միջոցով այդ նյութերը ներթափանցում են ոչ միայն պոչամբերների մոտ բնակվողների, այլև ողջ հանրապետության բնակչության սննդի շղթա:

Հայաստանի տարածքում առկա պոչամբարների մի մասը գործող է, մի մասը՝ ռեկուլտիվացված, սակայն կան նաև լքվածները, որոնք ռեկուլտիվացիայի կարիք են զգում: Խորհրդային տարիներին մասնակի վերականգնված պոչամբարները, տասնամյակներ շարունակ լրացուցիչ դիտարկման չարժանանալով, կորցնում են նվազ վտանգավոր լինելու իրենց կարգավիճակը: Տարիների ընթացքում անձրևաջրերը լվանում են պոչամբարի վրայի հողի բարակ շերտը, և ջուրը, ծանր մետաղներով հարստանալով, հոսում և լցվում է հանրապետության հարուստ ջրային համակարգը:

Արծվանիկի պոչամբարը

Դաստակերտի չօգտագործվող պղնձա-մոլիբդենային հանքավայրի պոչամբարն այսօր այդ վիճակում է: Պոչամբարի եզրով կառուցված ջրահեռացման համակարգը, որով գետը շրջանցում էր վտանգավոր տարածքը, այլևս չկա: Ձրերը, քայքայելով պոչամբարը, առու են բացել դրա մեջ՝ դառնալով նաև փլուզման հետևանքով խոռոչների առաջացման պատճառ: Հարակից տարածքով անցնող Կըշկոշտի գետը լվանում է այնտեղ եղած ծանր մետաղները և հասցնում Այրիգետ: Պոչամբարից ներքև՝ երկու գետերի միախառնման վայրում, ջրի որակն ընկնում է:

Այս տարածքներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդերքօգտագործման թափոնների կուտակման վայրում և հողային շերտում մկնդեղի պարունակությունը 11-14 անգամ գերազանցում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան, իսկ ցինկի պարունակությունը՝ 7 անգամ: Վերջիններս հողի քիմիական աղտոտման տեսանկյունից համարվում են առաջին դասի վտանգավորության նյութեր: Նման վիճակում են նաև ռեկուլտիվացված մյուս պոչամբարները:

Ներկայում Հայաստանում գործող պոչամբարներն էլ են մեծ վտանգ ներկայացնում: Բացի այն, որ դրանցից, այսպես ասած, մաքրաջրերը վերջին հաշվով դուրս են հոսում որոշակի աղտոտվածության աստիճանով, տարվա շոգ եղանակին էլ «թունավոր լճի» որոշ ափամերձ չորացած հատվածներից քամին օդ է բարձրացնում վտանգավոր մետաղներով հագեցած փոշին և այն տարածում կիլոմետրերի շառավղով:

Մասնագիտական ուսումնասիրությունների մտահոգիչ արդյունքները

Վերջին տարիներին պոչամբարների խնդիրը դարձել է ոչ պետական կազմակերպությունների ուսումնասիրությունների առարկան: Այս միտումի պատճառը պետական պատասխանատու կառույցների ոչ արդյունավետ գործողություններն են, որոնք ոչ միայն չեն նպաստում տվյալ հիմնախնդրի լուծմանը, այլև իրավիճակն էլ ավելի են բարդացնում:

15 տարուց ավելի է, ինչ չեխական «Առնիկա» կազմակերպությունն ուսումնասիրություն է անցկացնում Հայաստանում: Վերջինը «Քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հայաստանի քիմիական անվտանգության պաշտպանությանը» ծրագրի շրջանակներում հայկական «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի և «Համայնքային աջակցության և համախմբման կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է Չեխիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրություններ են անցկացվել ազդակիր 4 համայնքի 5 բնակավայրում՝ Արարատի մարզում Արարատ և Սուրենավան գյուղերում, Լոռու Քարաբերդ բնակավայրում, Կոտայքի մարզի Մեղրաձոր և Արագածոտնի մարզի Մելիքգյուղ բնակավայրերում, որտեղ գործում է հանքարդյունաբերությունը:

Այդ համայնքներից վերցված բոլոր փորձանմուշներում հայտնաբերվել են մեծ քանակությամբ մկնդեղ, ինչպես նաև ծանր մետաղական էլեմենտներ՝ կապար, կադմիում, սնդիկ, պղինձ: Վերջիններս ազդում են մարդու լյարդի, երիկամների, նյարդային և ոսկրային համակարգերի, ինչպես նաև ուղեղի վրա:

Արարատի մարզի Արարատ համայնքում 2023 թ. հողի փորձանմուշներ են վերցվել Կախանովի ջրանցքից, իսկ տեղի բնակիչներից՝ կենսաբանական նմուշներ: Մկնդեղի ամենաբարձր կոնցենտրացիան հայտնաբերվել է Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի հարակից տարածքում, որը 241,2 մգ-ով բարձր է եղել այլ նմուշներում մկնդեղի միջին պարունակության միջակայքից՝ 0,1-ից մինչև 67 մգ մկնդեղ՝ 1 կգ չոր

Արարատի ցիանային պոչամբարը

քաշի մեջ: Հողի բոլոր փորձանմուշներում մկնդեղի կոնցենտրացիաները գերազանցել են Հայաստանի հողի համար սահմանված չափաքանակները:

Մկնդեղի կոնցենտրացիան մարդկանց մեզի բոլոր նմուշներում միջինում կազմել է 14,28 մկ/՝ մկնդեղի 1 գ կրեատինինի համար, ինչն ավելի բարձր է, քան բնակչության եվրոպական խմբերում է: Բարեբախտաբար մարդկանց մազերում մկնդեղի կոնցենտրացիաները չեն վկայում կրիտիկական քրոնիկ ազդեցության մասին:

Հողի նմուշներում պղնձի կոնցենտրացիան միջինում կազմում է 115,7 մգ պղինձ՝1 կգ չոր քաշում, ինչը նույնպես գերազանցում է Հայաստանի հողի համար սահմանված ստանդարտները:

Իսկ ահա Լոռու մարզի Փամբակ համայնքի Քարաբերդ գյուղում, որտեղ «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ն շահագործում է Քարաբերդի ոսկու հանքավայր, հիմնական աղտոտումը տեղի է ունենում մկնդեղով, դրա կոնցենտրացիաները գերազանցում են Հայաստանի հողի համար սահմանված ստանդարտները՝ որոշ դեպքերում հասնելով 172 մգ մկնդեղի՝ 1 կգ չոր քաշում: Տեղի ոսկու հանքավայրի դրենաժի նստվածքի նմուշներում առկա են պղնձի բարձր կոնցենտրացիաներ, ինչն աղտոտում է Փամբակ գետը: Ուսումնասիրության արդյունքում արդյունաբերական թափոններից վերցված նմուշների վերլուծությունը ցույց է տվել, որ թափոնների մեջ պղինձը բարձր կոնցենտրացիաներով է առկա՝ հասնելով 402 մգ-ի՝ 1 կգ չոր քաշի դիմաց:

Ուսումնասիրությունների ժամանակ Մեղրաձորում նաև հայտնաբերել են ջրի հոսքով աղտոտվող տարածքներ, իսկ այդ ջրերը հոսում են հանքավայրից:

Հայկական ուսումնասիրությունները՝ ադրբեջանական քարոզչության գործիք

Հայկական փորձագիտական շրջանները չեխական «Առնիկա» կազմակերպության գործունեության մեջ բացասական միտումներ են տեսնում, քանի որ հրապարակված մտահոգիչ բացասական տվյալները ադրբեջանական կողմը միանգամից վերցնում է և օգտագործում իր քարոզչության մեջ: Հայկական մասնագիտական համայնքը արդարացիորեն հարցադրում է հնչեցնում, թե ինչու Չեխական ընկերությունը չի ուսումնասիրում նաև Ադրբեջանի տարածքը, որտեղ նավթարդյունաբերության էկոլոգիական վնասներն աղետալի չափերի են հասել և վտանգում են ոչ միայն այդ պետության տարածքները, այլև՝ հարակից պետությունների, իսկ Կասպից ծովի ավազանի պետությունների ափամերձ տարածքներում բնապահպանական աղետ է: Այսօր արդեն Ադրբեջանը սկսել է նույն՝ անպատասխանատու ձևով շահագործել օկուպացված Արցախի Կաշենի հանքավայրը, ինչպես նաև Քարվաճառում կառուցված բազմաթիվ հէկերը:

Բանն այն է, որ «Առնիկա» կազմակերպությունն արդեն տևական ժամանակ ուսումնասիրություններ է անցկացնում հետխորհրդային մի շարք երկրներում, օրինակ՝ Ղազախստանում, սակայն Ադրբեջանը հայտնի պատճառներով վերջինիս թույլ չի տալիս մուտք գործել իր տարածք:

Սակայն այսօր վերոնշյալ կազմակերպության և հայկական հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ոչ թե պետք է քննադատել, այլ ի գիտություն ընդունել և դիտարկել որպես ահազանգ: Դրանք կարևոր են իրականացված միջազգային բարձր չափանիշներով, ընդ որում՝ ոչ ՀՀ պետական բյուջեի հաշվին և պետք է օգտագործվեն ոլորտի քաղաքականությունը մշակելու համար:

Միթալայի պոչամբարը

Ավելորդ չէ նշելը, որ Ադրբեջանի կողմից այս ուսումնասիրությունների արդյունքները քարոզչական նպատակով օգտագործելու պատճառով բարձրացած վրդովմունքի ալիքի վրա «Առնիկան» հանդես եկավ հայտարարությամբ, նշելով, որ զբաղվում է բացառապես մասնագիտական աշխատանքով: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Ինչ վերաբերում է Հայաստանին, մենք հրապարակայնորեն դատապարտել ենք 2023 թվականին Ադրբեջանի ներխուժումը Լեռնային Ղարաբաղ և սկսել ենք դրամահավաք-արշավ՝ օգնելու մարդկանց, ովքեր ստիպված են եղել լքել ադրբեջանական ուժերի կողմից գրավված տարածքները»:

Պոչամբարների հիմնահարցը լուծելու համար անհրաժեշտ է հասարակության ապագայով մտահոգ կառավարություն

Պոչամբարների խնդիրը հեշտ լուծելի է, բայց պետությունն այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկում: Լուծումներից մեկը հանքանյութի լվացման փակ շրջանառու համակարգի շահագործումն է, երբ խտանյութի ստացման համար ոչ թե նոր աղբյուրից է մաքուր ջուր վերցվում, այլ հենց տվյալ ընկերության պոչամբարից, որի ջուրն արդեն իսկ պարունակում է արդյունահանվող մետաղները:

Այսօր այդպես են աշխատում Քաջարանի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատները, սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ պոչատարների վրա վթար է լինում, կամ ջրի շրջանառությունն են անջատում էլեկտրաէներգիա խնայելու համար:

Երկրորդ տարբերակն առանց պոչերի հանքշահագործումն է, որն արդեն վաղուց կյանքի է կոչվել զարգացած երկրներում, բայց ոչ Հայաստանում: Արտադրության նման եղանակ են խոստանում Ամուլսարում, բայց այն տարբեր հանգամանքներով պայմանավորված չի իրականացվում:

Կա նաև երրորդ տարբերակը: Հայտնի ճշմարտություն է, որ պոչամբարը բազմամետաղների հանքավայր է, և զարգացած երկրներում վաղուց այդ տարածքները հանձնվում են ընկերություններին, որոնք պոչհանքից կորզում են մետաղներ և դրանից հետո թողնում համեմատաբար անվնաս չոր զանգված: Մի քանի տարի առաջ Հայաստանում էլ փորձ արվեց պոչամբարներից մեկը հանձնել ընկերությանը շահագործման, որպեսզի այնտեղից մետաղների արդյունահանում իրականացվի և արդյունքում պոչամբարը վերացվի, բայց բյուրոկրատական քաշքշուկների պատճառով ծրագիրը չեղարկվեց:

Բանն այն է, որ պոչամբարներից արդյունահանումը ծախսատար գործընթաց է, և ներդրողին շահագրգռելու համար, անհրաժեշտ են արտոնյալ պայմաններ, հակառակ դեպքում՝ հանք շահագործողը և պոչամբարը շահագործողը հավասար պայմաններում չեն գտնվի, իսկ այդ դեպքում երկրորդի համար տվյալ գործունեության ձևը ձեռնտու չի լինի:

Այս հարցում պետական քաղաքականությունը ծայրաստիճան մտահոգիչ է: Հանրապետության գործադիր մարմինը, փոխանակ արտոնություններ տրամադրելով խթանի պոչամբարներից մետաղների արդյունահանումը՝ այդ գործընթացը դարձնելով շահավետ, ինչը միաժամանակ կօգներ վերացնել երկրի տարածքում առկա դանդաղ գործողության քիմիական ռումբերը՝ պոչամբարները, և զարգացնել հանքարդյունաբերության նոր, հեռանկարային ճյուղ՝ ապահովելով մեծ բյուջետային մուտքեր, մինչ օրս չի ստեղծել բարենպաստ պայմաններ անգամ մեկ ընկերության համար: Մինչդեռ այս ճանապարհով հնարավոր կլիներ լուծել Հայաստանի ներկայիս թիվ մեկ բնապահպանական խնդիրը և չեզոքացնել մեր կենսապայմանները վտանգող խոշոր ռիսկը:

Հայոց պետականության իդեալը Համաստեղի «Սպիտակ ձիաւորը» դյուցազնավեպում

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

1930-ական թթ. Սփյուռքի հայ գրականության թեմատիկ որոնումները հաճախ հանգում էին Հայոց պետության ու պետականության խնդրին, որի քննությունն առնչվում էր աշխարհասփյուռ հայության վերաբերմունքին աշխարհի քաղաքական քարտեզի մի անկյունում ծվարած Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Համաստեղը (Համբարձում Կելենյան, 1895-1966) ՀՅԴ հավատավոր ու գործուն անդամներից էր, երազեց, բայց չտեսավ Խորհրդային Հայաստանը, որ սիրում էր հեռու հեռվից՝ որպես կորցրած Բնօրրանից փրկված մի պատառիկ: Նա օրերի հետ ծնվող ու նրանց հետ էլ անհետացող քաղաքական-կուսակցական հարցերի մեջ երբեք չկորցրեց հայությանն իր թևերի տակ հավաքող Հայրենիք ունենալու երազանքը: Դեռևս 1926 թ.՝ նա ծրագրել էր տեղափոխվել Երևան, բայց ընկերները խորհուրդ տվեցին չվտանգել կյանքը:

Համբարձում Կելենյանը պարտավոր էր ենթարկվել կուսակցական որոշումների, բայց, որպես ազատամիտ հայ, ոգևորվում էր Խորհրդային Հայաստանի ամեն մի նոր ձեռքբերումով, վշտանում ակնառու բացթողումների համար, իսկ Հայրենական մեծ պատերազմի երկար ու ձիգ տարիներին սրտի թրթիռով էր սպասում ռազմաճակատի լուրերին: Գրողը հոգու խորքում միշտ փայփայում էր ազատ, անկախ Հայաստանի տեսլականը և համոզված էր՝ դա միայն երազանք չէ ու կարող է իրականություն դառնալ ոչ այնքան հեռավոր ապագայում:

1931-1933 թթ. «Հայրենիք» (Բոստոն) ամսագրի համարներում շարունակաբար տպագրվում էր Համաստեղի «Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպը՝ նվիրված 20-րդ դարասկզբի հայոց ազատամարտին ու նրա անմոռաց հերոսներին: Դյուցազնավեպն առանձին գրքով լույս տեսավ 1952-ին, Լոս Անջելեսում:[1] Այս երկհատոր ստեղծագործության ամենահուզիչ էջերից են գրողի ու նրա հերոսների մտորումները հայոց պետականության մասին: Ավանդական «Ո՞վ ենք մենք», «Որտեղի՞ց ենք գալիս» և «Ո՞ւր ենք գնում» հարցերին պատասխանելուց առաջ Համաստեղը բնութագրում է ՀԱՅին՝

ա) «...իր խորքին մէջ այնքան համամարդկային, որ կ՚օրհնէ աշխարհի չորս կողմերը: Կ՚օրհնէ հողը, պտղաբերութիւնը, գիւղը, քաղաքը, անապատը, վանքը ու բոլոր ժողովուրդները աշխարհի» (2, 642),

բ) պահպանել է «հին դարերէն, հեթանոսականէն խաս գոյները» (2, 639), որոնք համատեղում է քրիստոնեական համատիեզերական Սիրո հետ,

գ) «Հայ ժողովուրդը հողին հետ մտերմացած՝ նոյնիսկ կը մոռնար իր թշնամին: Աշխատանքին հետ ան կը լեցուէր անսահման բարութիւնով. հեթանոսի մը պէս կ՚ողջունէր արեւը, որ կարծես իր աղօթքին հետ կը ցաթէր: Ան կ՚ըմբռնէր աւետարանի էջերուն չափ իմաստուն հողին բարութիւնը ու իր սիրտն ալ կը դառնար արգասաւոր, ճիշտ հողին պէս» (2, 486),

դ) հայն ապրում է պապերից ժառանգած հողապաշտ ոգով, ու «Ամէն հայու մէջ կայ էդ կանչը: Էդ մեր պապերու սրբազան հիվանդութիւնն է» (2, 622):

Համաստեղը հային բնորոշում է որպես «կէս-հեթանոս, կէս-քրիստոնյա» և մարդկության պատմության ընթացքը դիտարկում է որպես թատերաբեմ չարի ու բարու, լավի ու վատի մշտական պայքարի, որի արմատները հասնում են արարող մարդկանց ու ավարառու մարդակերպ էակների գոյապայքարին:

«Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպի էջերում ապրում ու գործում են պետականամետ հերոսներ, որոնց անձնազոհության ոգին ոչ միայն հիացնում է, այլև օրինակելի է: Մարդկությունը դարեր շարունակ խոնարհվում է բիրտ ուժով հաստատվող իրավունքի առաջ, այնինչ հայության համար առաջնային արարման դաշտում գործող աստվածային սկզբունքներն են: Համաստեղը զգուշացնում է. «Վրէժը երբեք շինարար չէ. քանդող է» (2, 600): Հայի ու հայության կոիվը դարերի ընթացքում մարդու ավարառու տեսակի դեմ է (Հովհաննես Թումանյանը բնորոշում է *մարդակեր* բառով): Հայոց պետությունը

Համապատկեր

պիտի կառուցվի «լաւ, գեղեցիկ հիմքերու վրա» (2, 600),– հատուկ շեշտում է գրողը, որպեսզի հայ երեխան «բարիին եւ չարին պէս» իմանա «թուրքին եւ հային տարբերութիւնը» (2, 600): Հայոց պետության մեջ հարգում են ազատությունը բոլոր հնարավոր դրսևորումներով, իսկ պետականության նկարագիրն ամբողջացնում է այս պատկերը. «Պէտք է պահել ծաղիկներու բազմազան գոյները, աղբրտի՛ք, եթէ կ՚ուզէք գարունը լրիվ տեսնել» (2, 601):

Գրողը համոզված էր՝ մեր ազգային թուլություններից ամենակործանարարը քաղաքական, կուսակցական բաժանումներն են, որ պառակտում են հայության ուժերը: Նա դյուցազնավեպում պատկերում է բոլոր հայերի՝ անկախ ապրած դարաշրջանից ու դավանած սկզբունքներից, Հայրենիքը, որի ազատության համար զենք են վերցրել հայության հարյուրավոր սերունդներ, այսօր էլ ստիպված են կռվել և՛ արտաքին, և՛ ներքին թշնամու դեմ:

Դյուցազնավեպի գլխավոր հերոսներից դոկտոր Նայիրյանը [նախատիպը Նիկոլ Աղբալյանն (1874 - 1947) է – Մ. Խ.] լավ գիտի, որ աշխարհում գործում է «Զա՛րկ, եւ իրաւունքը քուկդ է» ամենահաղթ սկզբունքը, բայց հայության ճանապարհը դա չէ, քանի որ հայը «իր մարդկային ու բարոյական ըմբռնումով վաղուանն է» (2, 406): Հայն ու հայությունը ծառայում են մարդկության ապագային. «Պահենք այս ազնիւ ժողովուրդը վաղուան համար, որ ան կարենայ իր դերը կատարել մարդկային յառաջդիմութեան մէջ դէպի բարոյական կատարելութիւն: Մնքի զօր է, աղբե՛րս, մանաւանդ՝ մեզ համար պահանջել մարդկային եւ կամ քրիստոնէական բարոյականութիւն: Մարդկային մեծագոյն բարոյականութիւնը ուժ է ինքնին եւ ուժը ուժով կարելի է լիակատար ընել» (2, 406):

Մեր օրերում պատկերը նույնն է. այսօր էլ այժմեական է դյուցազնավեպի գլխավոր հերոսի՝ Չերչի Կիրոսի [նախատիպը Հրայր Դժոխքն է (Ղազարյան Արմենակ, 1864-1904) – Մ. Խ.) դժգոհությունը եվրոպացի դիվանագետներից. «– Երբ կը ջարդուէր հայ ժողովուրդը, ըսիք, որ Աստուած իր սիրելի զաւակներուն այդպէս է կամեցէր: Ըսէք նաեւ, որ թուրքերն են դարձեր Ալլահին սիրելին, եւ Ալլահը այդպէս կամեցեր է ... Չէ՛, մենք չենք ջարդէր, միայն կ՚ուզենք, որ չի ջարդուինք» (2, 525):

Սա պատմության դասերից և կատարվածը վերաիմաստավորելու փորձերից ծնված հայոց ազատամարտի «նոր Տասնաբանեայ»ն է: Հայերս, հավատարիմ մնալով ցանկալին իրականի տեղ ընդունելու մեր ազգային նկարագրին, հաճախ ենք հայտնվում գոյության ու չգոյության եզրին, բայց համառորեն պահպանում ենք հավատարմությունը համամարդկային արժեքներին, որոնցից ամենաարժեքավորն ազատությունն է:

Հայն իր էությամբ արարող է, շատ հեռու է «թուրքի ձեւի ոճիրները» ընկալելուց, բայց ժամանակը հաստատեց՝ մեր հարևան ցեղերը շատ չեն հեռացել նախամարդու բնազդներից: Գարեգին Նժդեհը (Տեր-Հարությունյան, 1886-1955) այսպես է ձևակերպել մեր ազգային-ազատագրական պայքարի հիմնական սկզբունքը. «Պատերազմիր այնպես, որ չամաչես տարածդ յաղթանակից: Արդար է յաղթանակդ, երբ այն արդար է համարում պարտուած թշնամիդ անգամ»:[2] Հայ ֆիդային պաշտպանում է տկարին, թույլին, անզեն մարդուն՝ անկախ ազգությունից:

Համաստեղի դյուցազնավեպի և հայ գրականության ինքնատիպ հերոսներից է ջրաղացպան Նավոն: Նա կռվի դաշտում ինքնապաշտպանական բնազդով կրակում է իր կողմը վազող քրդի վրա: Քուրդն աչքերը փակում է Նավոյի գրկում՝ կարծես գոհ, որ մարդու թևերի մեջ է մեռնում:

Ջրաղացպանը համոզված է՝ «Ճշմարիտը կեանքն է», և «բան մը կար սխալ մարդոց մէջ...» (2, 275): Հայության կենսական տարածքում միշտ հաղթում են ապրելու և ապրեցնելու աստվածատուր օրենքները, որոնք ստիպում են Նավոյին գտնել ու խնամել իր սպանած քրդի որբերին:

Ուժի իրավունքով ապրող աշխարհում մարդու արարող տեսակի պաշտպանությունը հնարավոր է ազգային պետական համակարգում, որտեղ առաջնային են ազատության, հավասարության, խաղաղության սկզբունքները: Համաստեղը «Սպիտակ Ձիաւորը» դյուցնազավեպի վերջին հատվածում, շրջանցելով ժամանակ և տարածություն, պատկերում է հայոց պետությունը, և վեպը, հատկապես մեր օրերում, կարդացվում է որպես ազգային գոյության հիմնախնդիրները ներկայացնող ծրագրային վեպ:

Համաստեղը, որպես ՀՅԴ անդամ, Խորհրդային Հայաստանից բաժանված էր կուսակցական անջրպետներով, բայց գիտեր՝ Հայաստան աշխարհից մնացած այդ մի պատառիկ հողն է, անկախ քաղաքա-

կան մակդիրից, աշխարհասփյուռ հայության ազգային երազանքների իրագործման կիզակետը: Հեռու հեռվից Խորհրդային Հայաստանը կարծես կորցնում էր *Խորհրդային* մակդիրը, և գրողը դյուցազնավեպում անդրադարձավ իրեն ու իր նմաններին խանգարող մի քանի հանգամանքների:

Դյուցազնավեպի «Տոքթ. Նայիրեան Փարիզի մէջ» և «Գարուն է» գլուխներում Համաստեղը ներկայացնում է համայնավարական ընկեր Բնակունուն՝ կյանքից կտրված «գրքերու մարդ»ուն: Այս հերոսը միշտ խոսում է եվրոպական երկրներին ու կառույցներին բողոքելու, դիմելու անհրաժեշտության մասին, մոտավոր պատկերացում անգամ չունի Բնօրրանում կատարվող դեպքերից: Նայիրյանը նրա մասին ասում է. «Էս մարդու ոտքերը վեր են գետնէն: Գործնական ոչինչ ունի իր մէջ» (2, 631), այնինչ Նայիրյանը Փարիզ է բերել հայ ժողովրդի ըմբոստ ոգին ու շունչը, պատմում է տեսածի ու լսածի մասին, օրեր անց ընկերներին հրաժեշտ է տալիս՝ «այն հաւատքով, որ այս անգամ ձեզ այնտեղ՝ Երկրին մէջ կը տեսնեմ» (2, 451):

Համաստեղը ծայրահեղության մեջ չի ընկնում, ինչպես Մալխասը (Արտաշես Հովսեփյան, 1877-1962). «Զարթօնք» վեպի Գ հատորի վերջին գլխում համայնավար Հայկոն հրաժարվում է Սարդարապատ գնալ և կռվել:

1965-ին լրանում էին Համաստեղի ծննդյան 70 և գրական գործունեության 50-ամյա հոբելյանները: Սփյուռքի հայությունը պատրաստվում էր «համատիեզերական մասշտաբով» (Սիմոն Վրացյանի արտահայտությունն է) տոնել գրողի հոբելյանները: Գրողի հոբելյանը նշելու ծրագիր կար նաև Խորհրդային Հայաստանում:[3]

1965 թ. աշնանը Համաստեղը Բոստոնի իր երկհարկանի տանը սիրով ընդունեց խորհրդային երկրից ժամանած երկու «հյուրեր»ին, որոնց հյուրասիրելիս առաջարկեց խմել ազատ ու անկախ Հայաստանի կենացը: Մինչ հատուկ հանձնարարությամբ օվկիանոսի այն ափին հայտնված մարդիկ կհասցնեին զարմանալ կամ զարմանք ձևացնել, հյուրասեր տանտերը բացատրեց՝ Հայաստանը տասնամյակներ առաջ դաշնակցական հանրապետություն էր, հիմա՝ խորհրդային, բայց բոլոր հայերի երազանքն անկախ ու ազատ Հայրենիքն է:

Համաստեղի հոդվածներում, պահպանված ձեռագրերում կա հետաքրքիր մի դիտարկում. հայ ժողովրդի պատմության մեջ պարտություններն անգամ հաղթանակի արժեք ունեն, որովհետև հայ մարդը կռվի դաշտ է գնում հանուն հոգևորի, հանուն բարու: Մեր անցյալը, ներկան պետք չէ քննել մարդկությանը հայտնի ուժի իրավունքի օրենքներով. հայի ու հայության հարատևման ակունքները հոգևոր դաշտից քաղած և մարդկությանը դեռևս անհասանելի աստվածային օրենքներն են:

«Սպիտակ Ձիաւորը» դյուցազնավեպում անմոռանալի են այն պատկերները, երբ կռվի դաշտ իջնող ֆիդայիները, որպես երկնային օրհնություն, լսում են անվտանգ անկյունում պատսպարված «դպրոց»ի երեխաների «Այբ-Բեն»ը, իսկ երեկոյան՝ «նոր աշխարհ եկող երախայի մը սուր ճիչը» (1, 336): Սա արարող մարդու իրավունքները, Բնօրրանը պաշտպանելու համար հարկադրաբար կռվի դաշտ գնացող հայի գոյության և հավերժության գրավականն է, եթե ... մեր օրերի օրինակով՝ ավարառու, առաջին հայացքից հաջողակ, բայց մարդկայինի ու աստվածայինի դաշտից հեռու ապրող էակները (*մարդիկ* բառը չկարողացա գրել – Մ. Մ. Խ.), որոնց համար ազգայինն ու մարդկայինը պարզապես անհասանելի են, չփորձեն ու չհաջողեն պարտադրել իրենց գոյատևման հակամարդկային (սատանայական չասելու համար) կանոնները:



Հայ զինվորը խուսափում է ոճիր գործելուց, չի խախտում ինքնապաշտպանության ասպետական օրենքները: Համաստեղը վեպում խուսափում է արյունոտ տեսարաններից, բայց դիպուկ ու խոսուն վրձնահարվածներով ներկայացնում է իրական պատկերն այն երկրի, որով անցել է թուրքը: Ֆիդայի Հեթումը, տեսնելով ավերակ դարձած հայրենի գյուղը, մի խումբ ֆիդայիների հետ բնաջնջում է թուրքական գյուղը՝ լուծելով ծնողների և համագյուղացիների վրեժը:

Ֆիդայիները դատապարտում եմ Հեթումին ու նրա ընկերներին, զինաթափում:

Հիմա՝ մեր օրերում, չեմ դատապարտում Հեթումին. չէ՞ որ հենց Համաստեղն է արձանագրում. «առանց սպանելու իրաւունք չի պաշտպանուիր եւ էն տարրականը իրաւունքներուն ինքը կեանքն է» (2, 509), այլ խոսքով՝ թուրքին անհասանելի են հայ ֆիդայու կռվի ազնիվ ու արդար կանոնները:

Չերչի Կիրոսին զայրացնում է եվրոպական դիվանագետների՝ հայերի հետ «մարդավարի» խոսելու, բայց «շնականօրէն թուրքին արարքները» չդատա-

պարտելու կեցվածքը, որ անփոփոխ է մնացել: Հավելեմ՝ քաղաքակիրթ աշխարհն արդեն հարյուր տասը տարի խոսում ու խոսում է Հայոց ցեղասպանության մասին, միաժամանակ անտարբեր հայացքով նայում է արցախահայության հետ կատարվող հերթական ոճրագործությանը... ու լռում:

Պատմությունը կրկնվում է՝ որպես հայության հերթական ողբերգություն ...

Հովհաննես Թումանյանը «Ապաշավանք» հոդվածում (1914 թ.), դիմելով թուրքին, այսպես է ամբողջացնում հայ ժողովրդի դառն հիասթափության պատկերը. «Մեր սրտերում Ռայմսի տաճարից շատ ավելի մեծ մի տաճար կար, որի մեջ նա՝ *քաղաքակիրթ մարդը*, ապրում էր ձեզանից առանձին, նրանք խորտակեցին էն հոյակապ տաճարը, և մնացին դուրսը, իրենց ձեռքով արած ավերակների մեջ, ձեզ հետ միասին, ձեզ հետ հավասար»:[4]

Իսկ Արամ Հայկազը (Արամ Չեքեմյան, 1900-1986)՝ Համաստեղի գրչընկերն ու մտերիմը, ուղղակի հարցնում է. «Թուրքը ստեղծելուդ համար չե՞ս ամչնար, Աստուած...»:[5] Անմոռանալի է «Մենք քաղաքակրթուած ենք, իրար կը սպանենք, բայց իրար չենք ուտեր»[6] խոսուն պատկերը, որով Արամ Հայկազը բնութագրում է «քաղաքակիրթ աշխարհը», իսկ «Հաշտու՞իմ Աստուծոյ հետ» պատմվածքում գրում է. «Թուրքը Արարչագործութեան մեծագոյն սխալն է ու ամօթը... Շնչաւորներուն ամէնէն վայրագն ու ստոր ինը»:[7] Արամ Հայկազի Ուսուցիչը՝ Հակոբ Օշականը (Հակոբ Քյուֆեճյան, 1883-1948), գրում է. «Թուրքը Արեւելքին աղտն է, կեղտը, թարախը»[8], «Պատերազմը բնական ոլորտն էր թուրքին»:[9]

Մեր պատմության էջերից Համաստեղը հիշատակում է այն հերոսական օրերը, երբ երկրում խաղաղություն էր տիրում, բանակ ու հավլունի թուր[10] կար, բայց թագավորը որոշեց, որ այս ամենի կարիքը չկա, հրամայեց թուրը խոր թաղել: Սրանից հետո երկիրը դարձավ անվերջանալի պատերազմների թատերաբեմ: Գրողն իր քաջարի հերոսների պես հավատավոր քրիստոնյա է, բայց ստիպված է արձանագրել՝ քրիստոնեության համատիեզերական Սիրո օրենքը մարդու ու մարդկության համար անհասանելի ու անհասկանալի է:

Համաստեղի դյուցազնավեպի հերոսները «կյանքի միակ պայմանից՝ ազատությունից» (Դերենիկ Դեմիրճյան) զրկված հայ մարդիկ են, որ կռվի դաշտ են իջնում հանուն արարման, խաղաղ աշխատանքի ու համերաշխ համագոյակցության:

«Սպիտակ Ձիաորը» վեպում գրողը կերտել է հայ ֆիդայիների շքեղ պատկերասրահ՝ տարբեր խառնվածքներով, ճակատագրերով, բայց զենք վերցնելու նույնն հարկադրանքով, համամարդկային, ազգային արժեքների ու գաղափարների առջև նույնն խոնարհումով: Այս հերոսները բռունցքված հզոր ուժ են, որի արժեքը գիտի նաև թշնամին. «300 ֆէտայի աւելի կ'արժեն, քան թրքական բանակ մը» (1, 399):

Ազատության համար պայքարը միշտ ունի նվիրյալ մարտիկներ: Համաստեղը շատ լավ էր հասկանում այն խուլ անհամաձայնությունը, որ կար Խորհրդային Հայաստանի սահմաններում ծվարած հայության ազգային նպատակների և իշխող գաղափարախոսության միջև: Գրողը լավ գիտեր 20-րդ դարասկզբի մեր ազատամարտի ավարտը, բայց «Սպիտակ Ձիաորը» դյուցազնավեպում ներկայացրեց հայոց պետականության տեսլականը, որից այնքա՛ն հեռու ենք նաև մեր օրերում:

Եզրակացություն. «Արարչութիւնը թեմամ չէ. ոճրագործ ըլլալ ճարտարապետ ըլլալէն աւելի բարձր է» (1, 154):

Հարկադրաբար գյուղը լքած ու սարերը բարձրացած հայ հողագործը դժգոհ է, որ լքելու է արորը, ու մի տոպրակ սերմացու է հետը վերցնում, իսկ հայ ծերունին խրատում է. «-Տղա՛ս, քիւրտի աչքին վրայ որ կոխես, չէ՛ չեմ ըսեր: Ցանուած արտին մէջէն անցնիլը մեղք է» (1, 473):

Սա Հավատի, Աշխատանքի ու Հույսի այն դաշտն է, առանց որի չկա Կյանք, կա պարզապես գոյություն ... ■

Հղումներ

1 Համաստեղի «Սպիտակ Ձիաորը» դյուցազնավեպի այս հրատարակությունից մեջբերումները նշվում են շարադրանքում. առաջին թիվը հատորն է, երկրորդը՝ էջը:

2 Գարեգին Նժդեհ, Բանտային գրառումներ, Երևան,1994, էջ 77:

3 Տես «Հակոբ Խաշմանյան. Մոռացված էջեր: Նամակներ» (Երևան, 2022) գրքի 358-րդ էջի 107-րդ և 496-497-րդ էջերի 32-րդ ծանոթագրությունը:

4 Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու տաս հատորով, հ. 7, Երևան, 1995, էջ 148:

5 Արամ Հայկազ, Ապրող ծառ մը (կազմող՝ Մ. Մ. Խաչատրյան), Երևան, 2012, էջ 237:

6 Նույն տեղում, էջ 240:

7 Նույն տեղում, էջ 314:

8 Յակոբ Օշական, Մնացորդաց, Գ հատոր, Անթիլիաս, 1988, էջ 301:

9 Յակոբ Օշական, Սիլէյման էֆենտի, Պէյրութ, 1985, էջ 42:

10 Սա, ըստ ավանդության, Տրդատ թագավորի՝ առասպելական և գերբնական հատկություններ ունեցող թուրն է:

Պատմության դասերին իրապես ունկնդիր լինելու հրամայականով... (հրատապ կարևորության ժողովածու)

Արմեն Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հրապարակագիր

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել «1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը հայկական մամուլում» խորագրով հոդվածների ժողովածուն:

Այն լույս է ընծայել ԵՊՀ հրատարակչությունը: Կազմել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, գրախոսներն են պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Հայրունին և պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Ներսիսյանը: Գրքի խմբագիրներն են պրոֆ. Էդիկ Մինասյանը և պ. գ. թ., դոցենտ Տիգրան Ղանալանյանը:

Գիտական հոդվածների սույն ժողովածուն ստեղծվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը 1920-1940-ական թթ. հայկական մամուլում» թեմայի շրջանակում:

Առաջաբանում պ. գ. դ., պրոֆեսոր, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ Էդ. Մինասյանը ընդգծում է, որ սույն թեմայի ուսումնասիրության կարևորությունն ու արդիականությունը բացատրվում են այդ իրադարձություններից 100 տարի անց նման դեպքերի կրկնման հանգամանքով, անցյալի ողբերգական էջերից դասեր քաղելու հրամայականով: Իսկ տվյալ ժամանակահատվածում հայկական մի շարք առանցքային պարբերականներում (Թիֆլիսի «Մշակ», Երևանի «Յառաջ», Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայն-ժամանակ», Ալեքսանդրիայի «Արև», Բոստոնի «Հայրենիք») զետեղված նյութերի ուսումնասիրությունն ու քննական անկողմնակալ վերլուծությունը միանգամայն նոր լույս են սփռում սույն հիմնահարցի հանգամանալից հետազոտության վրա: Իրավ ճշմարիտ է Էդ. Մինասյանի այն դիտարկումը, որ հայկական պարբերականներում զետեղված վիթխարի ծավալով նյութերն ու դրանց վերլուծությունները հնարավորություն են տալիս կատարելու անհրաժեշտ և օբյեկտիվ եզրահանգումներ ու եզրակացություններ՝ նաև հենց մեր օրերի իրողություններից ելնելով:

Սույն ժողովածուում ընդգրկված հոդվածների հեղինակներն են Էդ. Մինասյանը, Վ. Մենկովսկին, Մխիթար Գաբրիելյանը. Հայկ Մխոյանը, Տիգրան Ղանալանյանը: Թվով ամենաշատ հոդվածների (հինգ հետազոտություն) հեղինակ ու համահեղինակ է Էդ. Մինասյանը, որն ընդհանուր առմամբ, սույն թեմայի ղեկավարն է համարվում:

Ժողովածուում ընդգրկված հոդվածների վերնագրերն արդեն իսկ խոսուն են և որոշակիորեն բացահայտում են հետազոտության ուղղությունն ու ուղղվածությունը:

Ընդամենը ընդգրկված է ութ հոդված, որոնք ներկայացնում ենք ըստ հերթականության.

ա) «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հայկական մամուլում»,

բ) «Թուրք-հայկական սահմանային բախումների արձագանքները հայկական մամուլի էջերում»,

գ) «Մշակ» թերթը 1920 թ. քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանի վրա հարձակման նախապատրաստման մասին,

դ) «1920 թ. թուրք-հայկական պատերազմի և հայոց ցեղասպանության քեմալական ծրագրի իրականացման արձագանքները հայկական մամուլում»,

ե) «Թուրք-հայկական պատերազմի արտացոլումը «Մշակի» էջերում»,

զ) «1920 թ. թուրք-հայկական պատերազմի արձագանքները Կոստանդնուպոլսի «Ժողովրդի ձայն-ժամանակ» թերթում»,

է) «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը Ալեքսանդրիայի «Արև» օրաթերթում»,

ը) «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում»:

Էդիկ Մինասյան

Ժողովածուի հիմնական շեշտադրումները.

Ժողովածուում ընդգրկված հոդվածներում հեղինակներն առաջնորդվել են պատմականության, օբյեկտիվության, համակողմանիության սկզբունքներով: Թեմայի հետազոտությունը կատարվել է հիմնականում պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ, ինչպես նաև հոդվածների կոնտենտ անալիզի միջոցով:

Արծարծված գաղափարական հիմնական շեշտադրումները վերաբերվում են 1920 թվականի պատերազմի նախօրյակի քաղաքական իրավիճակին, Թուրքիայի կողմից Հայաստանի վրա հարձակման նախապատրաստությանը, ռուս-թուրքական համագործակցությանը, թուրքերի կողմից Հայաստանի քաղաքական մեկուսացմանը, ռազմական գործողությունների ընթացքին և ուժերի անհավասարակշռության պատճառների գնահատմանը, հայկական դառն իրականությանը և պատերազմում կրած պարտության խորքային գործոնների բացահայտմանը:

Հոդվածների հեղինակները հայ պարբերական մամուլի էջերում զետեղված վիթխարի նյութի քննական վերլուծությամբ ևս մեկ անգամ ապացուցում են այն իրողությունը, որ քեմալական Թուրքիան խնամքով նախապատրաստելով իր հարձակումը՝ նպատակադրվել էր ոչնչացնել հայոց պետականությունը և բնաջնջել Արևելյան Հայաստանի տարածքում գտնվող հայությանը: Առավել քան համոզիչ է ժողովածուում բազմիցս հնչող այն պնդումը, որ թուրքական հարձակման այդ ծանր ու տագնապալից պահին Հայաստանն ու հայ ժողովուրդը մեն-մենակ մնացին մահացու վտանգին դեմ-հանդիման: Արևմուտքի դաշնակից երկրները՝ ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան, բառացիորեն ոչնչով օգտակար ու նեցուկ չեղան հայ ժողովրդին:

Այս առումով միանգամայն բնորոշ ու բնութագրական է Երևանում լույս տեսնող «Յառաջ» օրաթերթից (17.10.1920) հետևյալ մեջբերումը. «... Մեծ ու փոքր դաշնակիցները թողել են հային, իրենց փոքրիկ դաշնակցին թշնամիների առաջ կեանքի ու մահուան պայքարի մէջ և դիւային սառնասրտութեամբ ու անտարբերութեամբ դիտում, թէ ինչպէս մենք արիւնաքամ ենք լինում, ինչպէս հայ փոքրիկ ժողովուրդը կամաց կամաց բնաջնջւում է» (էջ 19):

Ժողովածուն դիտարկում է, որ իր ժամանակակից հայկական մամուլում 1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը զբաղեցնում էր կենտրոնական ու առանցքային տեղ թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Պատերազմի նախօրյակին ու սկզբնական շրջանում մամուլի էջերում գերիշխում էր լավատեսությունը, ինչի հիմքում ընկած էին հայկական ուժերի գերագնահատումն ու միաժամանակ թշնամու ուժերի և ռեսուրսների թերագնահատումը: Սակայն հայկական կողմի ունեցած անհաջողությունները և հատկապես Կարսի անկումը սառը ցնցուղի ազդեցություն են գործում մամուլի օրգանների վրա:

Հատկապես կարևոր ու սկզբունքային է ժողովածուի էջերում արծարծված այն միտքը, որ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հայկական մամուլում ցույց է տալիս, որ հայ հասարակական-քաղաքական շրջանակներն ընթացող ռազմաքաղաքական իրադարձությունների վերաբերյալ գերազանցապես դատողություններ էին անում սեփական պատկերացումներին համապատասխան, հատկապես արդարության հաստատման անխուսափելիության, բայց ոչ սառը և լրջագույնս հաշվարկված հաշիվների վրա:

Ուրեմն, հենց դա նաև պատճառ դարձավ, որ 1920 թ. Հայաստանն ունեցավ ահռելի տարածքային ու մարդկային կորուստներ:

Ժողովածուի հեղինակները նշել են, որ վերոնշյալ պատերազմի մասին գրվել, ստեղծվել են պատմագիտական գործեր, սակայն հիմնահարցի վերաբերյալ առավել «ամբողջական պատկերացում կազմելուն լայնորեն օգնում է ժամանակի հասարակության տարբեր շերտերում տիրապետող մտայնությունների ուսումնասիրությունը, ինչն օգնում է նաև առավել լավ հասկանալ իշխանությունների կայացրած որոշումների տրամաբանությունը» (էջ -28):

Իսկ հասարակական լայն խավերի մտայնություններն ու անհանգստություններն ամենից ամբողջական արտահայտված են լինում տվյալ ժամանակի պարբերական մամուլում:

Նորից և վերստին ընթերցելով սույն արժեքավոր ժողովածուն, հանգում ես այն եզրահանգման, որ օբյեկտիվ և բարեխիղճ ձևով իրականացված ցանկացած գործ օգնում է ներկա և ապագա սերունդներին հաշվի առնել անցյալում թույլ տված սխալները, ճշմարտացի հետևություններ անել և անհրաժեշտ չափով ու մակարդակով պատասխանատվություն ստանձնել նոր կապեր և հարաբերություններ ձևավորելու գործընթացում:

Մեկ-երկու դիտարկում նկատվող թերացումների վերաբերյալ:

Որոշ կրկնություններ են նկատվում:

Առավել քիչ են ներկայացված պատերազմի ընթացքում իշխանություններին ընդդիմադիր հայ հասարակական – քաղաքական ուժերի և առանձին անհատների ունեցած դիրքորոշումներն ու տեսակետները:

Նաև առաջարկ. այս կարևոր հիմնահարցն ամբողջությամբ հետազոտելու համար հարկավոր է շարունակել աշխատանքը, ընդգրկելով տվյալ ժամանակի հայ պարբերական մամուլի մի քանի անուն ևս:

Ինքնութեան յենասիւնը՝ մշակոյթը...

Վրէժ-Արմէն
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Ինքնութեան մասին յաճախ կը խօսուի: Մշակոյթին մասին՝ նոյնպէս: Կ՚արժէ, սակայն, մտմտալ անոնց կապակցութեան ալ մասին, մանաւանդ այս օրերուն, երբ այնքան կը խօսինք ու կը խօսինք թէ՛ ինքնութեան եւ թէ՛ մշակոյթի խաթարման ու կորուստին մասին: Խաթարմա՞ն, թէ՞... զարգացմա՞ն:

Ինքնութիւն. ինչպէ՞ս սահմանել զայն, ինչպէ՞ս բանաձեւել, հասկնալ ու հասկցնել:

Ինքնութիւնը առաջին հերթին առնչուած է անունիդ-մականունիդ ու անոնցմո՛վ կ՚արտայայտուի: Ընդհանրապէս անունէդ կը գիտցուի ազգութիւնդ, իսկ ազգութիւնդ արդէն մշակութային հէնք մը ունի, ունենալով հանդերձ պատմական, աշխարհագրական խարիսխներ: Միշտ չէ, սակայն, որ անունդ իսկական հայելին ըլլայ ինքնութեանդ, քանի որ որեւէ անուն ամենայն դիւրութեամբ որեւէ ժողովուրդէ կը փոխանցուի մէկ ուրիշ ժողովուրդի՝ նոյնութեամբ կամ մանր փոփոխութիւններով, ինչպէս Սոման, որ մէկուն համար Սոնա կ՚ըլլայ, մէկ ուրիշին համար Սոնիկ կ՚ըլլայ, երրորդի մը համար՝ Սոնիա, տակաւին Սունա եւ այլն: Յաճախ դժուար է ազգային ինքնութիւնը գիտնալ: Նոյնպէս կը փոխուին մականուններ՝ երբեմն արկածով, երբեմն կամենալով, երբեմն ալ ուրիշին կողմէ պարտադրուելով, դարձեալ ծածկելով ինքնութիւնը:

Ի հարկէ ինքնութիւնդ առնչուած է նաեւ ծնողքիդ, տան դաստիարակութեանդ, կրթութեանդ ու աշխատանքիդ կամ մասնագիտութեանդ հետ: Իսկ այդ բոլորն ալ ունին մշակութային առնչութիւն մը: Երբ կ՚ըսենք այսինչը բժիշկ է, այնինչը՝ կառավար, ամեն մէկը մարդու տարբեր տեսակ մը կը կարծենք եւ յատուկ ինքնութիւն մը կ՚ենթադրենք իւրաքանչիւրին պարագային, տարբե՛ր ինքնութիւն մը:

Այո, բազմաշերտ իրողութիւն մըն է ինքնութիւնը:

Անհատ մը կը ճանչցուի նաեւ իր բնաւորութեամբ, իր ունեցած բարի եւ յոռի յատկութիւններով ու թերիներով, իր կատարած լաւ ու վատ գործերով, ընկերութեան մէջ իր վաստկած դիրքով ու համբաւով: Եւ երբ ինքնութեան պահպանման խնդիրը կը դրուի մեր առջեւ, ի հարկէ կամայ-ակամայ հարց կու տանք մենք մեզի, թէ ի վերջոյ ո՞ր ինքնութեան մասին է խօսքը:

Գալով մշակոյթին, այն ա՛լ աւելի հարուստ է տարբերակներով՝ տարբեր երեսներով, տարբեր ըմբռնումներով, շերտաւորումներով:

Ի՞նչ է մշակոյթը, ո՞ւր կը սկսի ան, ո՞ւր կը յանգի, ինչպէ՞ս իր ազդեցութիւնը կ՚ունենայ մեր վրայ եւ ձեւ կու տայ մեր ինքնութեան: Թէ՞ հակառակն է, եւ մեր ինքնութիւնն է, որ ձեւ կու տայ մեր մշակոյթին:

Բառը ինքնին հետաքրքրական է իր արմատով. չէ՞ որ մշակելը հողէն կը սկսի, հողը մշակելով: Եւ անկէ կ՚անցնի մեր բարքերուն, սովորութիւններուն, վարուելակերպին, ուրախութեան ու վիշտի արտայայտութիւններուն, իրարու հետ հաղորդակցութեան, ու կը հասնի մինչեւ Արամազդ ու մինչեւ Աստուած:

Յաճախ, երբ մշակոյթ կ՚ըսենք, նախ եւ առաջ կը հասկնանք երգ ու պար, բեմ ու պաստառ, գիր ու գրականութիւն, բայց նաեւ աւելի ու աւելի սկսած ենք հասկնալ ուտեստեղէն, մինչեւ անգամ ապրելակերպ: Այո, մեր խոհանոցն ալ մեր մշակոյթի մէկ արտայայտութիւնն է, մէկ երեսը, թերեւս ամենէն մնայուն եւ կայուն երեսը՝ առնչուած մեր առողջութեան: Այսինքն մեր կեանքին, կեանքի ապահովութեան: Սակայն չենք անդրադառնար թերեւս, որ մշակոյթի բոլոր երեսները կապուած են մեր առողջութեան, քանի մեզի մնունդ կը հայթայթեն, հոգեկա՛ն սնունդ, որ մարմնականէն աւելի ալ կարեւոր կրնայ ըլլալ:

Իսկ ի՞նչ կը նշանակէ մշակոյթ պահել, պահպանել, որուն մտասեւեռումը ունինք տեւաբար: Իրապէս կարելի՞ է մշակոյթը անխաթար պահել: Կարծէք հակասութիւն մը կայ մշակոյթ բառին, – մշակումը տեւական գործընթաց մըն է, – եւ պահել բառին միջեւ, քանի որ այս վերջինը կ՚ենթադրէ առկայ իրավիճակի մը անփոփոխութիւնը: Որմէ ալ՝ առաջին պարբերութեամբ դրած հարցումս՝ խաթարո՞ւմ, թէ՞ զարգացում: Որքա՜ն քաղաքակրթական ազդակներ՝ վայր, ժամանակ, սերունդ, շրջապատ եւ այլն, իրենց անմիջական ու անխուսափելի ազդեցութիւնը կ՚ունենան մեր վրայ՝ մեր մշակոյթին վրայ: Դիմադրե՞լ, ընդունի՞լ, համակերպի՞լ, թէ՞ օգտուիլ այդ ազդեցութիւններէն: Ահա դժուար ընտրանքներ:

Նոյնն է լեզուի պարագան: Լեզուն, որ ինքնութեան գլխաւոր արտայայտիչը կրնայ ըլլալ, եթէ անշուշտ կրելով հանդերձ բոլոր ազդեցութիւնները՝ յաջողած է շարունակել ապրիլ: Մշակուելով, վերամշակուելով ու զարգանալով: Բայց ապրած է, որովհետեւ խօսուած է, գրուած է, կարդացուած է:

Մշակոյթը յենասիւնը ինքնութեան: Թէ՞ ինքնութի՛ւնը յենասիւնը մշակոյթին: Թէ՞ բոլորովին տարբեր ձեւով դրուած՝ ինքնութիւնը համազօր է մշակոյթին, մշակոյթը՝ համազօր ինքնութեան:

Մտածենք այս մասին: Նաե՛ւ այս մասին:

ԼԷՕ
ՍԱՀՄԱՆԱՎԷՃԵՐ
(ՀԱՏՈՒԱԾ)
ՂԱՐԱԲԱՂ

Աշխարհագրական քարտէզը, պատմութիւնն իր բազմադարեան պնդումներով ապացուցում են որ առանց Ղարաբաղի լեռնաստանի անհնարին է երեւակայել Հայաստանի սրտի, այն է Արարատեան երկրի պաշտպանութիւնը հիւսիսային եւ արեւելեան տափաստաններից: Ղարաբաղն անմիջական շարունակութիւնն է այն հզօր պաշտպանողական պատուարի, որ ներկայացնում է լեռնային Գուգարքը (այժմեան Լօռին եւ յարակից գաւառները): Եւ այս է պատճառը, որ հայկական պետութեան հիմնադիրներ Արտաշէսն ու Տիգրանը Գուգարքի հետ միասին Հայաստանի սահմանների մէջ են մտցնում Ուտին, Արցախն ու Սիւնիքը:

Իբրեւ տնտեսական գործօն Ղարաբաղը միանգամայն առանձնացած եւ անջատ մի երկիր չէ, այլ ունի իր սահմաններից դուրս տարածուած մի մեծ ու ընդարձակ միջավայր, որի հետ կապուած է հարազատութեան և ներդաշնակութեան անքակտելի կապերով: Այդ հարազատ շրջանը տարածւում է նրա արեւմտեան կողմում: Այստեղ մենք տեսանք Սեւանի լիճը, նրա առջևով ընկած սահմանաբաժան շղթան: Բայց ասացինք որ այդ մի պայմանական սահմանագիծ է: Եւ իրաւ, Սեւանի լճից դէպի հիւսիս-արեւմուտք և արեւմուտք ընկած լեռնաշխարհները – Դիլիջան, Լօռի, Փամբակ՝ Ղարաբաղի բնական շարունակութիւնն են կազմում իրանց բնութեամբ, որ ամեն տեղ միատեսակ տնտեսական երեւոյթ է հաստատել: Այս բոլոր տեղերում հնարաւոր է միայն ալպիական մշակոյթը, որ եւ ստեղծում է միատեսակ տնտեսական ձեւեր, ժողովրդական աշխատանքի, ժողովրդական հոգեբանութեան միատեսակ տեղային պայմաններ:

Իսկ եթէ դէպի արեւելք նայելու լինենք, կը տեսնենք այդտեղ տափարակներ միայն, ուր միալար տիրապետում է տափարակային տնտեսութիւնը, որ ունի իր առանձին շահերը եւ այդ շահերի ստիպմամբ յաճախ հակառակ է գնում ալպիական տնտեսութիւն ունեցող ժողովուրդների շահերին, առաջացնելով նրանց մէջ ընդհարումներ: Այսպէս, ուրեմն, կուր-արաքսեան եւ մերձ-կասպիական տափաստանները միանգամայն օտար եւ խորթ տնտեսական միջավայր են Փոքր Կովկասի լեռնային տնտեսութեան համար:

Ուրեմն եւ Ղարաբաղն այս տափարակներին միացնելը կը նշանակէր կտրել նրան իր հարազատ շրջանից եւ բռնադատօրէն ենթարկել նրան օտար ու խորթ միջավայրին: Այս կը լինէր մի մեծ անարդարութիւն, որ կարող է միայն խանգարում մտցնել ժողովրդական կեանքի հիմունքների մէջ, կանգնեցնելով տնտեսական եւ մտաւոր զարգացումը շնորհիւ այն սուր շփումների, որոնք այսպիսով կ՛առաջանան աշխատանքի հակադիր կուլտուրական շահերի մէջ...

Հարուածներ, Աթէնք, 1990 թ. էջ 9-10

110 տարի առաջ, 1915 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին տեղի ունեցավ Մոսա Լեռան հերոսամարտը

ԴՐՕՇԱԿ